



Ձիաց մեր հանապազորդ

ՀՈՒԼԻՍ | ՕԳՈՍՏՈՍ | ՍԵՊՏԵՄԲԵՐ - 2022

ԼԳ ՏԱՐԻ

Գ. ԵՌԱՄՍԹԱԿ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible Class ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread գրքույկից թարգմանել ենք հաջորդ էջերի խորհրդածությունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: amaa@amaa.org, Website: www.amaa.org

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլեկտրոնային՝ amaa.armenia@amaa.am.

Քանի անգամ որ այս հացն ուտեք և այս բաժակը խմեք, Տիրոջ մահն եք պատմում, մինչև որ նա գա: (Ա.Կորնթ.11. 26)

ԵՐԿՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Երբ 1969-ի հուլիսի 20-ին «Ապոլո-11 Արժիվ» հրթիռի լուսնային հատվածը վայրէջք կատարեց Լուսնի վրա, տիեզերագնացները որոշեցին, նախքան Լուսնի մակերեսին ոտք դնելը, այդքան երկար թռիչքից հետո մի փոքր հանգստանալ: Նրանցից մեկը՝ Բազ Օլդրին, թույլտվություն էր ստացել հաղորդուլթյան համար իր հետ հաց ու գինի բերելու: Աստվածաշունչը կարգալուց հետո նա ճաշակեց Լուսնի վրա իր առաջին կերակուրը: Հետագայում նա գրել է. «Մեր եկեղեցու տված գինին ես լցրի բաժակի մեջ: Լուսնի մեկ վեցերորդ ձգողականության պատճառով գինին դանդաղ ու նրբագեղ ոլորվեց դեպի գավաթի վերին ծայրը»: Երբ Օլդրին վայելում էր երկնային հաղորդուլթյունը, նրա արարքները հռչակում էին իր հավատը Քրիստոսի՝ խաչի վրա կատարած զոհաբերության ու Նրա երկրորդ գալստյան հանդեպ: Պողոս առաքյալը հորդորում է հիշել, թե ինչպես Հիսուսը նստեց իր աշակերտների հետ «իր մատնված գիշերը» (Ա.Կորնթ. 11. 23): Քրիստոսը շուտով իր զոհաբերվելիք մարմինը համեմատեց հացի հետ (Հմ.24), իսկ գինին հայտարարեց «նոր ուխտի» խորհրդանիշ, որն ապահովելու է մեր ներումն ու փրկությունը՝ խաչի վրա թափված Իր արյան միջոցով (Հմ.25): Երբ և որտեղ էլ հաղորդություն ընդունելիս լինենք, մենք զբանով մեր վստահությունն ենք հայտնում Տեր Հիսուսի զոհաբերության իրողության և մեր հույսը Նրա խոստացած երկրորդ գալստյան հանդեպ (Հմ.26): Անկախ նրանից՝ թե որտեղ ենք, մենք կարող ենք վստահաբար հռչակել մեր հավատը միակ հարություն առած և վերադարձող Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ:

Աղոթք - Տեր Հիսուս, խնդրում եմ օգնիր ինձ, որ մինչև Քո գալը՝ համարձակորեն ապրեմ Քեզ համար: Ամեն:

Ի՞նչն է քեզ հետ դասում հաղորդություն ընդունելուց: Հի՛ի՛ր, թե մի հավասացյալ ինչդես էր Լուսնի վրա դասվում Տիրոջը:

Որից ամբողջ մարմինը՝ միասնական ու ներդաշնակ, բոլոր հոդերի օգնությամբ, յուրաքանչյուր անդամի ներգործության չափով, աճում է ինքն իրեն սիրո մեջ հաստատելու համար: (Եփ. 4.16)

ԳՈՅԱՏԵՎՈՂ ՈՒ ԲԱՐԳԱՎԱՃՈՂ

«**Քրուդերների ընտանիքը**» հայտնի մուլտֆիլմում քարանձավում ապրող ընտանիքը կարծում է, որ իրենց գոյատևելու միակ միջոցը միասին ապրելն է: Նրանք վախենում են աշխարհից և ուրիշներից, հետևաբար ապրելու համար ապահով վայր փնտրելիս վախով են լցվում, երբ իրենց ընտրած տարածքում հայտնաբերում են տարօրինակ մի ընտանիք: Սակայն շուտով սովորում են ընդունել իրենց նոր հարևանների տարբերությունները, ուժ ստանալ նրանցից և միասին գոյատևել: Նրանք հասկանում են, որ իրականում հաճելի է այդ մարդկանց ընկերակցությունը, և լիարժեք կյանքի համար իրենք ունեն ուրիշների կարիքը: Հարաբերություններ հաստատելը կարող է վտանգավոր լինել, մարդիկ կարող են վիրավորել մեզ և վիրավորում են: Դեռևս Աստված լավ պատճառով Իր ժողովրդին միավորեց մեկ մարմնի՝ եկեղեցու մեջ: Ուրիշների հետ ընկերակցելով՝ մենք աճում ենք (Եփ. 4.13), սովորում կախում ունենալ իրենից, որպեսզի օգնի մեզ՝ լինել «խոնարհ, հեզ ու համբերատար» (Հմ.2): Մենք միմյանց օգնում ենք ամբողջանալու «սիրո մեջ» (Հմ.16): Երբ հավաքվում ենք միասին, օգտագործում ենք մեր պարզեանքը, սովորում ուրիշներից, որն էլ իր հերթին գինում է մեզ, որ Աստծո հետ քայլենք ու Նրան ծառայենք:

Երբ Նա առաջնորդում է ձեզ, փնտրեցե՛ք ձեր տեղը Աստծո ժողովրդի մեջ, եթե դեռ չեք գտել: Դուք կարող եք ավելին անել, քան պարզապես գոյատևելն է: Սեր բաժանելով՝ պատիվ կբերեք Աստծուն և ավելի կնմանվեք Հիսուսին:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, սիրում եմ լինել Քո ընտանիքի մի մասը: Օգնի՛ր, որ կատարեմ իմ գործը՝ աճեմ և օգնեմ ուրիշներին, որ Քեզ ավելի լավ ճանաչեմ: Ամեն:

Ու՞մ հետ եմք ֆայլում մեր կյանքում և ինչդե՞ս կարելի է զարգացնել այդ հարաբերությունը:

Նա չի դատի ըստ իր աչքերի տեսածի, ոչ էլ պիտի որոշի ըստ իր ականջների լսածի: (Ես. 11.3)

ՃԱՆԱԶՈՒՄ Է ՍԻՐՏՍ

Մթերային խանութում, երբ հաճախորդն ավարտեց վճարումը, ես մոտեցա ավտոմատ վճարման կետին ու սկսեցի գնումներս անցկացնել հաշվիչ մեքենայով: Հանկարծ մեկը բարկացած մոտեցավ և ասաց, որ վճարման իր հերթն է: Ես չէի նկատել և անկեղծորեն ներողություն խնդրեցի: Սակայն նա չընդունեց իմ խոսքը՝ ասելով. «Ո՛չ, ներողություն խնդրող չես»:

Երբևէ եղե՞լ եք նման վիճակում, երբ ընդունել եք ձեր սխալը, փորձել շտկել իրավիճակը, բայց մերժվել եք: Լավ զգացում չէ, երբ մեզ սխալ են հասկանում: Եվ որքան մոտ է լինում մեզնից վիրավորվածը կամ մեզ վիրավորողը, այնքան ավելի ցավալի է: Որքա՞ն լավ կլիներ, եթե նրանք տեսնեին մեր սիրտը:

Եսայի մարգարեի պատկերը Եսայի 11.1-5-ում Աստծո նշանակած կառավարչի մի պատկեր է՝ կատարյալ իմաստությամբ դատաստանի համար: «Նա չի դատի ըստ իր աչքերի տեսածի, ոչ էլ պիտի որոշի ըստ իր ականջների լսածի: Այլ արդարությամբ կդատի աղքատներին և ուղղամտորեն կհանդիմանի երկրի հեզերին» (Հմ.3-4): Այս բանը կատարվեց Հիսուսի կյանքի և ծառայության մեջ: Թեև մեր մեղավորության ու թուլության մեջ միշտ չէ, որ դա ճիշտ ենք անում: Բայց մենք կարող ենք համոզված լինել, որ երկնքի ամենատես ու ամենազետ Աստվածը լիովին ճանաչում ու ճիշտ է դատում մեզ:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ ինձ լավ ես ճանաչում, գիտես խոսքերս, մտքերս ու արարքներս: Խնդրում եմ՝ ների՛ր ինձ, երբ իմ սահմանափակ լինելու պատճառով երբեմն կոպիտ եմ լինում իմ դատողություններում: Ամեն:

Երբ ուրիշները մեզ չեն հասկանում, վստահ լինենք, որ Աստված հասկանում ու ճանաչում է մեր սիրքը:

Ոչ ոք ավելի մեծ սեր չունի, քան նա, ով իր կյանքն է տալիս իր բարեկամների համար: (Յոն. 15.13)

ԶԿԱ ԱՎԵԼԻ ՄԵԾ ՍԵՐ

2019-ին Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ D-Day անունով հայտնի օպերացիայի 75-ամյակի առիթով հարգանքի տուրք մատուցվեց ավելի քան 150 հազար զինվորների հիշատակին, որոնք մասնակցել են Արևմտյան Եվրոպան ազատագրելու գործողությունը: 1944թ. հունիսի 6-ին ռադիոյով սփռված իր ազդեցուն նախագահ Ռուզվելտը Աստծո պաշտպանությունն էր խնդրում՝ ասելով.«Նրանք պայքարում են ոչ թե նվաճելու, այլ նվաճումներին վերջ տալու համար: Նրանք պայքարում են ազատագրելու համար»:

Չարը զսպելու, ճնշվածներին ազատագրելու համար սեփական անձը վնասելու պատրաստակամությունը մեզ հիշեցնում է Հիսուսի խոսքերը. «Ոչ ոք ավելի մեծ սեր չունի, քան նա, ով իր կյանքն է տալիս իր բարեկամների համար» (Հովհ. 15.13): Հիսուսն այս խոսքերն ասում է, երբ Իրեն հետևողներին սովորեցնում էր սիրել միմյանց: Նա ուզում էր, որ նրանք հասկանային այդ տեսակի սիրո արժեքն ու խորությունը, երբ մեկը պատրաստակամորեն իր կյանքը զոհաբերում է մեկ ուրիշի համար: Զոհաբերությունը «ուրիշներին սիրելու» կոչը Աստծո պատվիրանների հիմքն է (Հմ. 17):

Մենք անձնուրաց սեր կարող ենք դրսևորել՝ ժամանակ տրամադրելով ընտանիքի տարեց անդամի կարիքների համար: Կարող ենք մեր հարազատի կարիքները դարձնել առաջնային և օգնել նրանց: Երբ անձնազոհաբար ենք սիրում ուրիշներին, սիրո ամենամեծ արտահայտությունն ենք ցուցաբերում:

Աղոթք - Հայր, խնդրում եմ, օգնիր ինձ ամեն օր փնտրել զոհաբերությամբ այլոց սիրելու ուղին: Ամեն:

Որդես Հիսուսի հետևորդներ՝ անձնուրաց սեր դրսևորելու կոչ ունենա: Պատճառներս ենք դրան:

Տերն է տալիս իմաստությունը, նրա բերանից են գիտությունն ու խոհեմությունը: (Առ. 2.6)

ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

1 373-ին երեսնամյա Ջուլիան Նորիջցին ծանր հիվանդացավ ու գրեթե մահվան եզրին էր: Երբ նրա հովիվն աղոթեց իր հետ, նրա աչքին սկսեցին տեսիլքներ երևալ, որոնց մեջ տեսավ նաև Հիսուսի խաչելությունը: Հրաշքով վերագտնելով առողջությունը՝ նա կյանքի հաջորդ քսան տարին անցկացրեց միայնակ՝ եկեղեցու կողքի սենյակներից մեկում աղոթելով ու իր փորձառություն մասին խորհրդածելով: Եվ եզրակացրեց, որ Քրիստոսի զոհաբերությունը Աստծո սիրո գերագույն դրսևորումն է: Ջուլիանի «Աստվածային սիրո հայտնությունները» ուշագրավ փաստաթղթեր են, բայց մարդիկ հաճախ անտեսում են, որ նա ժամանակ ու ջանքեր է տրամադրել և աղոթքով հասկացել, թե Աստված ինչ է հայտնել իրեն: Այդ երկու տասնամյակում նա փորձում էր հասկանալ, թե ինչ էր նշանակում Նրա ներկայությունն այդ փորձառությունը, երբ Աստծուց խնդրում էր իմաստնություն և օգնություն:

Ինչպես Ջուլիանի պարագայում, Աստված Իր ողորմությամբ ինքն իրեն բացահայտում է Իր ժողովրդին: Նույնը անում է նաև Աստվածաշնչի խոսքերով՝ Իր հանդարտ, մեղմ ձայնով, օրհներգի կրկներգի միջոցով կամ պարզապես Իր ներկայության գիտակցումով: Երբ դա տեղի է ունենում, մենք արդեն կարող ենք փնտրել Իր իմաստությունն ու օգնությունը: Այդ իմաստությունն այն է, ինչ Սողոմոն թագավորը պատվիրեց իր որդուն.«Ականջ դնես իմաստությանը և սիրտդ խոհեմությանն ուղղես» (Առ. 2.2): Այնուհետև նա «կգտնի Աստծո գիտությունը» (Հմ.5): Ավելի խորանալով Նրա նկարագրի ուղիների մեջ՝ մենք կարող ենք ավելի հարգել ու հասկանալ Նրան:

Աղոթք - Ողորմած Աստված, խնդրում եմ օգնիր ինձ, որ աճեմ Քո իմաստության մեջ: Ամեն:

Ասված Իր մասին հայցնում է արբեր ձևերով: Դա կարելի է հասկանալ ավելի շատ ժամանակ տրամադրելով աղոթքին:

(Պողոսը և Բառնաբասը) վերադարձան Լյուստրա, Իկոնիոն ու Անտիոք: Նրանք, աշակերտների սրտերն ամրացնելով, խնդրում էին, որ շարունակեն հավատի մեջ հաստատուն մնալ: (Գործք 14. 21-22)

ԴՌՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ԱՆԵԼ

Խրախուսանքը նման է թթվածնի, առանց դրա չենք կարող ապրել: Դա զգաց նաև ինը տարեկան Ջեյմս Սեյվեջը, որ մասնակցում էր լողի մրցումների: Ավելի քան երկու մղոն՝ Սան Ֆրանցիսկոյի ափերից մինչև Ալկատրազ կղզի և հետ լողալուց հետո նա հաղթող դարձավ իր տարիքային խմբում: Բայց դա հեշտ չտրվեց տղային: Երեսուն ռոպե լողալուց հետո սառը ջրերը տղային ստիպեցին տեղի տալ: Քիչ էր մնում հանձնվեր, սակայն թիավարողները խմբի «Դու կարող ես անել» բացականչությունները նրան ուժ ներշնչեցին, որն անհրաժեշտ էր իր նպատակին հասնելու համար: Երբ դժբախտություն սառը ջրերը Հիսուսի հետևորդներին ստիպեցին տեղի տալ, Պողոսն ու Բառնաբասը նրանց խրախուսեցին շարունակել իրենց ընթացքը: Դերբե քաղաքում ավետարանը քարոզելուց հետո նրանք «վերադարձան Լյուստրա, Իկոնիոն ու Անտիոք: Աշակերտների սրտերն ամրացնելով, խնդրում էին, որ շարունակեն հավատի մեջ հաստատուն մնալ» (Գործք 14. 21-22): Նրանք օգնեցին հավատացյալներին՝ հաստատակամ մնալ Հիսուսի հանդեպ իրենց հավատի մեջ: Խնդիրները թուլացրել էին նրանց, բայց քաջալերիչ խոսքերը զորացրին Քրիստոսի համար ապրելու իրենց վճռականությունը: Աստծո զորությունը նրանք հասկացան, որ կարող են շարունակել իրենց հավատի պայքարը: Ի վերջո Պողոսն ու Բառնաբասը նրանց օգնեցին հասկանալ, որ «բազում նեղությունների միջով պետք է մտնեն Աստծո արքայություն» (Հմ. 22): Հիսուսի համար ապրելը կարող է դժվար լինել, ինչի պատճառով հաճախ փորձում ենք տեղի տալ: Սակայն բարեբախտաբար, Հիսուսը և հավատակից քույրերն ու եղբայրները կարող են մեզ խրախուսել ու քաջալերել, որ շարունակենք:

Աղոթք - Հիսու՛ս, երբ փորձում եմ հանձնվել ու տեղի տալ, ինձ վստահություն ու քաջություն տուր՝ իմ ընթացքը Քե՛զ հետ շարունակելու համար: Ամեն:

Իրենց ընթացքը շարունակելու դժվարության մեջ եղողներին մենք էլ կարող ենք ասել. «Դու կարող ես անել»:

Սպասիր Տիրոջը. թող սիրտդ պինդ և զորավոր լինի, և սպասիր Տիրոջը: (Սաղմ. 27.14)

ՇՏԱՊԻՐ ԵՎ ՍՊԱՍԻՐ

1 930թ. տնտեսագետ Ջոն Մեյնարդ Քեյնսի արձակ գրվածքի գլխավոր միտքն այն էր, թե ինչպես պետք է տնօրինել ազատ ժամանակը: Նա ենթադրում էր, որ հարյուրավոր տարիների տնտեսական առաջընթացն ու զարգացումը կհանգեցնի մի կետի, երբ մենք կաշխատենք օրական ընդամենը երեք և շաբաթական՝ 15 ժամ:

90 տարուց ավելի է անցել այդ հրապարակումից, սակայն զարգացումը ավելի շատ ազատ ժամանակ ստեղծելու փոխարեն՝ մեզ դարձրել է առավել զբաղված: Մեր օրերը հագեցած են: Թեև ամենօրյա գործերը՝ ճամփորդությունն ու ճաշ պատրաստելը ավելի քիչ ժամանակ են խլում, բայց մենք էլի շտապում ենք:

Դավթի կյանքից մի ապշեցուցիչ դեպք ցույց է տալիս, թե ինչպես կարելի է կյանքի աճապարանքի մեջ հաստատակամ մնալ: Երբ Դավիթը փախչում էր իրեն սպանել ուզող Սավուղ թագավորից, Մովաբի թագավորին ասաց. «Աղաչում եմ, թող իմ հայրն ու մայրը գան ձեզ մոտ, մինչև տեսնեմ, թե Աստված ինձ ինչ պիտի անի» (Ա.Թագ. 22.3): Դավիթը շատ էր զբաղված. նա փորձում էր փախչել Սավուղի հետապնդումներից և միաժամանակ ապահովել իր ընտանիքը: Բայց նույնիսկ այդ պահին նա ժամանակ հատկացրեց Աստծուն դիմելու համար:

Երբ կյանքի կատաղի հոսանքները մեզ տանում են, մենք կարող ենք վստահել Աստծուն, և նա մեզ կպահի Իր խաղաղության մեջ (Ես. 26.3): Հարցը լավագույնս ամփոփված է Դավթի խոսքում.«Սպասիր՝ Տիրոջը. թող սիրտդ պինդ և զորավոր լինի, և սպասիր՝ Տիրոջը» (Սաղմ. 27.14):

Աղոթք - Սիրելի՛ Հայր, Դու ես իմ հանդարտությունը շտապելուս մեջ անգամ: Շնորհակալ եմ, որ Քո խաղաղությունն ես տալիս ինձ, երբ ես շարունակում եմ վստահել Քեզ: Ամեն:

Մեր կյանքի բազմազբաղ ու սազնադալի դաշտերին կարելի է Աստծուն աղափինել ու վստահել:

Ապա հացը վերցնելով՝ գոհությամբ հայտնեց, կտրեց ու նրանց տվեց: (Պուկ. 22. 19)

ՔԵՁ ՍԻՐՈՂ ԾԱՇԸ

Ներկա էի ընտանեկան մի հավաքույթի՝ ծննդյան տարե- դարձի, որի ժամանակ տանտիրուհին հոբելյարի «սիրելի բաները» աշխատել էր կատարել տան զարգարանքի, նվերների և ամենից ավելի՝ ճաշի մեջ: Պատրաստել էր դասեր սիրած սթեյքն ու աղցանը, իսկ սպիտակ շոկոլադով ու արքայամորի- ով կարկանդակը պատվիրել էր: Որովհետև սիրած ճաշերն ասում են. «Ես սիրում եմ քեզ»:

Աստվածաշնչում խնջույքների, տոների ու հրավերքների բազմաթիվ նկարագրություններ կան, որոնցում ուտելու ֆի-զիկական գործողությունը զուգակցվում է Աստծո հավատար-մության տոնակատարության հետ: Խնջույքը Իսրայելի ժո-ղովրդի պաշտամունքի զոհաբերության համակարգի մի մասն էր (տե՛ս Թվեր 28. 11-31), որ կատարվում էր Զատկի, Շաբաթ- ների և ամենամայա Նորալուսնի տոներին: Սաղմոս 23. 5-ում Աստված ձոխ սեղան է պատրաստում, և գավաթները լցվում են ողորմությամբ ու սիրով: Թերևս ուտելիքի և գինու ամե- նահատկանշական զուգակցումն այն է, երբ Հիսուսը կտրում է մի կտոր հաց, վերցնում մի գավաթ գինի՝ ցույց տալու հանուն մեր փրկության՝ խաչի վրա Իր մահվան պարգևը: Ապա Նա կո-չում է մեզ. «Այս արե՛ք ի հիշատակ ինձ» (Պուկ. 22.19):

Երբ ճաշում ես, մի պահ մտածի՛ր Աստծո մասին, որ ստեղծել է բերանն ու ստամոքսը և որպես Իր սիրո ու հավատարմու-թյան նշան՝ քեզ առաջարկում է սնունդ: Մեր Աստվածը խն-ջույք է անում հավատացյալների հետ և զուգակցելով Իր կա-տարյալ նախատեսությունը մեր մեծ կարիքի հետ՝ ասում է. «Ես սիրում եմ քեզ»:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ այն ամենի համար, ինչ Դու հավատարմորեն կատարում ես՝ ներառյալ նաև իմ ամեն օրվա հացն ու փրկությունը: Ամեն:

Վստահաբար, ունեն՛ք նախասիրած ուժեղիքներ, բայց կարևոր է շնորհակալություն հասնել մեր վայելած սնունդի համար:

Շատերս մեկ մարմին ենք Քրիստոսի մեջ, բայց ամեն մեկս միմյանց անդամ ենք (Գոմ. 12.5):

ԵՐԱԶԱՆՔԻ ԽՈՒՄԲԸ

Ընկերներ Մելանին ու Տրեվերը միասին կիրամետրերով լեռնային արահետներ են անցել: Բայց այդ բանը չեն կարող անել միայնակ, որովհետև Մելանին ողնաշարի հիվանդություն պատճառով հաշմանդամի սայլակով է տեղաշարժվում, իսկ Տրեվերը տեսողությունն է կորցրել: Զույգը, հասկանալով, որ իրենք կատարելապես կարող են լրացնել միմյանց, որոշեց անցնել Կոլորադոյի անապատով: Մելանին բերանացի խորհուրդներ էր տալիս, և նրանք միասին քայլում էին՝ որպես «երազանքի խումբ»:

Պողոս առաքյալը հավատացյալներին որպես «երազանքի խումբ» է ներկայացնում Քրիստոսի մարմինը: Նա հռոմեացիներին հորդորում է հասկանալ, թե ինչպես են իրենց անհատական պարզեները օգտակար դարձել մեծ խմբի համար: Ծիշտ այնպես, ինչպես մեր Ֆիզիկական մարմիններն են կազմված բազմաթիվ մասերից, որոնցից յուրաքանչյուրն ունի տարբեր գործառնություններ, մենք էլ միասին «մեկ մարմին ենք Քրիստոսի մեջ» (Հռոմ.12.5) ու մեր պարզեները նախատեսված են ծառայելու եկեղեցու ընդհանուր շահի համար: Պողոսը մեզ խորհուրդ է տալիս մեր պարզեները (ուսուցանել, խրախուսել և այլն) դիտարկել իբրև մյուսներին պատկանող (Հմ. 5-8): Մելանին ու Տրեվերը չեն կենտրոնանում իրենց պակասությունների վրա, ոչ էլ հպարտանում են իրենց ունեցածով: Նրանք իրենց ունեցած «պարզեներից» ուրախությամբ տալիս են ուրիշներին՝ դիտակցելով, թե որքան լավ են իրենք այդ համագործակցությամբ:

Աղոթք - Հայր Աստված, խնդրում եմ ցույց տուր, թե ինչպես կարող եմ օգտագործել իմ կարողությունները՝ Քրիստոսի մարմնին օգտակար դառնալու համար: Ամեն:

Ասված շնորհներ ու դարձներ է սվել, որոնք կարող ենի կիսել ուրիշներին հետ:

Ողորմություն ու գթություն արեք, ամեն մեկդ ձեր եղբորը: (Ձաք. 7.9)

ՄԻՄՅԱՆՑ ՀԱՆԴԵՊ ՈՒՇԱԴԻՐ ԼԻՆԵԼ

Յոթանասուլթամյա ուսուցիչ ժողեն ապրում էր իր մեքենայում: Ամեն երեկո տարեց տղամարդը, մտնելով իր Ford Thunderbird LX մեքենան, ուշադիր նայում էր դրա էլեկտրական մարտկոցին, այնուհետև միացնում համակարգիչը՝ երեկոյան աշխատանքի համար: Տան վարձի գումարը նա ուղարկում էր Մեքսիկայում ապրող իր բազմանդամ ընտանիքին, որն ունի դրա կարիքը: Ամեն առավոտ այդ մարդու նախկին աշակերտներից մեկը տեսնում էր, որ ժողեն իր ավտոմեքենայի բեռնախցիկում ինչ-որ բան է որոնում: Նա որոշեց օգնել իր ուսուցչին և հանգանակություն կազմակերպեց: Շաբաթներ անց նա մի դրամատոմս հանձնեց ժողեին, որպեսզի վերջինը կարողանա բնակարան վարձել:

Թեև Աստվածաշունչը բազմիցս հորդորում է, որ ուշադիր լինենք միմյանց հանդեպ, բայց երբեմն դժվար է լինում տեսնել մեր մտահոգությունները: Զաքարիա մարգարեն հանդիմանեց Իսրայելին, որ փոխանակ Աստծոն պաշտելու կամ այլոց ծառայելու՝ «իրենց համար ուտում ու խմում էին» (Ձաք. 7.6): Անտեսելով հասարակական կյանքը՝ նրանք արհամարհում էին իրենց հարևանների կարիքները: Զաքարիան նրանց փոխանցեց Աստծո ցուցմունքները՝ հայտարարելով. «Արդար դատաստան արե՛ք և ողորմություն ու գթություն՝ արեք, ամեն մեկդ ձեր եղբորը: Մի՛ հարստահարեք այրուն ու որբին, օտարականին ու աղքատին» (Ձաք. 7. 9-10): Աստվածային տնտեսության մեջ բոլորի համար շատ բան կա: Եվ Աստված Իր ողորմությամբ ընտրում է մեզ՝ այդ առատության մի մասը ուրիշներին տալու համար:

Աղոթք - Հայր, խնդրում եմ՝ ինձ տո՛ւր ավելի լայն հնարավորություն, որ հոգ տանեմ իմ հարևանների մասին:
Ամեն:

Մեր շուրջը մի՛ս էլ կլինեն մեր հոգաւարության կարիքն ունեցող մարդիկ: Ուսի, Տիրոջ դասվիրանի համաձայն, օգնության ձեռք մեկնենք նրանց:

Ոչ ոք թող միայն իր օգուտը չորոնի, այլ նաև ընկերոջինը: (Ա. Կորնթ. 10.24)

ՔՆՄԱՐԻՏ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Գնացքում կարգալիս Մեյլինգն ընդգծում էր նախադասու- թյունները և նշումներ անում լուսանցքում: Բայց իր մոտ նստած մոր ու երեխայի գրույցը կանգնեցրեց նրան: Մայրը երեխային բացատրում էր, որ չի կարելի գրադարանից վերց- րած գրքում գրել կամ նշումներ անել: Մեյլինգն անմիջապես ցած գրեց գրիչը, չուզեցնալով, որ փոքրիկն անտեսի մոր ասած- ները: Նա գիտեր, որ երեխան չի հասկանալու գրադարանից վերցված գիրքը վնասելու և իրեն պատկանող գրքում գրա- ուումներ անելու տարբերությունը:

Մեյլինգի գործողություններն ինձ հիշեցրին Պողոս առաքյա- լի խոսքերը Ա.Կորնթ. 10. 23-24-ում: «Ինձ ամեն բան թույ- լատրված է, բայց ամեն բան օգտակար չէ, ինձ ամեն բան թույ- լատրված է, բայց ամեն բան չի ամրացնում: Ոչ ոք թող միայն իր օգուտը չորոնի, այլ նաև ընկերոջինը»:

Կորնթոսի երիտասարդ եկեղեցում Հիսուսին հավատացող- ներն իրենց ազատությունը Քրիստոսի մեջ էին տեսնում՝ որ- պես անձնական շահեր հետապնդելու հնարավորություն: Բայց Պողոսը գրեց, որ նրանք պետք է դա համարեն ուրիշների հա- մար օգուտներ քաղելու և շենացնելու հնարավորություն: Նա սովորեցրեց, որ իսկական ազատությունը ոչ թե մարդու ուզա- ծի պես անելն է, այլ Աստծո համար պետք եղածն անելը:

Հետևելով Հիսուսին՝ մեր ազատությունն օգտագործում ենք ուրիշներին օգնելու համար՝ փոխանակ ինքներս մեզ ծառայե- լու:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, շնորհակալ եմ, որ ազատում ես ինձ:

Տու՛ր ինձ իմաստնություն և շնորհք՝ ազատությունս գործադրելու այնպես, որ կարողանամ Քեզ պատվել և ուրիշներին օգնել: Ամեն:

Զգույ՛ց լինենք, թե ինչ ենք ասում ու անում ուրիշներին՝ գործադրելով մեր ազատությունը:

Իմաստունը թող լսի և ավելացնի հմտությունը, իսկ ողջամիտը առաջնորդություն ստանա: (Առ.1.5)

ՈՒՍՈՒՑԱՆԵԼԻ ՀՈԳԻ

Դժբախտաբար, սովորական է դարձել հարձակվել ոչ միայն ուրիշների կարծիքի, այլև այդ կարծիքն արտահայտողի վրա: Ասվածը վերաբերում է նաև ակադեմիական շրջանակներին: Ինձ համար շատ զարմանալի էր, երբ աստվածաբան Ռիչարդ Բ.Հեյսն առաջարկեց մի թեզ, որը պատճառ դարձավ ստանձնելու պարտականություն, որի մասին ինքը գրել էր տարիներ առաջ: «Ընթերցանություն Սուրբ Գրքի հատիկի հետ» գրքում Հեյսը, դրսևորելով խոնարհություն, ուղղում էր անցյալի իր մտածողությունը, որը ճշտվել էր ողջ կյանքում իր նվիրումի և սովորելու շնորհիվ:

Երբ ներկայացնում էր Առակների գիրքը, Սողոմոն թագավորը ցույց տվեց իմաստուն այդ հավաքածուի տարբեր նպատակները: Բայց դրանց մեջ նա մտքրեց այս մարտահրավերը.«Իմաստունը թող լսի և ավելացնի հմտությունը, իսկ ողջամիտը առաջնորդություն ստանա» (Առ.1.5): Պողոս առաքյալի նման, որ նույնիսկ տասնամյակներ շարունակ Քրիստոսին հետևելուց հետո հայտարարում էր, թե ինքը շարունակում է ճանաչել Տեր Հիսուսին (Փիլ. 3.10), Սողոմոնն էլ իմաստուններին հորդորում է լսել, սովորել և շարունակել աճել:

Սովորելու ցանկությունը վերավորական է: Երբ ձգտում ենք աճել և սովորել հավատի (նաև կյանքի) երևույթները, թույլ տանք, որ Սուրբ Հոգին մեզ առաջնորդի դեպի ճշմարտություն (Հովհ. 16.13), որպեսզի ավելի լավ ըմբռնենք մեր բարի ու մեծ Աստծո հրաշալիքները:

Աղոթք - Սիրող Աստված, տու՛ր ինձ խոնարհ սովորողի հոգի, որ կարողանամ շարունակաբար աճել՝ Հիսուսի շնորհքով ու գիտությամբ: Ամեն:

Եթե կյանքի հոգևոր աճի մեջ թերացել եմ, խնդրեմ Աստուծոց, որ մեզ դարձնի սովորելու ցանկություն:



Մարդիկ իմ մասին ի՞նչ են ասում. ո՞վ եմ ես: (Մարկ.8.27)

Ո՞Վ Է ՀԻՍՈՒՍԸ

Ո՞վ է Հիսուսը մարդկանց համար: Ոմանց համար նա լավ ուսուցիչ է ու պարզապես լավ մարդ: Գ.Ս. Լուիսը «Միայն քրիստոնեություն» գրքում գրել է. «Այս մարդը կամ եղել է ու է Աստծո Որդի, կամ մի խելագար է, կամ ավելի վատ մեկը: Կարող ենք նրան որպես հիմար դիտարկել, արհամարհել ու սպանել՝ որպես չար ոգի, կամ կարող ենք ընկնել նրա ոտքերի առաջ ու անվանել Տեր, Աստված: Բայց եկե՛ք չանտեսենք նրա՝ մարդկային մեծ ուսուցիչ լինելու հանգամանքը»: Այս խոսքերը հուշում են, որ Հիսուսը չէր կարող մեծ մարգարե լինել, եթե կեղծ հայտարարվեր, թե նա Աստված է: Սա պետք է լինի վերջնական կարծիք:

Իր աշակերտների հետ խոսելիս, երբ անցնում էին գյուղերով, Հիսուսը հարցրեց. «Մարդիկ իմ մասին ի՞նչ են ասում. ո՞վ եմ ես» (Մարկ.8.27): Պատասխաններում հնչում են Հովհ. Մկրտչի, Եղիայի և մարգարեներից մեկի անունները (Հմ.28), բայց Հիսուսն ուզում էր իմանալ իրե՛նց կարծիքը: Եվ Պետրոսը պատասխանեց. «Դու Քրիստոսն ես» (Հմ.29), Փրկիչը:

Իսկ մե՞նք ինչ ենք ասում: Ո՞վ է Հիսուսը: Հիսուսը չէր կարող լավ ուսուցիչ ու մարգարե լինել, եթե նրա մասին ասվածը, թե ինքն ու Հայրը (Աստված) մեկ են, ճիշտ չլիներ: Նրան հետևողները և նույնիսկ դեերը հայտարարեցին նրա աստվածությունը՝ որպես Աստծո Որդի (Մատթ. 8, 29,16, Ա. Հովհ. 5.20):

Այսօր թող որ մենք տարածենք Հիսուսի՝ ով լինելու մասին հայտարարությունը, քանի որ նա է տալիս մեզ պետք եղածը:

Աղոթք - Սիրելի՛ Հիսուս, շնորհակալ եմ, որ Դու ես ճանապարհը, ճշմարտությունն ու կյանքը: Ուրախ եմ, որ կարող եմ ապավինել Քեզ: Օգնի՛ր, որ կարողանամ ուրիշներին հայտնել Քո մասին բարի լուրը: Ամեն:

Ո՞վ է մեզ համար Հիսուսը: Եթե հավատում եմք, որ նա Աստծո Որդին է, այդ մասին հայտնենք ուրիշներին:

Հանդարտ մնացե՛ք և ճանաչե՛ք, որ ես եմ Աստվածը: (Սաղմ. 46.10)

ՇԱՐԺԵԼ ՀԱՎԱՏՔԻ ՄԿԱՆՆԵՐԸ

Կենդանաբանական այգու՞մ զբոսնելիս հանգստանալու համար կանգ առա «ծուլլի» մոտ: Կենդանին գլուխը կախել էր ու գոհ էր այդ վիճակից: Հառաչեցի, որովհետև առողջական խնդիրների պատճառով ես պայքարում էի դանդաղուձյան դեմ, ուզում էի առաջ շարժվել, ինչ-որ բան անել, ազատվել թուլուձյան զգացումից: Բայց նայելով «ծուլլ» կենդանուն, նկատեցի, թե ինչպես ձգեց մի թևը, բռնեց մոտակա ճյուղն ու էլի անշարժացավ: Հանգիստ մնալու համար ուժ է հարկավոր: Եթե ես բավարարվեի այս արարածի նման դանդաղ շարժվելով, մկանային ուժից ավելին պետք է գործադրեի: Կյանքիս ձգձգվող պահերին Աստծուն վստահելու համար ինձ գերբնական ուժ էր պետք:

46-րդ սաղմոսում հեղինակը հայտարարում է, որ Աստված ոչ միայն մեզ ուժ է տալիս, այլև հենց ինքն է մեր ուժը (Հմ.1): Անկախ մեր շուրջը կատարվողից՝ «գորուձյունների տերը մեզ հետ է» (Հմ.7): Սաղմոսերգուն համոզված կրկնում է այս ճշմարտությունը (Հմ.11): Ինչպես ծուլուձյունը, այդպես էլ մեր ամենօրյա գործողությունները հաճախ պահանջում են դանդաղ քայլեր ու անհնարին թվացող անշարժության երկարատև ժամանակահատվածներ: Ապավինելով Աստծո անփոփոխ բնավորությանը՝ կարող ենք նաև վստահել Նրա գորուձյանը՝ անկախ նրանից, թե Նա ինչ ծրագիր ու արագություն է որոշում մեզ համար: Մենք կարող ենք շարունակել նեղուձյունների դեմ պայքարել, Աստված հավատարմորեն ներկա է լինում: Նույնիսկ երբ մենք ուժեղ չենք լինում, նա օգնում է շարժել մեր հավատի մկանները:

Աղոթք - Ամենակարող Աստված, շնորհակալ եմ, որ ինձ հնարավորություն ես տվել շարժել հավատիս մկանները՝ վստահելով Քեզ որպես իմ ուժի աղբյուր: Ամեն:

Նեղության, ցավի, դժվարության ու սազմադի ժամանակ, երբ թույլ ու անզոր եմ գգում, աղավիհեմ Ասծուն ու Նրա գորությանը:

Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին, և կփրկվեք դու և քո ընտանիքը: (Գործք. 16.31)

ԱՄԲՈՂՁ ՏՈՒՆԸ

Գ ծավոր արտահայտություն է հազին՝ Ջեյման անցավ բանտի մարզադահլի մի կողմից մյուսը, բարձրացավ ու մտավ շարժական լողավազանը, որի մեջ մկրտվել էր բանտի հոգևոր հովվի ձեռամբ: Ջեյմանի ուրախությունը կրկնապատկվեց, երբ իմացավ, որ իր դուստր Բրիթնին, որ նույնպես բանտարկյալ է, մկրտվել է նույն օրը և նույն ջրում: Երբ պարզվեց՝ ինչ է տեղի ունեցել, նույնիսկ բանտի անձնակազմը հուզվեց, բոլորն արտասովում էին: Տարիներ շարունակ բանտում, թե բանտից դուրս Բրիթնին ու հայրը ուզում էին ստանալ Աստծո ներումը: Եվ Աստված նրանց նոր կյանք տվեց:

Աստվածաշունչը նկարագրում է բանտային մեկ այլ դեպք, որ պատահել էր բանտապահի հետ, երբ Տեր Հիսուսի սերը փոխել էր մի ամբողջ ընտանիք: Երբ «հզոր երկրաշարժից բանտը ցնցվեց, Պողոսն ու Շիղան մնացին իրենց տեղում» (Գործք. 16. 26-28): Բանտապահը, շնորհակալ լինելով, որ նրանք չեն փախել, նրանց տարավ իր տուն և հարցրեց. «Ես ի՞նչ պետք է անեմ, որ փրկվեմ» (Հմ.30): Նրանք ասացին. «Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին, և կփրկվեք դու և քո ընտանիքը» (Հմ.31): Տրված պատասխանը բացահայտում է իր ողորմությունը ոչ միայն անհատներին, այլև ամբողջ ընտանիքի վրա տարածելու Աստծո ցանկությունը: Հանդիպելով Աստծո սիրուն՝ նրանք բոլորը՝ բանտապահն ու իր ընտանիքը հավատացին Աստծուն (Հմ.34): Մենք ավելի հաճախ ցանկանում ենք նրանց փրկությունը, ում սիրում ենք, բայց կարող ենք վստահ լինել, որ Աստված մեզնից ավելի է սիրում նրանց: Նա ուզում է բարեփոխել մեզ բոլորիս և մեր ամբողջ տունը:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, խնդրում եմ հայտնվիր իմ ողջ ընտանիքին: Ամեն:

Աստված օգնության ձեռք է մեկնում ամբողջ ընտանիքին: Ուսի վստահեմք նրա սլած ողորմությանը:

Եթե ամբողջ ունեցվածքս աղքատներին բաժանեմ..., բայց սեր չունենամ, ես ոչ մի օգուտ չեմ ունենա: (Ա.Կորնթ. 13.3)

ԱՌԱՆՅ ՍԻՐՈ ՕԳՈՒՏ ՉԿԱ

Պատվիրաձս սեղանը ստացել էի և տուփից Հանելով՝ սկսեցի դասավորել: Հանկարծ նկատեցի, որ սեղանի ոտքերից մեկը չկա: Ասել է, թե այն չի ծառայելու իր նպատակին:

Միայն սեղանները չէ, որ կարևոր մի մասի պակասի պատճառով անպետք են դառնում: Կորնթացիներին ուղղված առաջին նամակում Պողոսն իր ընթերցողներին հիշեցնում է, որ նրանց պակասում է շատ կարևոր մի բաղադրիչ: Հավատացյալներն ունեին Հոգևոր շատ պարգևներ, բայց նրանց մոտ պակասում էր սերը:

Իր տեսակետը շեշտելու համար օգտագործելով պերճախոս բառեր ու արտահայտություններ՝ Պողոսը գրում է, որ իր ընթերցողները եթե նույնիսկ ունենան ամեն գիտելիք ու բաժանեն իրենց ամբողջ ունեցածը, պատրաստակամ լինեն դժվարություններ կրելու և տանջվելու, առանց սիրո՝ նրանց արածները չեն ունենալու որևէ արժեք (Ա.Կորնթ. 13.1-3): Առաքյալը խրախուսում է նրանց, ովքեր իրենց բոլոր արարքներում սեր են ներառում և նկարագրում է այն՝ որպես Հանդուրժող, բարի, վստահող, աննախանձ, ոչ մեծամիտ ու համբերող զգացում (Հմ. 4-7):

Ուսուցանելիս, քաջալերելիս կամ մեր հավատի ընտանիքին ծառայելիս օգտագործելով մեր Հոգևոր պարգևները՝ հիշենք, որ Աստված միշտ սիրելու կոչ է անում: Հակառակ պարագայում մեր գործողությունները նման կլինեն ոտք չունեցող սեղանին և չեն հասնի իրենց բուն նպատակին:

Աղոթք - Երկնավոր Հայր, ես հիանում եմ, որ Դու ամեն բան սիրով ես անում: Օգնիր ինձ, որ սովորեմ Քեզ նման սիրել: Ամեն:

Եթե նկատես, որ սերը բացակայում է քո կյանքից, Ասծուց խնդրի՛ր, որ Իր սերը դարձնի քեզ:

Նա գիտե՞ք երբքը այս մեծ անապատում... դու ոչ մի բանի պակասություն չես զգացել: (Բ.Օր. 2.7)

ԱՍՏԾՈ ԳԾԱԾ ՈՒՂԻՈՎ

Պատկերացրո՛ւ, որ ճամփորդություն են սկսում Միացյալ Նահանգների հարավարևմտյան փոշոտ Արիզոնայի «Ինչու» (*Why*) կոչված քաղաքից և գնում դեպի Տեխաս: Այդ ճանապարհին կանցնես «Անորոշ» (*Uncertain*) անունը կրող բնակավայր, կհասնես թեննեսիի «Տխրատեսիլ» կամ «Աղետալի» (*Dismal*) կոչվող քաղաք և վերջապես կհասնես նպատակակետիդ՝ Փենսիլվանիայի «Խուճապ» (*Panic*) քաղաք: Այս բոլոր թվարկվածները ԱՄՆ իրական վայրեր են, թեև հավանական չէ, որ իրականում այդ ուղեգծով ճամփորդություն լինի: Երբեմն կյանքի ուղին էլ համանման զգացողություններ է մեզ տալիս: Մենք դյուրություն մեր նույնանում ենք իսրայելցիների ունեցած դժվարին կյանքի հետ (Բ. Օր. 2.7), և մեր կյանքն էլ է դժվարանում: Ստեղծում ենք մեր սեփական ճամփորդության ծրագիրը՝ հեռանալով Աստծո ուղուց (Հմ.1.42-43): Իսրայելցիների նման հաճախ ենք տրտնջում մեր կարիքները բավարարելու ճանապարհին (Թվեր 14.2): Մեր ամենօրյա անհանգստությունների մեջ նույնպես կասկածով ենք վերաբերվում Աստծո նպատակներին (Հմ.11): Իսրայելցիների պատմությունը անընդհատ կրկնվում է մեր մեջ:

Աստված մեզ վստահեցնում է, որ եթե հետևենք Իրեն, Ինքը մեզ կտանի «Տխրատեսիլից» ու «Աղետալիից» շատ ավելի լավ տեղ: Նա ամեն ինչ հայթայթում է, և մեր կյանքում ոչ մի բան չի պակասի (Բ.Օր. 2.7, Փիլ. 4.19): Մենք գիտենք այս ճամարությունը, սակայն հաճախ չենք կարողանում հետևել դրան: Մենք պետք է հետևենք Աստծո՝ ճանապարհային քարտեզին:

Աղոթք - Հավատարիմ Հայր, օգնի՛ր ինձ հանգստանալու Քո տված ուղղության երաշխիքով: Ամեն:

Փոխանակ մեր ծրագրած ճանադարհով գնալու, կարելի է և ղեֆ է Աստծո գծած ուղիով ֆայլել:

Ո՞վ կարող է իմանալ իր հանցանքները. իմ ծածուկ հանցանքներից էլ մաքրի՛ր ինձ: Քո ծառայի՛ն գերծ պահիր ամբարտավան մեղքերից: (Սաղմ. 19. 12-13)

ԱՆՑԱՆԿԱԼԻ ԳՅՈՒՐԵՐ

Քեյն ու Ալիսը հրաշալի մեղրամիս անցկացրին մի տարաշխարհիկ վայրում: Բայց երբ տուն վերադարձան, Քեյլի ոտքերին տարօրինակ վերքեր էին առաջացել, որոնք ուղեկցվում էին քորով: Մասնագետները պարզեցին, որ նրան կծեկ են ինչ-որ միջատներ: Եվ գեղեցիկ ու երազային արձակուրդն ավարտվեց «անցանկալի հյուրերի» դեմ պայքարով:

Դավիթը գիտեր, որ եթե մեղքի դեմ պայքարելու համար Աստծո օգնությունը չխնդրեր, Նրա առաջ հաճելի կյանքով ապրելու իր երազը կվերածվեր մեղքի ու պայքարի: Ներկայացնելով Աստծո փառքը արարչության մեջ, բնական աշխարհում բացահայտելով Նրան (Սաղմ. 19. 1-6) ու Նրա իմաստունությունը (Հմ.7-10)¹ նա Աստծու խնդրեց պաշտպանել իրեն իր անուշադիր, ամբարտավան ու կանխամտածված անհնազանդություններից: «Իմ ծածուկ հանցանքներից էլ մաքրի՛ր ինձ: Քո ծառայի՛ն գերծ պահիր ամբարտավան մեղքերից: (Հմ.12-13),-գրեց նա: Դավիթը հասկացել էր, որ ինքը չունի մարդկային միջոցներ, որպեսզի մեղքի վարակիչ հիվանդությունները չազդեն իր վրա, ուստի օգնություն խնդրեց Աստծուց:

Ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ Աստծուն հարգելով՝ ապրելու մեր երազը չի աղարտվի մեղքով: Եկե՛ք մեր հայացքը պահենք Նրա վրա, խոստովանենք մեր մեղքերն ու ապաշխարենք, փնտրենք Աստծո օգնությունը, որպեսզի անցանկալի հյուրերը չթափանցեն մեր կյանք:

Աղոթք - Սիրո՛ղ Հայր, ինքս ինձ չեմ ճանաչում այնքան, որքան պետք է, և չգիտեմ՝ որն է բարին ու ճշմարիտը: Խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ, որ մեղքի դեմ պայքարելու համար վստահեմ Քո գորությանը: Ամեն:

Ասվածահաճո կյանք ատրելը կարևոր է մեր կյանքում խոստովանության և աղափարության հոգևոր սովորություններ զարգացնելու համար:



խոնարհություն ունեցե՛ք: (Ա.Պետ. 5.5)

ՀԱՄԵՍ ԽՈՐՏԻԿ

Դոմինիկյան Հանրապետությունում իր ծառայությունն սկսած ամերիկացի մի միսիոներ իսկական դաս ստացավ չիպսի մի փոքրիկ տոպրակից օգտվելիս: Եկեղեցական մի հանդիպման ժամանակ նա բացեց խորտիկների իր տուփը, երբ անծանոթ մի կին մոտեցավ ու վերցրեց մի քանի կտոր: Մյուսները նույնպես, առիթից օգտվելով, վերցրեցին:

Սկզբում միսիոներին դա անկիրթ վարժուհի թվաց, սակայն հետո յուրօրինակ խոնարհեցնող դաս դարձավ: Նա դեռ ծանոթ չէր այդ երկրի մշակույթին: Եվ հասկացավ, որ եթե Ամերիկայում անհատներն են շեշտվում, ապա Դոմինիկյան Հանրապետությունում կյանքը համայնական է: Ուտելիքն ու ունեցվածքը ուրիշների հետ կիսելը ցույց է տալիս մարդկանց կապը միմյանց հետ: Այդ մարդկանց կենսակերպը ոչ թե ավելի լավն էր, այլ ուղղակի տարբեր էր: Միսիոները սկսեց ճանաչել իր կողմնակալությունները և հասկացավ, որ խոնարհաբար բաժնեկցելը կօգնի իր ծառայությանը: Պետրոսն այս նույն դասը սովորեցնում էր եկեղեցու ղեկավարներին, երբ հորդորում էր խոնարհաբար վերաբերվել ուրիշների հետ: Նա երեցներին խորհուրդ էր տալիս «հոտը արածացնել ոչ թե նրանց տիրելով, այլ հոտին օրինակ լինելով» (Ա.Պետ. 5.3): Իսկ երիտասարդներին թելադրում էր. «Հնազանդվե՛ք ձերերին, խոնարհություն ունեցե՛ք» (Հմ.5): Ապա բացատրելով, որ Աստված ամբարտավաններին հակառակ է, իսկ խոնարհներին շնորհ է տալիս, նա ասում է. «Աստծո հզոր ձեռքի տակ խոնարհվե՛ք, որպեսզի ձեզ ժամանակին բարձրացնի» (Հմ.6): Թող այս դադափարն օգնի նաև մեզ, որ խոնարհաբար ապրենք իր և ուրիշների առաջ:

Աղոթք - Հայր, ուրիշների հանդեպ իմ ունեցած ամբարտավանությունը փոխարինի՛ր Քո խոնարհ սիրով: Ամեն:

Խնդրի՛ր Աստուծ, որ քո մեջ եղած կողմնակալությունը վերացնի, և փոխի՛ր վերաբերմունքդ, որդեսզի խոնարհաբար ծառայես քոլորին:



Օրենքի մի գիրք են գտել Տիրոջ տանը: (Դ.Թագ. 22.8)

ԱՐԺԵՔԱՎՈՐ ԳՏԱԾՈՒ

2021թ. *Ջենիֆերը, սուզվելով գետի հատակը, այնտեղից մի կանաչ, փոքրիկ շիշ գտավ, որը համարում է իր կյանքի միակ գտածոն: Շիշը պարունակում էր մի գրուկթյուն, որը 1926-ին՝ իր 18-ամյակի օրը գրել էր մի երիտասարդ: Նա իր երկտողը գտնողին խնդրում էր, որ վերադարձնի իրեն: Ջենիֆերը դիմեց Դիմագրքի (Facebook) օգնությունը: Թեև այդ տղան մահացել էր 1995-ին, բայց երբեմնի թաքնված գրուկթյունը ուրախություն պարգևեց այդ մարդու ընտանիքին ու Ջենիֆերին:*

Դ. Թագ. 22. 8-ում կարդում ենք, որ Քեղկիա քահանայապետն էր արտասովոր բան գտել. «Օրենքի մի գիրք եմ գտել Տիրոջ տանը»: Ամենայն հավանականությամբ խոսքը Բ. Օրինաց գրքի մասին է: «Երբ թագավորը լսեց օրենքի գրքի խոսքերը, պատռեց իր հանդերձները» (Հմ.11), շատ վշտացավ ու հուզվեց: Մարդիկ Հուդայի տաճարի նման անտեսում էին Աստծուն, Նրա ներշնչումով ստեղծված սուրբ գրուկթյուններն ու հնագանդությունը: Քահանայապետը զղջումով կուռքերը և Աստծո համար անհաճո բոլոր բաները հանեց տաճարից, երբ բարեփոխումներ էր նախաձեռնում իր ազգի համար (23.1-24):

Աստվածաշունչը պարունակում է 66 գիրք, որոնք բացահայտում են Աստծո իմաստությունն ու խրատը: Դրանց մեջ է նաև Բ.Օրինացը: Երբ կարդում ու լսում ենք դրանք, թող Սուրբ Հոգին փոխի մեր միտքն ու բարեփոխի մեր ուղիները: Խորասուզվե՛նք Սուրբ Գրքի կյանք փոխող պատմության մեջ և գտնենք իմաստություններ՝ մեր ողջ կյանքում այն սովորելու համար:

Աղոթք - Երկնավոր Հայր, օգնի՛ր տեսնելու այն, ինչը պետք է փոխեմ իմ կյանքում: Ամեն:

Ուսումնասիրելով Ասծո խոսքը՝ ճեսնում ենք, որ Նա հայցնում է ձե՛սաճությունը և չալիս հոգևոր դասեր: Յեսևաբար, շա՛ս կարևոր է կանոնավոր կերպով ժամանակ տրամադրել այն կարդալուն:

Դու իմ տեսիլքի Աստվածն ես: (ԾՈՆ. 16.13)

ԱՍՏՎԱԾ ՏԵՍՆՈՒՄ Է ՔԵԶ

Վաղ առավոտները ընկերուհուս՝ Ալմայի համար ցավոտ են, որովհետև նա երկու երեխաների միայնակ մայր է: «Երբ շուրջս լուռթյուն է, բոլոր հոգսերը հայտնվում են: Տնային գործեր անելիս անգամ մտածում եմ մեր նյութական խնդիրների, երեխաների առողջության և ուսման մասին», - ասում է նա: Երբ ամուսինը թողեց նրան, Ալման ամբողջովին ստանձնեց իր երեխաներին մեծացնելու պատասխանատվությունը: «Դժվար է, բայց գիտեմ, որ Աստված տեսնում է ինձ ու իմ ընտանիքը: Ինձ ուժ է տալիս, որ կարողանամ երկու գործ անել՝ ապահովելու մեր բոլոր կարիքները և թույլ է տալիս երեխաներիս՝ ամեն օր զգալ իր առաջնորդությունը», - ասում է ընկերուհուս:

Եզրիպտացի աղախին Հագարը լավ էր հասկացել՝ ինչ է նշանակում Աստծու կողմից տեսնվելը: Աբրամից հղիանալուց հետո Սառան սկսեց արհամարհել նրան (ԾՆՆ. 16.4) և ստիպեց փախչել անապատ: Հագարը միայնակ մնաց իր ու ծնվելիք երեխայի համար անհույս ու մռայլ ապագայի դեմ հանդիման:

Բայց հենց անապատում «Տիրոջ հրեշտակը գտավ» (Հմ.7) նրան և ասաց.«Տերը լսեց քո տառապանքը» (Հմ.11): Տիրոջ հրեշտակը հուշեց Հագարին, թե ինչ է անելու և ինչ է լինելու իր ապագայում:

Հագարից մենք սովորում ենք Աստծուն տրված անուններից մեկը՝ Լահայրո (El Roi) «Իմ տեսիլքի Աստված» (Հմ.13): Դու էլ կարող ես Հագարի նման դժվարին ճանապարհի վրա լինել, հուսահատ ու միայնակ զգալ: Բայց հիշի՛ր, որ նույնիսկ անապատում Աստված տեսնում է քեզ: Ձեռքդ մեկնի՛ր իրեն ու վստահի՛ր, որ առաջնորդի քեզ:

Աղոթք - Սիրելի՛ Աստված, շնորհակալ եմ, որ երբեք ստիպված չեմ լինելու միայնակ ճամփորդել իմ կյանքում: Գիտեմ, որ Դու ինձ տեսնում ես: Միշտ եղիր ինձ հետ: Ամեն:

Մի՛ս հի՛շի՛ր, որ Աստված տեսնում ու հսկում է քեզ:

Նրանց հետ տաճար մտավ՝ քայլելով, ցատկելով ու Աստուծո՛ւ օրհնելով: (Գործք. 3.8)

ՎՊՐԻՐ ԲՈՒԺՎԱԾԻ ՆՄԱՆ

Հնդկաստանցի երկու քուլյրեր ի ծնե կուլյր էին: Նրանց հայրը աշխատասեր մարդ էր, բայց երեխաների վիրահատության ծախսը չէր կարողանում հոգալ: Հետո բժիշկների մի խումբ բժշկական առաքելությամբ եկավ այդ տարածաշրջան, և քուլյրերը վիրահատվեցին: Երբ բուժքուլյրը քանդեց նրանց վիրակապերը, նրանք երկուսն էլ բացականչեցին. «Մայրիկ, ես տեսնում եմ, տեսնում եմ»:

Ի ծնե կաղ մի մարդ, տաճարի դռան մոտ նստած, փող էր մուրում: Պետրոսն ասաց, որ ինքը ոսկի ու արծաթ չունի, բայց ավելի լավ մի բան ունի. «Հանուն Նազովրեցի Հիսուս Քրիստոսի վե՛ր կլաց և քայլի՛ր» (Գործք 3.6): «Նա ցատկելով ոտքի կանգնեց ու քայլեց և նրանց հետ տաճար մտավ՝ քայլելով, ցատկելով ու Աստուծո՛ւ օրհնելով (Հմ.8):

Քուլյրերն ու այս մարդը ավելի շատ են գնահատում իրենց աչքերն ու ոտքերը, քան նրանք, ովքեր կուլյր ու կաղ չեն: Աղջիկները չէին կարողանում զսպել տեսնելու իրենց ուրախությունը, իսկ կաղ մարդը «ցատկելով ոտքի կանգնեց»:

Նկատի ա՛ն քո բնական կարողությունները և գնահատի՛ր, թե ինչպես կարող ես ավելի շատ վայելել ու գործածել դրանք, եթե հրաշքով բուժվել ես: Ուրեմն նկատի ունեցի՛ր, որ եթե հավատում ես Հիսուսին, ուրեմն Նա հոգեպես բժշկել ու մեղքերից ազատել է քեզ:

Եկե՛ք շնորհակալություն հայտնենք Նրան, որ ստեղծեց ու փրկեց մեզ ու նվիրենք այն ամենը, ինչ ինքը տվել է մեզ:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ Քեզ լսող ականջների, Քեզ գովաբանող բերանների և Քեզ ծառայող ձեռքերի համար: Ամեն:

Ասված մեզ սվել է սարքեր կարողություններ: Հաճույքով օգտագործենք դրանք Նրա փառքի ու Նրան ծառայելու համար:

Որովհետև սրանք ձեր մեջ ունենալով ու առատացնելով դատարկ ու անպտուղ չեք լինի մեր Տեր Հիսուս Քրիստոսի մասին գիտության մեջ: (Բ.Պետ. 1.8)

ԱՃԵԼՈՒ ԿՈՉ

Մովային սքուիրդը՝ (*squird* - ծովային չիթ) տարօրինակ մի արարած է: Կցված լինելով ժայռերին ու խեցիներին՝ այն ասես փափուկ, պլաստիկ խողովակ լինի, որ տարուբերվում է հոսանքի հետ: Մնվելով անցնող ջրերով՝ նա ապրում է կրավորական կյանքով, որ շատ հեռու է իր երիտասարդ, գործունյա կյանքից: Այս կենդանին իր կյանքն սկսում է որպես շերեփուկ՝ պարզունակ ուղեղով, որն օգնում է միայն անուղե հայթայթել և խուսափել վնասվելուց: Որպես անչափահաս՝ նա իր օրերն անցկացնում է օվկիանոսն ուսումնասիրելով միայն, սակայն չափահասություն ժամանակ, հաստատվելով իր ժայռի վրա, նա դադարում է ուսումնասիրելուց ու աճելուց և մարսում է իր սեփական ուղեղը: Այսինքն՝ դառնում է անուղեղ, չմտածող ու հոսանքի հետ շարժվող մի արարած: Պետրոս առաքյալը մեզ հորդորում է չհետևել այս ջրային արարածներին: Քանի որ հասունությունը մեզ համար նշանակում է ընդունել Աստծո էությունը (Բ.Պետ. 1.4), մեզ կոչ է արվում աճել մտովի՝ Քրիստոսի մասին ունեցած գիտելիքներով (3.18), հոգեպես՝ այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են բարությունը, համբերությունը և ժուժկալությունը (1. 5-7) և գործնականում՝ սիրելու նոր ձևեր ու միջոցներ, հյուրասիրություն առաջարկելու և մեր պարգևների միջոցով ուրիշներին ծառայելու (Ա. Պետ. 4.7-11): Նման աճը, - ասում է Պետրոսը,- մեզ կօգնի, որ «անգործ ու անպտուղ» կյանք չանցկացնենք (Բ. Պետ. 1.8):

Աճելու այս կոչը կենսական է բոլորի համար: Աստծո էությունը օվկանոսի նման ընդարձակ է: Բացահայտենք Նրա անսահմանությունը, ձեռնարկենք նոր, համարձակ քայլեր:

Աղոթք - Հայր, ինձ դարձրո՛ւ՝ ավելի բարեպետ, որ ամեն օր ձոտեմ Քեզ ցանավել և ավելի աճեմ: Ամեն:

Ասված մեզ կոչում է աճել մեր նկարագրով, որդեսօգի ավելի շատ ծառայենք մեզ Երջադասողներին:

Աստվածների Աստված Տերը գիտե: (Յեսուս 22.22)

ԱՍՏՎԱԾ ԳԻՏԵ

Զուլզը հիացած կանգ առավ մի կտավի մոտ: Նկատելով, որ այդտեղ դրված են ներկի բաց տուփեր ու վրձիններ և մտածելով, որ դա անավարտ գործ է, ու իրենք կարող են շարունակել, նրանք տարբեր գույներով մի քանի վրձնահարված արեցին ու հեռացան: Հեղինակը, սակայն, ներկերն ու վրձինները որպես ավարտված գործի նշան էր թողել: Միջադեպի տեսագրությունը նայելուց հետո, ցուցասրահն ընդունեց, որ տեղի ունեցած թյուրիմացությունն պատճառն ինքն է, և մեղադրանք չառաջադրվեց: Հորդանանի արևելքում ապրող իսրայելցիները թյուրիմացություն առաջացրին, երբ գետի ափին հսկայական զոհասեղաններ կառուցեցին: Արևմտյան ցեղերն այդ գործողությունը դիտեցին որպես Աստծո դեմ ըմբոստություն, որովհետև բոլորը գիտեին, որ Ուխտի տապանակը Աստծո հավանությունը եղած միակ պաշտամունքի վայրն է (Հեսուս 22.16): Լարվածությունն ավելացավ այնքան ժամանակ, մինչև արևելյան ցեղերը պարզաբանեցին, որ իրենք պարզապես զոհասեղանի կրկնօրինակ պատրաստելու մտադրություն են ունեցել: Նրանք ուզում էին, որ սերունդները տեսնեն այն և իմանան իրենց հոգևոր կապը մնացյալ Իսրայելի հետ (Հմ.28-29): Նրանք բացականչում էին.«Աստվածների Աստված Տերը գիտե» (Հմ.22): Բարեբախտաբար, մյուսները լսեցին, փառք տվեցին Աստծուն ու վերադարձան տուն: Քանի որ Աստված «քննում է բոլորի սրտերը և գիտի բոլոր խորհուրդներն ու մտածումները» (Ա.Մնաց. 28.9), բոլորի շարժառիթները հասկանալի են Նրա համար: Եթե մենք խնդրենք Նրանից, որ օգնի մեզ լուծելու մեզ շփոթեցնող իրավիճակները, Նա մեզ հնարավորություն կտա բացատրել մեր նպատակները, որպեսզի ներվեն մեր դեմ եղած հարձակումները:

Աղոթք - Հայր, օգնիր, որ ուշադիր լսող ու խոնարհ խոսող լինեմ: Ամեն:

Անհամաձայնություններ մի՛ս էլ կլինեն, բայց կարևոր է, որ հավասակիցները նույնիսկ սարածայնությունները սիրով արձանագրեն:

Համբերությամբ ընթանանք մեր առջև բացված մրցասպարեզ: (Եբ.12.1)

ՃԱՄՓՈՐԴՈՂ ԼՈՒՅՍ

Զեյմս անուևնով մի մարդ ձեռնարկել էր 1250 մղոն երկարու-
թյամբ մի վտանգավոր ճամփորդություն Միացյալ Նա-
հանգների Արևմտյան ափով՝ հեծանվով անցնելով Սիեթլ, Վա-
շինգտոն, Սան Դիեգո, Կալիֆոռնիա քաղաքներով: Ընկերնե-
րիցս մեկը հեծանվորդին հանդիպել էր Մեծ Սուր անուևնով ժայ-
ռերի մոտ և իմացել, որ Ջեյմսի ճամփորդական իրերը գողա-
ցել են: Ընկերս իր վերմակն ու բրդե վերնաշապիկը առաջար-
կել էր ճամփորդին, բայց նա հրաժարվել էր՝ ասելով, որ ինքը
դեպի հարավ է գնում, ուստի պետք է աստճանաբար պակա-
սեցնի իր հագուստներն ու բեռները:

Ջեյմսը ճիշտ էր մտածում: Դա արտացոլում էր եբրայեցիներ-
ին ուղղված նամակում ասվածը. մեր կյանքի ճանապարհին
հարկավոր է «դեն գցել ամեն ծանրություն և մեղքը, որ մեզ
հեշտություն է պաշարում» (12.1): Առաջ գնալու համար
պետք է թեթև ճամփորդել:

Որպես Հիսուսին հավատացողներ՝ այս մրցարշավի համար
մեզնից պահանջվում է «համառություն» (Հմ.1) և չնրերը,
սնահավատությունն ու այլ մեղքերը թոթափելու քաջություն:
Առանց Հիսուսի օգնության՝ մենք չենք կարող թեթևորեն ճամ-
փորդել ու մրցարշավը լավ ավարտել: Մենք նայենք «մեր հա-
վատքի առաջնորդին և իրագործողին», որպեսզի «չհոգնենք ու
չհուսահատվենք» (Հմ.2-3):

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ ինձ առաջադրված
մրցարշավի համար: Խնդրում եմ՝ ինձ իմաստություն և խորա-
թափանցություն տուր, որ ազատվեմ իմ առաջընթացին խան-
գարող մեղքից: Ամեն:

**Կյանքի ծանադարհին ծանր բեռներ կուևենաք, բայց Տիրոջ շնոր-
հիվ կարելի է ազատվել դրանցից:**

Եվ Տեր Աստուծու ձայնը լսեցին, որ մահ էր գալիս պարտեզում օրվա զով ժամին: Աղյան ու իր կինը թաքնվեցին Տեր Աստուծու երեսից պարտեզի ծառերի մեջ: (ԾՆՆ.3.8)

ՊԱՐՏԵԶԻ ԱՍՏՎԱԾԸ

Տարիներ առաջ կանադացի երգչուհի *Ջոնի Միտչելը* գրեց «Վուտսթոգ» անուկնով երգը, որում խոսվում էր սատանայի հետ «սակարկության մեջ մտած» մարդկային ցեղի մասին: Իր ունկնդիրներին հորդորելով գտնել գոյության ավելի պարզ ու խաղաղ ձև, նա երգում էր «պարտեզ» վերադառնալու մասին: Միտչելը խոսում էր նպատակասլաց ու իմաստասեր սերնդի մասին:

Հեղինակի բանաստեղծական «պարտեզը» Եդեմն էր, այն դրախտը, որ Աստված ստեղծել էր մեզ համար: Այդ պարտեզում էին Ադամն ու Եվան ամեն օր հանդիպում Աստծուն, մինչև այն օրը, երբ նրանք ենթարկվեցին սատանայի ազդեցությանը (ԾՆՆ. 3. 6-7): Այդ օրը տարբեր էր. «Եվ Տեր Աստծու ձայնը լսեցին, որ մահ էր գալիս պարտեզում օրվա զով ժամին: Ադամն ու իր կինը թաքնվեցին Տեր Աստծու երեսից պարտեզի ծառերի մեջ» (Հմ.8): Երբ Աստված հարցրեց, թե ինչ են արել, Ադամն ու Եվան սկսեցին պատմել և միմյանց մեղադրել: Եվ քանի որ նրանք չէին ենթարկվել Աստծո պատվիրաններին, նա պատժեց նրանց. «Ադամի և նրա կնոջ համար կաշվից հանդերձներ պատրաստեց և հագրեց նրանց» (Հմ. 21), իսկ դա զոհաբերություն էր, որն ակնարկ էր այն մահվան մասին, որին ենթարկվելու էր Հիսուսը մեր մեղքերի պատճառով: Աստված մեզ դեպի դրախտ տանող ճանապարհը չտվեց, այլ ցույց տվեց իր հետ մեր հարաբերությունները վերականգնելու ուղին: Մենք պարտեզ չենք վերադառնա, սակայն Աստծո պարտեզին կարող ենք հավակնել:

Աղոթք - Հայր, օգնիր ինձ, որ իմ ձախողումների ու սխալների համար չմեղադրեմ ուրիշներին: Շնորհակալ եմ, որ Քեզ հետ ազնիվ լինելը նշանակում է հարաբերվել Քեզ հետ: Ամեն:

Եթե մեր ու Աստծո միջև արգելներ կան, վերացնենք դրանք, որդեսգի կարողանանք «օրվա զով ժամին» ֆայլել իր հետ:

Իմ լուծը ձեզ վրա վերցրեք ու ինձանից սովորեք, որովհետև ես հեզ եմ ու սրտով խոնարհ, և ձեր հոգիներին հանգստություն կգտնեք: (Մատթ. 11. 29)

ԲԱՆԱԼԻՆ

«Մարդու վիճակը» գրքում Թոմաս Կիտինգը պատմում է մի հետաքրքիր հեքիաթ: Մի ուսուցիչ, որ կորցել էր իր տան բանալին, ծնկաչոք փնտրում է այն խոտերի մեջ: Աշակերտներն էլ են միանում նրան, սակայն՝ իզուր: Հանկարծ աշակերտներից մեկը հարցնում է, թե արդյոք նա գիտի^օ, թե որտեղ կարող է կորցրած լինել բանալին: Ուսուցիչը պատասխանում է.«Իհարկե, գիտեմ: Կորցրել եմ տանը»: «Այդ դեպքում ինչու^օ ենք այստեղ փնտրում», հարցնում են աշակերտները: Եվ ստանում այսպիսի պատասխան.«Մի^օ թե պարզ չէ.այստեղ ավելի լուսավոր է»:

Հեղինակը այս պատկերով եզրակացնում է, որ մարդիկ կորցրել են «Աստծո հետ մտերմության ու Նրա սիրո ներկայության փորձառության բանալին»: Իսկ առանց այդ փորձառության՝ ոչինչ չի հաջողվի: Շատ հեշտ ենք մոռանում, որ նույնիսկ կյանքի վայրիվերումների ժամանակ Աստված մնում է մեր խորագույն ցանկությունների բանալին: Բայց երբ դադարենք բանալին որոնել սխալ տեղերում, Աստված այդտեղ է ու պատրաստ ցույց տալու իսկական հանգիստ: Մատթեոս 11-ում Հիսուսը գովաբանում է Հորը՝ Իր ուղիները ոչ թե«իմաստուններին ու գիտուններին», այլ «մանուկներին» (Հմ. 25) հայտնելու համար: Ապա հրավիրում է «բոլոր հոգնածներին ու բեռնավորվածներին» (Հմ. 28)՝ գալու Իր մոտ հանգստանալու: Երեխաների նման մենք էլ կարող ենք իսկական հանգիստ գտնել, երբ սովորենք մեր «հեզ ու սրտով խոնարհ» (Հմ. 29) Ուսուցչի ճանապարհները:

Աղոթք - Սիրո՛ղ Հայր, որքա՛ն հեշտ եմ գոհանում պայծառ երևացող բաներով: Օգնի՛ր ինձ՝ դեպի Քեզ դառնալ իսկական հանգիստ գտնելու համար: Ամեն:

Հաճախ սխալ տեղ ենք գոհացում և ուրախություն փնտրում: Եկե՛ք մեր խաղաղությունը, հանգիստն ու գոհացումը Աստծո մեջ գտնենք:

Եվ նոր երգ էին երգում ու ասում.«...քո արյունով մեզ գնեցիր Աստծո համար բոլոր ցեղերից ու լեզուներից, ժողովուրդներից ու ազգերից: (Հայտն. 5. 9)

ԵՐԲ ԱՍԲՈՂՋ ԵՐԿԻՐՆ Է ԵՐԳՈՒՄ

1 970-ական թվականներին գովազդային հոլովակում օգտա-
գործված երգերից մեկը ոգեշնչեց մի ամբողջ սերնդի:
Ստեղծվելով որպես «Կոկա Կոլայի» գովազդային արշավի մի
մաս՝ ի վերջո այն դարձավ բրիտանական Նյու Սիգլբրոք խմբի
ամբողջական երգերից մեկը և առաջնակարգ տեղեր զբաղեց-
րեց աշխարհի երաժշտական մրցույթներում: Բայց շատերն էլ
չեն մոռանա նույն երգի հեռուստատեսային տարբերակը, որ
երգում են երիտասարդները Հռոմ քաղաքից դուրս գտնվող մի
լեռան գագաթին: Որքան էլ տարբերվող թվար մեղուների ու
պտղատու ծառերի տեսարաններով գովազդը, մենք, արձա-
գանքեցինք երգահանի ցանկությունը՝ աշխարհին սովորեցնել
սրտով ու ներդաշնակորեն երգել:

Հովհաննես առաքյալը նկարագրում է այդ իդեալական երազի
նման մի բան, որը շատ ավելի մեծ է: Նա պատկերացնում է մի
երգ, որ երգում են «երկնքում, երկրի վրա և ծովում եղած բո-
լոր արարածները» (Հայտն. 5.13): Այս օրհներգում չկա որևէ
տարօրինակ բան: Չկա ավելի արժեքավոր բան, քան այն գի-
նը, որ վճարել է Նա, ում մասին երգվում է: Ոչ էլ կարելի է
ավելի կանխատեսելի լինել, քան պատերազմի, մահվան և դժ-
վարությունների հեռանկարը, որոնք հաղթահարվելու են Նրա
սիրո գոհաբերությամբ:

Սա այն է, ինչ պահանջվել էր. որ Աստծո Գառը կրի մեր մեղ-
քը, հաղթի մահվանը, հաղթահարի մահվան հանդեպ մեր վա-
խը և սովորեցնի ամբողջ երկրին ու երկնքին երգել կատարյալ
ներդաշնակությամբ:

Աղոթք - Երկնքում բնակվող Հայր, խնդրում եմ օգնի՛ր ինձ՝
հիանալու Քո տված երգով, որն ուրախությամբ կարող է երգել
յուրաքանչյուր արարած: Ամեն:

**Ինչո՞ք Հովհաննեսի օրհներգն էր բոլոր արարածները երգում
փառաբանական երգը, եկե՛՛ք մենք էլ նույն ոգով երգենք ու
փառաբանենք Տիրոջը:**

Այսպես բարիքը և ողորմությունը կգան իմ հետևից: (Սաղմ. 23.6)

ԱՍՏԾՈՒ ԲԱՐԻՔԻ ՈՒՂԵԿՑՈՒԹՅԱՄբ

Միջնակարգ դպրոցում սովորելու տարիներին նաև աշխատում էի կանանց հագուստի մի խանութում, որտեղ անվտանգության աշխատակիցներից մեկը քաղաքացիական հագուստով հետևում էր կասկածելի գնորդներին, որ գողություն չանեն: Նրանք, ովքեր կասկած չէին հարուցում, հանգիստ կատարում էին իրենց ընտրությունը: Ես նույնպես այդ կասկածելիներից էի, և դա շատ հետաքրքիր փորձառություն եղավ իմ կյանքում:

Որպես հակադրություն վերն ասվածի՝ Դավիթը հայտարարեց, որ իրեն հետևում են աստվածային օրհնությունը, Աստծո բարիքն ու ողորմությունը: Այս դեպքում հետևելը ոչ թե կասկածանքով է, այլ սիրով: Ինչպես ավետարանիչ Չարլզ Սպերջենն է նկարագրել, այդ «երկվորյակ պահապան հրեշտակները» հավատացյալներին հետևում են «թե ձմռան մռայլ, և թե՛ ամառվա պայծառ օրերին: Բարիքը ապահովում է մեր կարիքները, իսկ կարեկցությունը կամ ողորմությունը ջնջում է մեր մեղքերը»:

Լինելով երբեմնի հովիվ՝ Դավիթը հասկանում էր բարիքի ու կարեկցության այս միտումնավոր զուգակցումը: Ուրիշ բաներ էլ կարող են հետևել հավատացյալներին, ինչպես վախը, անհանգստությունը, գայթակղությունն ու կասկածները: Սակայն Դավիթն ուրախացավ ու ասաց. «Այսպես բարիքը և ողորմությունը կգան իմ հետևից իմ կյանքի բոլոր օրերին, և Տիրոջ տանը կբնակվեմ ամբողջ կյանքիս ընթացքում» (Սաղմ. 23.6):

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ ինձ հետևում ես բարի նպատակներով և Քո երկու գեղեցիկ օրհնություններով՝ բարիքով ու ողորմությամբ: Ամեն:

Ասված բարիքով ու ողորմությամբ է հետևում Իր գավակներին, որդեսզի օրհնի նրանց: Նույնը կարող է անել նաև քեզ համար:

ժողովուրդը, որ խավարի մեջ էր նստած, մեծ լույս տեսավ: (Մատթ. 4. 16)

ԱՐԵՎԻ ՇՈՂԵՐՈՎ ՋՐԱԿՈՒՅՏԵՐ

Ամառային մի տաք օր ես ու իմ չորս տարեկան թոռնուհին՝ Մոլին, հոգնեցինք գնդակ խաղալուց և պատշգամբում նստեցինք: Հանկարծ Մոլին, նայելով դեպի բակ, բացականչեց.«Նայի՛ր, արևի շողերով ջրակույտերը»: Արևի լույսը թափանցել էր թանձր սաղարթների տերևների միջից՝ ստեղծելով այդպիսի պատրանք:

Արևի շողերով ջրակույտեր... Իրոք, խավար օրերում լույսի շող գտնելու գեղեցիկ պատկեր է: Հաճախ դժվարին ժամանակներում, երբ լավ լուրերի պակաս է լինում, ստվերի վրա կենտրոնանալու փոխարեն, կարելի է լույսին ուշադրություն դարձնել:

Իսկ լույսի անունն է Հիսուս: Մատթեոսը, նկարագրելով Հիսուսի գալստյան պայծառությունն աշխարհի վրա, մեջբերում է Եսայի մարգարեին.«Ժողովուրդը, որ խավարի մեջ էր նստած, մեծ լույս տեսավ և մահվան ստվերով աշխարհում նստողների համար լույս ծագեց» (Մատթ. 4.16, Ես.9.1-2): Մեղքի հետևանքները չըջապատում են մեզ, երբ մենք ապրում ենք «մահվան ստվերում»: Բայց այդ ստվերի միջից փայլում է Հիսուսը՝ աշխարհի մեծ ու փառավոր լույսը (Հովհ. 1. 4-5):

Հիսուսի սիրո ու ողորմության արևը ճեղքում է ստվերը՝ տալով մեզ «արևոտ ջրակույտեր», լուսավորելու մեր օրն ու հույսով պայծառացնելու մեր սրտերը:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, դժվարություններով լի աշխարհում Քո ներկայության կարիքն ենք զգում: Բարձրացրու՛ մեզ և օգնի՛ր, որ կարողանանք կանգնել Քո վկայության լույսի մեջ: Ամեն:

Մուտք ամօրը կարող են ծածկել մեզ, սակայն Տե՛ր Հիսուսի լույսը մեզ ուրախություն է տարգնում:

Ձգտում եմ, որ թերևս հասնեմ նրան, ինչով Քրիստոս Յիսուսի կողմից բռնվեցի: (Փիլ. 3. 12)

ԴԱՐՁՆԵԼ ԻՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2002-ի Հունիսի 11-ին առաջին անգամ տեղի ունեցավ «Ամերիկյան կուռք» երգի մրցույթը: Ամեն շաբաթ հավակնորդները կատարում էին որևէ հանրաժանոթ երգի իրենց տարբերակը, և հանդիսատեսը քվեարկությամբ ընտրում էր հաջորդ փուլ անցնողին:

Ժյուրիի անդամներից Ռենդի Ջեքսոնի կարծիքով՝ լավ կլինի, եթե երգիչները երգը դարձնեն իրենց սեփականությունը: Եվ նա հենց այդ բառերով գույց մի կատարողի, որը հայտնի մեղեդին կատարեց յուրովի՝ տալով դրան բոլորովին նոր ձև: «Իր սեփականությունը դարձնել»՝ նշանակում է ստեղծագործաբար այն ամբողջովին յուրացնել և հետո ներկայացնել բեմում:

Պողոսը մեզ հրավիրում է սեփականացնել մեր հավատն ու նրա արտահայտությունը: Փիլիպպեցիներին ուղղված նամակի 3-ում նա մերժում է Աստծո առաջ ճիշտ դիրք ձեռք բերելու փորձերը (Հմ.7-8) և փոխարենը սովորեցնում ընդունել «այն արդարությունը, որ Աստծուց է հավատով» (Հմ.9): Ներման ու փրկության պարզեւր փոխում է մեր մղումն ու նպատակները. «Ձգտում եմ, որ թերևս հասնեմ նրան, ինչով Քրիստոս Հիսուսի կողմից բռնվեցի» (Հմ. 12):

Հիսուսն ապահովել է մեր հաղթանակը: Այդ ճշմարտությունն ամուր բռնելու համար մեր գործը պետք է լինի ընդունել Աստծո ավետարանի պարզեւր և դրանով ապրել այս կոտրված աշխարհում: Այլ խոսքով՝ մենք պետք է հավատը դարձնենք մերը և դրանով «ինչի որ հասանք, նույն կանոնով ապրենք» (Հմ.16):

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ Քո սիրո ու ներումի պարգևի համար: Օգնի՛ր ինձ, որ ամեն օր երախտագիտություն հայտնեմ ու առաջ գնամ իմ հավատի մեջ: Ամեն:

Հավատի մեջ առաջ գնալու համար հարկավոր է ջանք թափել ու այն մեր սեփականությունը դարձնել:

Առյայտում առաջին լսման ժամանակ ոչ ոք իմ կողմը չկանգնեց, այլ բոլորն ինձ թողեցին: (Բ.Տիմ. 4.16)

ԱՅՍ ԳՈՐԾՈՒՄ ՄԻԱՍԻՆ

Երբ սկսվեց թագավարակը, Քեյլին պայքարում էր ուղեղի քաղցկեղի դեմ: Նրա սրտի ու թոքերի շուրջ հեղուկ էր գոյացել, ու նա կրկին հիվանդանոց ընկավ: Սակայն համավարակի պատճառով նրա ընտանիքը չէր կարողանում այցելել: Եվ ամուսինը՝ Դեյվը, որոշեց մի բան անել:

Հավաքելով բոլոր սիրելի մարդկանց՝ Դեյվը խնդրեց, որ նրանք մաղթանքների մի ցուցանակ պատրաստեն: Քսան հոգի, դիմակներով ու ցուցանակները ձեռքներին կանգնեցին հիվանդանոցի մոտ: Ցուցանակները վրա գրված էին. «Լավագուշն մայրը», «Սիրում ենք քեզ», «Քեզ հետ ենք» և այլն: Քեյլին հիվանդապահուհու օգնությունը մոտեցավ պատուհանին ու տեսավ իրեն ուղղված խոսքերը: Հետո Դեյվը դիմագրքի իր էջում գրեց. «Մենք տեսնում էինք դիմակներ ու թափահարվող ձեռքեր, բայց դրանք գեղեցիկ դիմակներ ու ձեռքեր էին»:

Իր կյանքի վերջում Պողոս առաքյալը, Հռոմի բանտում մենակություն զգալով, գրեց Տիմոթեոսին. «Շտապի՛ր գալ՝ ձմեռը չեկած» (Բ.Տիմ. 4.21): Բայց նա բոլորովին մենակ չէր. «Տերն ինձ նեցուկ եղավ ու զորացրեց» (Հմ.17),-գրել է նա: Ակնհայտ էր նաև, որ նա քաջալերական որոշ շփոթման էր ունեցել այլ հավատացյալների հետ, որովհետև Տիմոթեոսին ասում է. «Քեզ բարևում են Եվբուղոսը, Պուզեսը, Կլավդիան ու բոլոր եղբայրները» (Հմ.21): Մենք ստեղծված ենք ուրիշների հետ լինելու համար: Ավելին, այդ շփման կարիքը զգում ենք, երբ ճգնաժամի մեջ ենք: Ի՞նչ կարող ենք անել մեկի համար, որն այսօր միայնակ է զգում:

Աղոթք - Սիրելի՛ Յայր, շնորհակալ եմ Քո՝ Յոզին մխիթարող պարգևի ու հավատացյալների հավաքականության համար: Ամեն:

Միայնության զգացումը օտար չէ մեզ համար: Բայց անհրաժեշտ է, որ Աստծո ներկայությունը զգանք, երբ սիրելիներից հեռու լինենք:

Կենսատու հանդիմանությանը անսացող ականջը իմաստունների մեջ է բնակվում: (Առ. 15.31)

ԿԵՆՍԱՏՈՒ ԽՐԱՏ

«**Ռ**ժբախտաբար, վերջերս մենք բավական ծանր խոսակցություն ունեցանք,- պատմում է Շելլին: -Երկուսիս համար էլ դատհած էր, բայց ես զգում էի, որ նա պետք է ուշադրություն դարձներ իր վերաբերմունքին, որպեսզի չնեղացներ իր շրջապատի մարդկանց»: Շելլին խոսում էր մի երիտասարդ կնոջ մասին, որի հետ վերջերս շատ էր մտերմացել, որովհետև «ծանր» խոսակցությունն իրականում արդյունավետ էր եղել: Մի քանի շաբաթ անց երկու կանայք արդեն եկեղեցում խոնարհության բնաբանով աղոթքի պահ էին առաջնորդում:

Նույնիսկ պաշտոնական հարաբերություններից դուրս՝ մեր հավատացյալ եղբայրների ու քույրերի հետ կարող ենք ունենալ դժվարին խոսակցություններ: Առակների գրքում, որը լի է հավերժական իմաստությամբ, գնահատվում է խրատներ տալու և ստանալու կարողությունը: Իրականում կառուցողական քննադատությունն անվանում են նաև կենսատու, որը տանում է դեպի ճշմարիտ իմաստություն (Առ. 15.31): Առակների 15-ի 5-ում ասվում է.«Հիմարն արհամարհում է իր հոր խրատը, բայց հանդիմանություն պահողը խորագետ է»: Պարզ ասած՝ «Ճանապարհից խոտորվողի համար խիստ պատիժ կա» (Հմ. 10): Այնպես, ինչպես Շելլին ականատես եղավ, որ սիրով ասված ճշմարտությունը կարող է նոր կյանք տալ հարաբերություններին:

Կյանքումդ կա՞ մեկը, որին սիրառատ, կենսատու խոսք պետք է ասվի: Կամ ինքներդ եք վերջերս իմաստուն հորդորներ ստացել, որոնց բարկությունը կամ անտարբերությունը եք արձագանքել: Խնդրենք Աստծուց, որ օգնի մեզ խոնարհությամբ խորհուրդ տալ և ստանալ:

Աղոթք - Հայր, խնդրում եմ Քո իմաստությունը: Տու՛ր ինձ խոնարհ սիրտ, որ պատրաստ է կենսատու խրատ ընդունելու: Ամեն:

Ինչդե՞ս ենք վերաբերվում ձի՞ժս ֆննադասությանն ու խոնարհությանը:

Եվ խնկի ծուխը սրբերի աղոթքի հետ հրեշտակի ձեռքից Աստծու առաջ բարձրացավ: (Չայտն. 8.4)

ԵՐԲ ԱՂՈԹՔԸ ՑՆՑՈՒՄ Է ԱՇԽԱՐՀԸ

Բողա. Գարի Գրինբերգը խոշորացուցցով մեծացրել ու նկարել է աշխարհի տարբեր ծովափերից վերցված ավազահատիկներ՝ հանքանյութերի, խեցիների ու ծովային քարերի մեջ բացահայտելով գույների զարմանալի շողեր: Նա պարզել է, որ ավազի մեջ շատ ավելին կա, քան այն, ինչ երևում է: Ավազի ուսումնասիրությունն ու հանքային նյութերի մանրադիտակային հետազոտությունը կարող է շատ բան պատմել գոյացությունների, ծովային հոսանքների ու դրանց հնարավոր ազդեցությունների մասին: Նույնիսկ մեկ ավազահատիկը կարող է մեծարժեք տեղեկություններ տալ գիտությունը: Այդպես էլ մեկ աղոթքը կարող է ծանրակշիռ լինել: Սուրբ իրքը ցույց է տալիս Աստծո արքայություն գալստյան աղոթքի կարևորությունն ու հզոր դերը: Հայտնության ծ-ում Հովհաննեսը տեսնում է Իր գահի առջև, զոհասեղանի մոտ կանգնած մի հրեշտակի, որի ձեռքին «Աստծո ժողովրդի աղոթքները պարունակող» ոսկե խնկաման էր. «Հրեշտակը խնկամանը վերցրեց ու զոհասեղանի կրակով լցրեց և երկրի վրա գցեց, եղան ձայներ, որոտումներ, փայլատակումներ ու երկրաշարժ» (Հմ. 3.5): Դրանից անմիջապես հետո յոթ հրեշտակներ յոթ փողերով «պատրաստվեցին հնչեցնելու» դրանք՝ ավետելով այս հին երկրի վերջին օրերը և Քրիստոսի վերադարձը: Երբեմն կարող է մեզ թվալ, թե մեր աղոթքները քիչ են, սակայն Աստված արժևորում է յուրաքանչյուր աղոթք: Այն աստիճան, որ երբեմն դրանք կարող են դեր ունենալ Նրա թագավորության գործերում: Եվ ուրեմն, նույնիսկ փոքր թվացող աղոթքը կարող է երկիր ցնցելու չափ ծանրակշիռ լինել:

Աղոթք - Երկնավոր Չայր, խնդրում եմ օգնի՛ր, որ հավատարիմ լինեմ աղոթքիս մեջ: Ամեն:

Աղոթեմք, որ Աստծո թագավորությունը գա, որովհետև Տիրոջ ղազմիքով է:

Իշխեք ծովի ձկների, երկնքի թռչունների ու երկրի վրա սողացող բոլոր կենդանիների վրա: (ԾՆ.1.28)

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՅԸ

Արձակուրդի ժամանակ ես ու ամուսինս քայլում էինք ծովափին, երբ նկատեցինք ժամանակավոր ցանկապատով առանձնացված մի փոքրիկ տարածք: Մի երիտասարդ բացատրեց, որ մի խումբ կամավորներ պատրաստակամություն են հայտնել պաշտպանել ծովային կրիաներին և այդ ցանկապատով շրջապատել են կրիայի բնի ձվերը, որպեսզի երբ ձագերը դուրս գան բնից, մարդիկ ու կենդանիները չվնասեն նրանց: Երիտասարդի ասելով՝ գիտնականները պարզել են, որ կրիաների հինգ հազար ձագերից միայն մեկն է մեծանում: Ձագերին ծառայելու այդ ձևը ավելի խորացրեց ծովային այդ կենդանիների հանդեպ իմ առանձնահատուկ վերաբերմունքը: Այժմ էլ ես վզիս կրում եմ կրիայի պատկերով կախազարդ, որն ինձ միշտ հիշեցնում է Աստծո ստեղծած արարածների հանդեպ իմ պատասխանատվության մասին:

Երբ Աստված ստեղծեց աշխարհը, հատուկ միջավայր տրամադրեց, որտեղ յուրաքանչյուր արարած կարող էր ապրել ու զարգանալ (ԾՆ.1. 20-25): Երբ ստեղծեց Իր պատկերը կրողներին, նախատեսեց, որ մենք «իշխենք ծովի ձկների, երկնքի թռչունների ու երկրի վրա սողացող բոլոր կենդանիների վրա» (Հմ. 28): Դա կօգնի, որ մենք ծառայենք Իրեն՝ որպես պատասխանատու տնտեսներ, որոնք կօգտագործեն Աստծուց իրենց տրված իշխանությունը՝ հոգ տանելու Նրա հսկայական ստեղծագործության մասին:

Աղոթք - Սիրո՛ղ ու պահո՛ղ Արարիչ, ցույց տուր ինձ շոշափելի միջոցներ, որոնցով կկարողանամ կատարել իմ պատասխանատվությունը՝ որպես Քո ստեղծագործության մի տնտես և ոգեշնչել ուրիշներին, որ նույնը անեն: Ամեն:

Ասված մեզ դրել է այս աշխարհում և սղասում է մեր հոգասարությունը: Ի՞նչ կարող ենք անել դրա համար:

Առանց ինձ ոչինչ չեք կարող անել: (Ռոմի.15. 5)

ՀԻՍՈՒՄԻ ՕՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԵՆՔ

Ե կավ այն օրը, երբ ես հասկացա, որ հայրս անպարտելի չէ: Որպես տղա՝ միշտ հիանում էի նրա ուժով ու վճռականությամբ: Բայց երբ վնասեց մեջքը, հասկացա, որ նա էլ է հասարակ մահկանացու: Ես մնացի ծնողներիս մոտ, որպեսզի օգնեմ հորս լոգարան մտնել, հագնվել, նույնիսկ մի բաժակ ջուր խմել: Նրա համար նվաստացուցիչ էր, բայց ինքն էլ ընդունեց, որ առանց մեր օգնություն ոչինչ չի կարող անել: Որոշ ժամանակ անց հորս առողջությունը որաշակիորեն վերականգնվեց, բայց այդ դիպվածը երկուսիս էլ շատ կարևոր դաս տվեց. մենք միմյանց կարիքն ունենք:

Իսկ ավելի շատ Տեր Հիսուսի կարիքն ունենք: Հովհաննու 15-ում նկարագրված որթատունկի ու ճյուղերի պատկերը նույն բանն է հուշում: Մարդկային մտքում ծնվող արտահայտություններից մեկը, թե ես ամեն ինչ կարող եմ, առաջին հայացքից մխիթարական է թվում, բայց կարող է հարվածել մեր ինքնավստահությանը: Որովհետև Տեր Հիսուսի խոսքը հստակ է. «Առանց ինձ ոչինչ չեք կարող անել» (Հմ.5): Նա խոսում է պտուղ տալու մասին, ինչպես «սեր, ուրախություն, խաղաղություն» (Գաղ. 5.22), որոնք աշակերտի հիմնական հատկանիշներն են: Պողաբերությունն այն կյանքն է, որին հրավիրում է Տեր Հիսուսը, և մեր վստահությունը Նրա հանդեպ տալիս է բեղմնավոր կյանք, որ ապրում ենք Հոր փառքի համար (Հովհ. 15.8):

Աղոթք - Հայր, առանց Քեզ ես ոչինչ չեմ կարող անել: Ամեն:

Ինչ վիճակում էլ լինեմք, եկե՛ք այսօր այս դարձ աղոթքն ասենք. «Տե՛ր, առանց Քեզ ես ոչինչ չեմ կարող անել»:

Ես՝ Տերը, ցածրացրել եմ բարձր ծառերը և ցածր ծառերը բարձրացրել:
(Եզ.17.24)

ՎԵՐԱՀՍԱԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՁՆԵԼ ԱՍՏԾՈՒՆ

Բոնսայր բույսերի աճեցման մի ձև է, երբ տանը՝ տարայի մեջ աճեցվում է որևէ ծառատեսակ: Փոքր զամբյուղը, ժամանակ առ ժամանակ ծառի ճյուղերն ու արմատները կտրելը սահմանափակում են դրա աճը, և այն մնում է փոքր:

Դրանք հիանալի պճնազարդ բույսեր են և իրենց էությամբ ցույց են տալիս վերահսկողութայն ուժը: Ճիշտ է, մարդն է կատարում այդ գործողությունները, փոխում բույսերի միջավայրը, սակայն ի վերջո Աստված է դրա աճն ապահովում:

Աստված Եզեկիել մարգարեին ասում է.«Ես՝ Տերը, ցածրացրել եմ բարձր ծառերը և ցածր ծառերը բարձրացրել» (Եզ.17.24): Նա կանխագուշակում է ապագայում կատարվելիք իրադարձությունները, երբ Ինքը «արմատախիլ է անելու» իսրայելցիներին՝ թույլ տալով, որ բաբելոնցիները ներխուժեն: Բայց Աստված նաև Իսրայելում նոր ծառ է տնկելու, որը ուտեր արձակելու ու պտուղ է տալու և «ամեն տեսակի թռչուններ պիտի բնակվեն» դրա հովանու ներքո (Հմ.23): Աստված ասում է, թե որքան էլ գալիք իրադարձությունները անվերահսկելի թվան, Ի՛նքն է ղեկավարելու ամեն ինչը:

Աշխարհը մեզ սովորեցնում է սեփական քրտնաջան աշխատանքով փորձել վերահսկել իրավիճակները: Սակայն մեր իսկական խաղաղությունն ու բարգավաճումը ձեռք կբերենք վերահսկումը զիջելով Աստծուն, որը կարող է ծառեր աճեցնել:

Աղոթք - Սիրո՛ղ Հայր, գովաբանում եմք Քեզ՝ որպես մեր ամենակարող թագավորի: Օգնի՛ր, որ կարողանանք ճանաչել Քեզ՝ որպես մեր Աստված: Ամեն:

Փորձում եմ վերահսկել մեր կյանքը, սակայն իսկական վերահսկումը Աստծուն է տեսք հանձնել:

Նա չի հոգնել և չի թուլացել: (Ես. 40.28)

ԶՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ԹՈՂՆԵԼՈՒ ԶԱՍԱՐ

Ժամանակին մոլորակի ամենաուժեղ մարդը՝ ամերիկացի ծանրամարտիկ Պոլ Անդերսոնը, 1956 թ. Ավստրալիայի Մելբուռն քաղաքում կայացած օլիմպիական խաղերում համաշխարհային ռեկորդ սահմանեց, թեև ականջը բորբոքված էր և բարձր ջերմություն ուներ: Նրա առաջին երկու փորձերը ձախողվել էին, ուստի ուժեղ մարզիկն արեց այն, ինչ կարող է կատարել մեզանից ամենաթույլ մարդն անգամ. նա Աստծուց հավելյալ ուժ խնդրեց: Ինչպես հետագայում մարզիկը պատմել է. «Դա սակարկություն չէր: Ինձ օգնություն էր պետք»: Եվ երրորդ մոտեցմանը նա բարձրացրեց 187,5 կգ:

Պողոս առաքյալը գրել է «Երբ տկարանում եմ, այն ժամանակ զորանում եմ» (Բ.Կորնթ. 12.10): Նա խոսում է հոգևոր ուժի մասին, բայց և գիտեր, որ Աստծո «զորությունը տկարության մեջ է կատարյալ դառնում» (Հմ.9): Ինչպես հայտարարել է Եսայի մարգարեն, «Նա է հոգնածին ուժ տվողը, նա ավելացնում է կարողություն չունեցողի զորությունը» (Ես. 40. 29): Ո՞րն է այդ ուժի աղբյուրը: Հիսուսի մեջ մնալը: Հիսուսն ասում է «Առանց ինձ ոչինչ չեք կարող անել» (Հովհ.15. 5): Ինչպես ծանրամարտիկ Պոլ Անդերսոնն է ասել. «Եթե աշխարհի ամենաուժեղ մարդն անգամ չի կարող առանց Հիսուս Քրիստոսի զորության հաղթել, դա ի՞նչի մասին է վկայում»: Այս հարցի պատասխանը գտնելու համար մենք էլ կարող ենք թողնել խաբուսիկ ուժերից մեր կախյալ վիճակը և Աստծուց խնդրել Իր ուժն ու աջակցությունը:

Աղոթք - Ամենազոր Աստված, կյանքիս բեռները ծանր են, բայց Քո սեջ մնալը ինձ տալիս է շարունակելու և հաղթելու գերբնական ուժ: Շնորհակալ եմ: Ամեն:

Ասծո սլած ուժին վստահելը մեզ ավելի է զորացնում, որդեսզի հաղթահարենք ամեն դժվարություն ու փորձություն:

Երեխային կրթի՛ր իր ճանապարհին համապատասխան, որով ընթանալու է, և նա իր ծերության ժամանակ չի խոտորի դրանից: (Առ. 22.6)

ԸՆՏՐԵԼ ԾԻՇՏ ՈՒՂԻՆ

Բրազիլացի Ֆելիպե ուստավոն 16 տարեկանում չէր դառնա սքեյդբորդի չեմպիոն, եթե նրա հայրը չհավատար ու ամեն ինչ չաներ իր երազանքի կատարման համար: Նա երազում էր, որ իր որդին դառնա պրոֆեսիոնալ սքեյդբորդիստ, բայց դրա համար ֆինանսական միջոցներ չուներ: Ուստի նա վաճառեց ավտոմեքենան և որդուն տարավ մասնակցելու միջազգային հայտնի մրցույթին: Այդտեղ տարած հաղթանակն էլ դարձավ տղայի հետագա հաջողությունների սկիզբը:

Գուստավոյի հայրը կարողացավ տեսնել իր որդու սերը այդ մարզաձևի հանդեպ և նպաստել դրան: Զուր չէ, որ որդին այսպես է արձագանքել այդ իրողությանը. «Երբ ես հայր դառնամ, կուզենամ իմ հոր արածի 5 տոկոսի չափ անել իմ զավակներին»:

Առականերում նկարագրվում է այն հնարավորությունը, որ ունեն ծնողները իրենց երեխաներին հասկանալու, նրանց կարողությունները գնահատելու և ճիշտ ճանապարհ ընտրելու համար: Առականրի հեղինակը գրում է. «Երեխային կրթի՛ր իր ճանապարհին համապատասխան, որով ընթանալու է, և նա իր ծերության ժամանակ չի խոտորի դրանից» (Առ. 22.6):

Մենք կարող ենք շատ միջոցներ ու խորը գիտելիքներ չունենալ, բայց Աստծո իմաստնությունը (Հմ. 17-21) և մեր ուշադիր սիրով կկարողանանք մեծ սեր մատուցել մեր և մեր ազդեցության ներքո գտնվող մյուս երեխաներին:

Աղոթք - Երկնավոր Հայր, երբ նկատում եմ, թե ինչպես եմ լավ ծնողներն ուշադրություն դարձնում իրենց երեխաներին, հասկանում եմ, որ Դու՛ ես ամենախկական ծնողը: Շնորհակալ եմ ինձ տեսնելուդ ու առաջնորդելուդ համար: Ամեն:

Ասված՝ որդես ուժադիր Հայր, խրատում և ուղղում է մեզ, որ ծիճս ուղի ընտրենք:

Խոնարհվե՛ք Տիրոջ առաջ, և Նա ձեզ կբարձրացնի: (Հակ. 4.10)

ՃՇՄԱՐԻՏԸ ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆՆ Է

Խորհելով, թե Աստված որքան բարձր է գնահատում խոնարհությունը, 16-րդ դարի հավատացյալ Թերեզա Ավիլացին գրել է «Քանի որ Աստված է գերագույն ճշմարտությունն ու խոնարհությունը, մեր միջից որևէ լավ բան չի բխում: Այն գալիս է շնորհքի ջրերից, որոնց մոտ է Հոգին՝ գետի ափին տնկված ծառի նման, և այն արևից, որ կյանք է շնորհում մեր գործերին»: Թերեզան եզրակացնում է, որ աղոթքով մենք խարսխվում ենք այդ իրականությունը, քանի որ «աղոթքի ամբողջ հիմքը խոնարհությունն է: Որքան շատ խոնարհվենք աղոթքի մեջ, այնքան Աստված մեզ կբարձրացի»:

Խոնարհության մասին խոսքերը կրկնում են Հակոբոս 4-ի սուրբգրային իմաստնությունները, որտեղ Հակոբոսը զգուշացնում է հպարտության ու եսասիրական փառասիրության ինքնառնչացնող բնույթի մասին, որոնք հակառակ են աստվածաշնորհ կենսաձևին (Հմ.1-6): Ագահությունից, հուսահատությունից և մշտական հակամարտություններից ազատվելու միակ լուծումը Աստծո շնորհքով մեր հպարտությունից հրաժարվելն է: Այլ խոսքով ասած՝ «Խոնարհվե՛ք Տիրոջ առաջ, և Նա ձեզ կբարձրացնի» (Հմ.10):

Միայն այն ժամանակ, երբ մենք խորանանք շնորհքի ջրերում, կկարողանանք ինքներս մեզ սնել «ի վերուստ տրված իմաստությամբ» (3.17): Միայն Նրա մեջ կկարողանանք ճշմարտությամբ բարձրանալ:

Աղոթք - Սիրո՞ղ Աստված, շնորհակալ եմ Քո տված կյանքի պարգևի համար, և ես կարիք չունեմ ավելին լինելու, քան այն, ինչ որ եմ: Ամեն:

Հղաճությունը խանգարում է աղոթքի ու Ասծո շնորհի փորձառությանը: Ուստի խոնարհվե՛նք Տիրոջ առջև:

Ո՞վ գիտե, գուցե մի այսպիսի ժամանակի համար ես դու թագուհուբայան հասել: (Եսթ. 4.14)

ՀԱՄԱՐՁԱԿ ՄԵԱԼ

Իլինոյս նահանգի մի փոքր քաղաքում հանցագործությունների 40 տոկոսը ընտանեկան բռնություններ են: Ըստ տեղացի մի հովվի՝ դրանք ավելի շատ քողարկված են, որովհետև այդ մասին խոսելն ընդունված չէ: Այդ հանգամանքը նկատի ունենալով էլ՝ տեղի նախարարները որոշեցին, խուսափելու փոխարեն, հավատք դրսևորել և խիզախությամբ լուծել խնդիրը: Նրանք նախաձեռնեցին ընտանեկան բռնության մասին դասընթացներ՝ աջակցելով այդ հարցով զբաղվող հասարակական կազմակերպություններին: «Մեր ազդեցիկներն ու կարեկցությունը, զուգորդված որոշակի շոշափելի աջակցությամբ, կկարողանան կարևոր փոփոխություն բերել», - վստահեցրել է նախարարներից մեկը: Երբ Պարսկաստանի Թագուհի Եսթերը տատանվում էր խոսել իր ժողովրդի ցեղասպանությունը թուլլատրող օրենքի դեմ, հորեղբայրը նրան զգուշացրեց, որ եթե հիմա նա լռի, հրեաներն ուրիշ տեղից օգնություն կստանան, բայց ինքն ու իր հոր տունը կկորչեն (Եսթ. 4. 13-14): Իմանալով, որ համարձակ լինելու և կողմնոչվելու պահն է, Մուրթքեն ասում է. «Ո՞վ գիտե, գուցե մի այսպիսի ժամանակի համար ես դու թագուհուության հասել» (Հմ.14): Անկախ նրանից՝ մենք խոսելու ենք անարդարության դեմ, թե ներելու ենք մեզ նեղություն պատճառած մեկին, Աստվածաշունչը վստահեցնում է, որ դժվար իրավիճակներում Աստված մեզ երբեք չի լքի (Եբ. 13. 5-6): Վախի ու դժվարության մեջ, երբ մենք օգնություն ենք ակնկալում Աստծուց, Նա «գործություն, սեր և ողջամտություն» է շնորհում՝ մեզ տված հանձնառությունը լիարժեք կատարելու համար (Բ.Տիմ. 1.7):

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ, որ հատուկ կոչում ես տվել ինձ: Օգնի՛ր, որ կարողանամ հավատքով հաղթահարել իմ վախերը: Ամեն:

Ասված մեզ հասուկ կոչ է արել: Մեզ մնում է դրան թափախանել համարձակորեն:

Ո՛վ Աստծու մեծության, իմաստության և գիտության խորություն: (Հռոմ. 11.33)

ԱՆՊԱՏՄԵԼԻ ՀԱՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրատի ու Լուսնի թագի միջև ուղեծրում երևում է մի աստղա-կերպ, որի արժեքը աստղաբաշխական թվերով է հաշվվում: Խոնականների տվյալներով՝ «Փսիխե-16» անունով այդ աստղակերպը բաղկացած է այնպիսի մետաղներից, ինչպիսիք են ոսկին, արծաթը, նիկելն ու պլատինը, որոնք չափազանց թանկարժեք են: Առայժմ հարստության այդ աղբյուրը պեղելու համար փորձեր չկան, թեև ԱՄՆ-ը նախատեսում է հետազոտական սարք ուղարկել այնտեղ: Անպատմելի հարստության խոստումը կարող է լինել թե՛ չարչարող, և թե՛ խափանող: Վստահաբար, ժամանակի ընթացքում կգտնվեն մարդիկ, որոնք կգառնան «Փսիխե-16»-ի գանձերին հասնող հերոսները: Իսկ ի՞նչ կարելի է ասել այն հարստության հեռանկարի մասին, որը հասանելի է մեզ: Մի՞թե բոլորը չեն գնում դրա հետևից: Բելով առաջին դարի Հռոմի եկեղեցուն՝ Պողոս առաքյալը խոսում է հասանելի հարստությունների մասին, որոնք կարող ենք գտնել Աստծո հետ մեր հարաբերություններում: Նա գրում է. «Ո՛վ Աստծու մեծության, իմաստության և գիտության խորություն» (Հռոմ. 11.33): Ապաժաշնչագետ Ջեյմս Դեննին այս հարստությունները բնութագրում է որպես «սիրո անքննելի հարստություն, որ տալիս է Աստծո հնարավորությունը...չատ ավելին անել, քան աշխարհի կարիքներն են»: Արդյո՞ք դա ավելին չէ, քան հեռավոր աստղակերպի ոսկու կտորները: Մենք կարող ենք պեղել Աստծո իմաստության հարստությունը, որ պարփակված է Իր խոսքում, քանի որ մեզ օգնում է Սուրբ Հոգին: Թող Աստված առաջնորդի մեզ պեղելու այդ հարստությունները, ավելի լավ ճանաչելու և գանձի պես պահելու:

Աղոթք - Հայր, Քո ճանապարհներին հետևելիս տու՛ր ինձ Քո իմաստությունն ու գիտելիքները, Քո դատողություններն ու ճանապարհները: Ամեն:

Մեր հարսությունն Աստված է: Ուսի կարելի է ավելի խորանալ Եւս սված հոգևոր հարսության մեջ:

Քեզ եմ աղաղակում, ո՛վ Տեր: (Յովհ 1.19)

ԱՂԵՏՆԵՐԻՆ Ի ՊԱՏԱՍԽԱՆ

1 717 թվականին ամենհի փոթորիկը օրեր շարունակ մոլեգնում էր՝ Հյուսիսային Եվրոպայում առաջացնելով ավերիչ ջրհեղեղներ: Հոլանդիայում, երմանիայում և Դանիայում հազարավոր մարդիկ զոհվեցին: Պատմությունը հայտնի է առնվազն մեկ տեղական կառավարման մարմնի հետաքրքիր արձագանքն այդ աղետին: Հոլանդիայի բռնիները քաղաքի իշխանությունը կոչ արեց ի պատասխան տարերային աղետի՝ աղոթքի օր ունենալ: Պատմաբանը հայտնում է, որ մարդիկ հավաքվում էին եկեղեցիներում, լսում քարոզներ, երգում սաղմոսներ և ժամերով աղոթում: Հովել մարգարեն նկարագրում է Հուդայի ժողովրդի դիմազրաված աղետը, որն էլ իր աղոթքի առիթն էր դարձել: Մորեխների հսկայական խումբը ծածկել էր երկիրը «ավերել նրա որթատունկը, կտրատել թզենին» (Հվլ. 1.7): Երբ ինքն ու իր ժողովուրդը ողբում էին ավերածությունների պատճառով, Հովելն աղոթեց և օգնություն խնդրեց. «Քե՛զ եմ աղաղակում, ո՛վ Տեր» (Հովել 1.19): Երկու դեպքում էլ թե՛ Հյուսիսային Եվրոպայի, և թե՛ Հուդայի ժողովուրդները աղետի մեջ էին, որոնք առաջացել էին մեղքի և աշխարհի ապակառնության պատճառով (Ծնն. 3.17-19, Հռոմ. 8. 20-22): Բայց մարդիկ նաև հասկացան, որ այդպիսի պահերին հարկավոր է աղոթքով դիմել Աստծուն (Հվլ.1.19): Եվ Աստված ասաց. «Սակայն հիմա... ձեր ամբողջ սրտով դեպի ինձ դարձե՛ք» (2.12): Դժվարություններ ու աղետներ դիմազրավելիս գուցե տառապանքով, գուցե ապաշխարությունմբ եկե՛ք դիմենք Աստծուն: Նա «ողորմած» ու «գլխառատ» (Հմ.13) մեզ Իրեն կմոտեցնի՝ ապահովելով անհրաժեշտ մխիթարությունն ու օգնությունը:

Աղոթք - Երկնավոր Հայր, հակառակ դժվարություններին ու աղետներին, օգնի՛ր ինձ, որ Քեզ դիմեմ ու Քո տված հույսը գտնեմ: Ամեն:

Աղետներ, նեղություններ մի՛ս էլ կլինեն, սակայն կարևորը Աստծուն վստահելն ու Նրան դիմելն է:



Պիտի սիրես քո մերձավորին, ինչպես քո անձը: (Ղուկ. 10.27)

ՄՈՆԱՏՐՈ ՈՍԿԵ ԶԿՆԻԿԸ

Լեյսի Աքոթը կենդանիների իր խանութում էր, երբ ուշադրությունը գրավեց ջրամանի հատակին անշարժ մնացած, թեփուկները սևացած ու մարմինը վերքերով պատված մի ձուկ: Լեյսին ձկանը, ի պատիվ Պինոկիո հեքիաթի հերոս կետածկան, անվանեց Մոնատրո և տեղավորեց «հիվանդանոց-ջրամանում», որի ջուրն ամեն օր փոխում էր: Զուկը կամաց-կամաց լավացավ, սկսեց աշխուժանալ, լողալ, թեփուկները նորից սկսեցին փայլել: Լեյսի խնամքի շնորհիվ Մոնատրոն նոր կյանք ստացավ:

Ղուկաս 10-ում Հիսուսը պատմում է մի ճամփորդի մասին, որը ծեծված, կողոպտված ու կիսամեռ ընկած էր ճամփեզրին: Քահանան ու ղևտացին անտարբեր անցան նրա կողքով: Իսկ մի սամարացի մոտեցավ, օգնեց, վերքերը կապեց, տեղափոխեց իջևանատուն, նույնիսկ վճարեց նրա կարիքների համար (Հմ.33-35): Սամարացուն անվանելով «ընկեր»՝ Հիսուսն իր ունկնդիրներին հորդորում է նույն կերպ վարվել:

Այն, ինչ Լեյսին արեց ձկան համար, մենք էլ կարող ենք անել մեր շրջապատում եղող մարդկանց համար: Մեր ճանապարհին հանդիպում են անօթևաններ, գործազուրկներ, հաշմանդամներ և միայնակներ: Թույլ տանք, որ նրանց կարիքը գրավի մեր ուշադրությունը և արձագանքենք բարությամբ, դրացիական հոգատարությամբ: Մի ազնիվ ողջույն, մի աման կերակուր, ափի մեջ դրված մի թղթաղբամ: Աստված էլ ինչպե՞ս կարող է մեզ օգտագործել իր սերը ուրիշների հանդեպ ցույց տալու համար: Մեր, որ կարող է ամեն ինչ փոխել:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ վերափոխել ես ինձ: Թող որ ես ընկերանամ հուսահատ ու կարիքավոր մարդկանց, որպեսզի նրանք բարեփոխվեն Քո զորությանը: Ամեն:

Մեր շուրջը մի՞տ է կլինեն կարիքավոր մարդիկ: Մեր սիրո դարձականությունն է օգնության ձեռք մեկնել նրանց:

Տերը քեզ հետ է լինելու, նա քեզ չի թողնի և չի լքի: (Բ.Օր. 31.8)

ՇՆՈՐՀՔ ՓՈՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Է ննի Ջոնսոն Ֆլինթը միջնակարգ դպրոցն ավարտելուց մի քանի տարի անց հոգաբորբի պատճառով հաշմանդամ դարձավ, գամվեց անվասայլակին և հույսը դրեց ուրիշների վրա, որ պետք է օգնեն իրեն: Գրում էր բանաստեղծութուններ ու հոգևոր երգեր, ձևավորել էր գրական փոքրիկ խմբակ, ընդունում էր շատ այցելուներ: Այդպիսի այցերից մեկից վերադառնալով՝ մի սարկավագուհի, որ հուսահատված էր իր ծառայութունից, էննիին գրեց, թե ինչու՞ է Աստված իրեն նման դժվարութուններ առաջադրել: Որպես պատասխան՝ էննին նրան մի բանաստեղծութուն ուղարկեց.«Աստված չի խոստացել, որ երկինքը միշտ կապույտ է լինելու, իսկ կյանքի ուղին՝ միշտ ծաղկավետ...»: Նա փորձառությամբ գիտեր, որ տառապանքը հաճախ է պատահում, բայց Աստված երբեք չի լքում նրանց, ում սիրում է: Փոխարենը Նա խոստացել է «շնորհք տալ փորձութունների ժամանակ: Օգնութունն ի վերուստ, անվրեպ համակրանք ու անմահ սեր»: Այդ բանաստեղծութունը հայտնի է որպես «Աստված խոստացել է» անունով հոգևոր երգ: Մովսեսը նույնպես տառապում էր, երբ հանդիպեց վեճերի, բայց գիտեր, որ Աստծո ներկայութունն իր հետ է: Երբ իսրայելցիների առաջնորդութունը փոխանցվեց Հեսուլին, նա երիտասարդին ասաց, որ ուժեղ ու քաջ լինի, որովհետև «Ձեր Տեր Աստվածը ձեզ հետ է լինելու» (Բ.Օր. 31.6): Մովսեսը, իմանալով, որ Իսրայելի ժողովուրդը ահավոր թշնամիների է հանդիպել, երբ մտան ու գրավեցին խոստացված երկիրը, ասաց Հեսուլին. «Մի՛ վախեցիր և մի՛ զարհուրիր» (Հմ.8) Քրիստոսի աշակերտները դժվարութունների կհանդիպեն, բայց Աստծո Հոգին քաջալերում է և երբեք չի լքում մեզ:

Աղոթք - Հայր, երբ հուսահատ ու տխուր եմ լինում, խնդրում եմ քո Հոգու միջոցով հիշեցրու՛, որ Դու ինձ երբեք չես լքի: Ամեն:

Երբ փորձությունների մեջ աղավիհում ես Ասծուն, վստահ եղի՛ր, որ Հոգին քաջալերում ու խրախուսում է քեզ:

Ամենայն խոնարհությամբ, հեզությամբ և համբերատարությամբ, սիրով միմյանց հանդուրժելով: (Եփ. 4.2)

ԱՍՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՍԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Քսաներկու տարվա մեր համատեղ կյանքից հետո երբեմն մտածում եմ, թե ինչպես է գոյատևում մեր ամուսնուկությունը: Ես գրող եմ, Մերինը՝ վիճակագիր: Ես բառերով եմ աշխատում, ինքը՝ թվերով: Ես գեղեցկուկություն եմ որոնում, նա՝ գործառնուկություն: Երկու տարբեր աշխարհներ: Մերինը շուտ է հասնում ժամադրուկություններին, ես երբեմն ուշանում եմ: Ես ճաշացանկից նոր բաներ եմ ընտրում, ինքը նույն ուտեսն է պատվիրում: Պատկերասրահում քսան ընկերացի անց ես նոր սկսում եմ խորանալ ցուցադրված աշխատանքների մեջ, Մերինն արդեն վաղուց ներքևի հարկի սրճարանում ինձ է սպասում: Մենք միմյանց սովորեցնում ենք համբերել: Ընդհանրուկություններ նույնպես ունենք. հումորի զգացումը, ճամփորդելու սերը և նույն հավատը, որն օգնում է մեզ աղոթել և անհրաժեշտուկության դեպքում փոխզիջումներ անել: Այս ընդհանրուկությունների շնորհիվ մեր տարբերուկությունները նույնպես օգտակար են դառնում: Մերինն ինձ սովորեցրել է հանգստանալ, ես իրեն օգնել եմ ավելի կարգապահ դառնալ: Փաստորեն մեր տարբերուկությունների վրա աշխատելը մեզ դարձրել է ավելի լավ մարդ: Պողոսը ամուսնուկությունը համեմատում է եկեղեցու հետ (Եփ. 5. 21-33) և դա հիմնավորում է լավ պատճառաբանուկությամբ: Ինչպես ամուսնուկությունը, այնպես էլ եկեղեցին միավորում է շատ տարբեր մարդկանց՝ նրանցից պահանջելով, որ զարգացնեն խոնարհուկություն և համբերուկություն (4.2): Եվ ինչպես ամուսնուկության պարագայում, այնպես էլ եկեղեցում հավատքն ու փոխադարձ ծառայուկության հիմքը օգնում են դառնալու միասնական ու հասուն (հմ. 11-13): Եթե հարաբերուկությունները լավ լինեն, կարող են գործել ի շահ մեզ՝ օգնելով, որ ավելի քրիստոսանման լինենք:

Աղոթք - Աղոթք - Հա՛յր, խնդրում ենք մեր տարբերուկություններն օգտագործել մեզ հասունացնելու համար: Ամեն:

Եկեղեցու անդամների միջև սարբերուկություններ միտ էլ կլինեն, բայց դրանք կարող են զարգացնել մեր ասվածադասուկությունը:

Աստծո ընդունելի զոհը կոտրված հոգին է. բեկված ու խոնարհ սիրտը, ո՛վ Աստված, դու չես անարգում: (Մաղմ. 51.17)

ԲԵԿՎԱԾ ՈՒ ԳԵՂԵՑԻԿ

Ամերիկացի նկարիչ Մակոտո Ֆուջիմուրայի «Նկատի՛ր շուշանները» աշխատանքը առաջին հայացքից ինձ թվաց պարզ, միատոն գծագրություն, որի հետնապատկերում թաքնված էր մի շուշան: Բայց հետո այն կենդանացավ, երբ իմացա, որ ներկված է ավելի քան 80 շերտ մանրացված հանքանյութերով (ճապոնական արվեստի ոճ, որ հայտնի է Նիհոնգա անունով): Ֆուջիմուրան դա անվանում է «դանդաղ արվեստ» և բացատրում, որ ինքը Ավետարանը դիտարկում է որպես «կոտրվածություն միջոցով գեղեցկություն ստեղծելու» արվեստ, ճիշտ այնպես, ինչպես Հիսուսի տառապանքը աշխարհին բերեց ամբողջականությունն ու հույս:

Աստված սիրում է վերցնել մեր կյանքի այն կողմերը, որտեղ մենք ջարդված ենք, կոտրված և ստեղծել մի նոր ու գեղեցիկ բան: Դավիթ թագավորը Աստծո օգնության կարիքն ուներ, երբ իր կործանարար արարքների պատճառով կյանքը բեկվել էր: Խոստովանելով, որ իր իշխանությունը չարաչահելով՝ ինքը խլել է ուրիշի կնոջը և կազմակերպել նրա ամուսնու սպանությունը, Դավիթը գրում է 51-րդ Մաղմոսը, որում Աստծուն է առաջարկում իր «կոտրված հոգին, բեկված ու խոնարհ սիրտը» (Հմ.17) և ողորմություն խնդրում:

Որպեսզի Աստված վերափոխեր նրա սիրտը (Հմ.10), Դավիթը նախ պետք է առաջարկեր իր կոտրված կտորները: Դա վշտի ու վստահության խոստովանությունն էր: Դավիթն իր սիրտը վստահեց հավատարիմ ու սիրող Աստծուն, որն Իր սիրով վերցնում է փշրվածը և վերածում գեղեցիկ բանի:

Աղոթք - Երկնավոր Հայր, իմ կոտրվածությունը վստահում եմ Քեզ՝ հավատալով, որ այն պիտի նորոգես ու դարձնես գեղեցիկ մի բան: Ամեն:

Եթե սիրոյ բեկված ու ջարդված է, բա՛ց արա այն Աստծո առաջ, և նա քեզ կնորոգի:

Բառնաբարը ցանկանում էր Յովհաննեսին էլ վերցնել, բայց Պողոսը մտածում էր, որ չպետք է վերցնեն իրենց հետ: (Գործք 15.37-38)

ԻՍ ԱՐԱՐՈՒՄԸ

Յոթ տարեկան Թոմաս Էդիսոնը չէր սիրում դպրոցը և այն-
քան էլ լավ չէր սովորում: Մի օր ուսուցիչներին մեկը
նույնիսկ նրան «մտամոլոր» անվանեց, ինչից հետո երեխան
դպրոց չգնաց: Մայրն էլ որոշեց, որ որդին տանը կշարունակի
կրթությունը: Մոր սիրո ու քաջալերանքի, ինչպես նաև Աստ-
ծո տված տաղանդի շնորհիվ Թոմասը դարձավ մեծ գյուտա-
րար: Ավելի ուշ նա գրել է. «Մա՛յրս է ինձ ստեղծել: Նա այն-
քա՛ն ճիշտ էր ու այնքա՛ն էր ինձ վստահում, որ ես հասկացա՝
կա մեկը, որի համար կարող եմ ապրել և հուսախաբ չանել»:

«Գործք առաքելոց»-ի 15-ում կարդում ենք, որ Բառնաբասն
ու Պողոսը միասին ծառայում էին իբրև միսիոներներ, մինչև
այն պահը, երբ տարաձայնություն ունեցան Հովհաննես-Մար-
կոսին իրենց հետ տանելու առիթով: Պողոսը դեմ էր, քանի որ
Մարկոսն ավելի վաղ «Պամփյուլիայում լքել էր իրենց» (Հմ.37-
38): Այդ պատճառով Պողոսն ու Բառնաբասը բաժանվեցին: Պո-
ղոսը վերցրեց Շիղային, Բառնաբասը՝ Մարկոսին: Բառնաբասը
պատրաստ էր երկրորդ հնարավորություն տալ Մարկոսին, և
այդ քաջալերանքը նպաստեց, որ նա որպես միսիոներ շարու-
նակեր իր ծառայությունը և հաջողություն հասնեք: Նա գրեց
Մարկոսի ավետարանը և հետագայում նույնիսկ Պողոսն ընդու-
նեց, որ Մարկոսի ծառայության կարիքն ունի (Բ.Տիմ. 4.11):

Մեզանից շատերը կարող են հետ նայել և իրենց կյանքում
տեսնել մեկին, որը հանդիպել ու օգնել է իրենց ճանապարհին:
Հնարավոր է, որ Աստված մեզ էլ կոչի նույնը անել մեկ ուրիշի
համար: Ու՞մ կարող ենք խրախուսել:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ քայլում ես իմ կողքին
և իմ կյանքում դրել ես մարդկանց, որոնց օգնությամբ ես
դարձել եմ այն, ինչ կամ: Ամեն:

**Անորոշությունների ու անհաջողությունների ժամանակ Աստված
մեր կողքին դնում է մարդկանց, որոնք օգնում են ու փաշալերում:**

Ինչպես որ հայրն է գթում իր որդիներին, այնպես Տերն է գթած իրենից վախեցողների հանդեպ: (Մաղմ. 103. 13)

ԿԱՐԵԿԻՑ ՀԱՅՐԸ

Ութ տարեկան Գաբրիելի ուղեղի ուռուցքը վերահասելուց հետո նրա գլխի մի կողմում նկատելի սպի մնաց: Դրանից նա շատ էր ճնշվում, և հայրը որոշեց օգնել որդուն: Նա իր գլխին դաջեց ճիշտ նմանատիպ սպի:

Ըստ սաղմոսերգուհի՝ սա շատ ազդու և կարեկից սիրո տեսակ է, որ Աստված ունի «Իր զավակների» հանդեպ (Մաղմ. 103.13): Օգտագործելով մարդկային կյանքից վերցված մի զրվագ՝ Դավիթը ցույց է տալիս Աստծո սերը: «Տիրոջ ողորմությունը հավիտյան իրենից վախեցողների վրա է, և նրա արդարությունը՝ որդիների վրա» (Հմ.17): Ինչպես որ երկրային հայրն է կարեկցում իր երեխաներին, այդպես էլ մեր Երկնավոր Հայրն է սեր ու հոգատարություն ցուցաբերում Իրենից վախեցողների հանդեպ: Նա ողորմած Հայր է, որ կարեկցում է Իր ժողովրդին:

Երբ թույլ ենք ու մեզ չսիրված ենք զգում մեր կյանքի սպիների պատճառով, հավատքով ստանանք մեր Հոր սերը մեր նկատմամբ: Նա այդ սերն ու ողորմածությունը ցույց է տվել՝ Իր Որդուն՝ «Իր անձը մեր փրկության համար տալով» (Ա.Հովհ. 3.16): Այս մեկ գործողությամբ մենք կարող ոչ միայն զգալ Նրա սերը մեր հանդեպ, այլև կարող ենք նայել դեպի Խաչը և տեսնել այն: Ուրախ չե՞ք, որ մենք ունենք մի Քահանայապետ, որ կարող է «չարհարակից լինել մեր տկարություններին» (Եբ. 4.15): Այդ ապացուցելու սպիներ Նա ունի:

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ Քո կարեկից սիրո համար: Թող որ սպիներս օգտագործեմ Քո փառքի համար: Ամեն:

Ոչ միայն գիտեմք, որ Ասված սիրում է մեզ կարեկից սիրով, այլև փորձառությամբ տեսնում ենք Նրա անսահման սերը Իր Որդու միջոցով:

Եվ ահա այսօր ես քեզ դարձնում եմ մի ամուր քաղաք, երկաթե սյուն և պղնձե պարիսպ ամբողջ երկրի դեմ: (Եր.1.18)

ԵՐԿԱԹԻ ՊԵՍ ԱՍՈՒՐ

Բնության մեջ գոյություն ունեն «գրահավոր բզեզներ»: Այդ միջատների արտաքին կոշտ պատյանը ոչ միայն պաշտպանում է նրանց գիշատիչներից, այլև ճնշման ներքո, փոխանակ ջարդվելու, ընդլայնվում է՝ դառնալով յուրատեսակ վահան: Գիտնականները պարզել են, որ այդ բզեզների պատյանը կարող է դիմանալ իր մարմնի վրա դրված ծանրությանը 4000 անգամ գերազանցող ճնշման ուժին:

Ինչպես այս միջատին է Աստված դարձրել կոպիտ ու դիմացկուն, այդպես էլ Նա տոկունություն տվեց Երեմիային: Իսրայելին պատգամներ տալիս մարգարեն մեծ ճնշումների էր ենթարկվում, ուստի Աստված խոստացավ նրան դարձնել «երկաթե սյուն և պղնձե պարիսպ» (Եր.1.18): Մարգարեն չպետք է կործանվի, խորտակվի ու պարտվի:

Իր կյանքի ընթացքում Երեմիայի դեմ կեղծ մեղադրանքներ եղան, նրան ձերբակալեցին, բանտարկեցին, ծեծեցին ու ջրհորը նետեցին, բայց նա ողջ մնաց: Նա հարատևեց՝ հակառակ նաև իր ներքին ծանր պայքարի: Կասկածն ու վիշտը պատել էին նրան: Մշտական մերժումն ու բաբելոնացիների ներխուժման վախը ավելացնում էին նրա հոգեկան ճնշումը:

Աստված շարունակաբար օգնում էր Երեմիային, որպեսզի նրա հոգին ու վկայությունը չսասանվեն: Երբ ցանկություն է առաջանում հրաժարվել Աստծո տված առաքելությունից ու հավատով ապրելուց, կարող ենք հիշել, որ Երեմիայի Աստվածը նաև մեր Աստվածն է: Նա կարող է մեզ դարձնել երկաթի պես ամուր, որովհետև Նրա «գորությունը կատարյալ է դառնում տկարության մեջ» (Բ. Կորնթ.12.9):

Աղոթք - Սիրելի Դայր, խնդրում եմ՝ զորացրու՝ ինձ այսօր, որ կարողանամ դիմագրավել մարտահրավերները: Ամեն:

Մեր հավատքին սղառնացող հանգամանքները կարող են կոտրել մեզ, սակայն հավատով կարելի է դրանք հաղթահարել:

Իմ օգնութիւնը Տիրոջից է, որ արարեց երկինքն ու երկիրը: (Սաղմ. 121.2)

ՓԱՅԼՈՒՆ ԹԱՓԱՌՈՂՆԵՐ

2 020-ի գարնանը Սան Դիեգոյի ծովափի ողջ երկայնքով գիշերային մթության մեջ ալիքները լուսաշող էին դարձնում Ֆիտոպլանկտոն անունով մանր օրգանիզմները: Անվանումն առաջացել է հունարեն *phytoplankton* բառից, որ նշանակում է «թափառող բույս»: Քանի որ այդ օրգանիզմները զարգանում են ֆոտոսինթեզի միջոցով, օրվա ընթացքում արևի լույսի ազդեցութեամբ առաջացնում են քիմիական որոշակի միացութիւններ, որոնք մթության մեջ դառնում են կապույտ լույս:

Հիսուսին հավատացողները դրախտի քաղաքացիներն են, որոնք նման են թափառող այդ էակներին: Երբ դժվարութիւնները խանգարում են մեր ծրագրերին, Սուրբ Հոգին զորացնում է մեզ՝ աշխարհի լույսին արձագանքելու Հիսուսի նման, որպեսզի կարողանանք խավարի մեջ արտացոլել Նրա պայծառ կերպարը: Ըստ Պողոսի՝ չկա ավելի արժեքավոր բան, քան Քրիստոսի հետ մեր մտերմութիւնն է, որ գալիս է Նրա հանդեպ ունեցած մեր հավատից (Փիլ. 3.8-9): Նրա կյանքն ապացուցել է, որ Հիսուսին ու Նրա հարության ուժը ճանաչելը փոխում է մեզ, ազդում մեր ապրելակերպի և փորձութիւնների հանդեպ մեր վերաբերմունքի վրա (Հմ. 10-16):

Ամեն օր Աստծո Որդու հետ ժամանակ անցկացնելով՝ մենք զինվում ենք Սուրբ Հոգու ճշմարտութեամբ, որն անհրաժեշտ է դիմակայելու համար այս երկրում առկա բոլոր մարտահրավերներին:

Աղոթք - Ողորմած Հիսուս, երբ դժվարութիւն մեջ լինեմ, խնդրում եմ ցոլա՛ իմ միջոցով և օգնի՛ր, որ ուրիշներին առաջնորդեմ դեպի Քեզ: Ամեն:

Մեր կյանքը լի է մարտահրավերներով, բայց Տեր Հիսուսի սկածնորհիով մենք փոխվում ենք և ուրիշներին առաջնորդում Նրա մոտ:

Արդ, ամեն ոք, ով լսում է իմ այս խոսքերն ու դրանք կատարում, կնմանեցնեմ մի իմաստուն մարդու, որն իր տունը կառուցեց ժայռի վրա: (Մատթ. 7.24)

ԵՐԿՈՒ ՏՈՒՆ

Մասնագետները երկու տների ամրությունն ստուգելու համար երրորդ աստիճանի փոթորկի պատրանք ստեղծեցին՝ օգտագործելով հզոր արագություն քամի առաջացնող սարքեր: Փորձարկման ընթացքում առաջին տունը երեքաց ու փլվեց, իսկ երկրորդը, որ կառուցված էր շինարարական կանոնների պահպանմամբ, մնաց հաստատուն՝ ընդամենը մի քանի աննշան վնասներով: Մասնագետներն իրենց ուսումնասիրությունն ամփոփեցին՝ հարցնելով. «Ո՞ր տանը կնախընտրես բնակվել»:

Ավարտելով թագավորական կյանքի արժեքների մասին իր ուսուցումը՝ Հիսուսն ասում է.«Արդ, ամեն ոք, ով լսում է իմ այս խոսքերն ու դրանք կատարում, կնմանեցնեմ մի իմաստուն մարդու, որն իր տունը կառուցեց ժայռի վրա» (Մատթ. 7. 24): Ի հակադրություն այն մարդու, որ լսում է, բայց չի հնազանդվում, «կնմանվի մի անխելք մարդու, որն իր տունը կառուցեց ավազի վրա» (Հմ.26): Մեր պատմության ամուր և թույլ տները նույն բանն են խորհրդանշում. ամուր հիմք ունեցող դիմացավ ուժեղ քամիներին, իսկ մյուսը փլվեց: Հիսուսն իրեն լսողներին ներկայացրեց երկու տարբերակ և տվեց ընտրություն հնարավորություն. կառուցել իրենց կյանքը ամուր հիմքի, կամ անկայուն ավազի վրա: Մենք նույնպես ընտրություն ենք կատարելու: Արդյո՞ք մեր կյանքը կառուցում ենք Հիսուսի վրա և հնազանդվում ենք Նրա խոսքերին, թե՞ անտեսում ենք Նրա հրահանգները: Սուրբ Հոգու օգնությամբ մենք կարող ենք ընտրել մեր կյանքը Քրիստոսի վրա կառուցելու տարբերակը:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, օգնի՛ր ինձ, որ մնամ Քեզ հետ, որպեսզի երբ փոթորիկներ լինեն, ես, Քո շնորհքով հաստատված, հավատարիմ մնամ Քեզ: Ամեն:

Երբ լսեմք ու հնազանդվեմք Տե՛ր Հիսուսի խոսքերին, մեր կյանքը կլինի հաստատուն և կդիմանա ամեն ճեսակ փոթորկի:

Աստծո օրենքներն ու կանոնները սովորեցրու Քո որդիներին ու որդիների որդիներին: (Ք.Օր. 4.9)

ՓՈԽԱԼՑԵԼ ԸՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Համավարակի պատճառով շատ տատիկներ ու պապիկներ հնարավորություն չունենին շփվելու իրենց թոռնիկների հետ և փորձում էին նրանց հետ կապ հաստատելու այլ ձևեր գտնել: Վերջերս կատարված հարցումը ցույց է տվել, որ նրանցից շատերն իրենց պատգամները թոռնիկներին են հասցրել բջջային կապի, շատերն էլ՝ սոցիալական ցանցերի հարթակների կամ տեսազանգի միջոցով:

Ծնողների, տատիկների ու պապիկների համար իրենց զավակների վրա ազդելու լավագույն միջոցն, իհարկե, Աստվածաշնչի ճշմարտությունների փոխանցումն է: Բ Օրենքի 4-ում Մովսեսը Աստծո ժողովրդին պատվիրում է «չմոռանալ այն բաները», որ տեսել էին Աստծո մասին և «չլինի թե քո սրտից դրանք դուրս գան» (Հմ.9):

Այդ բաների մասին պատմելով իրենց որդիներին ու թոռներին՝ նրանց հնարավորություն կտրվի հարգել Տիրոջը (Հմ.10) և ապրել ըստ Նրա տված ճշմարտության:

Մեր ընկերների ու ընտանիքի հետ հարաբերությունները, որ մեզ տալիս է Աստված, անշուշտ, նախատեսված են վայելելու համար: Աստծո ծրագրով դրանք նաև կոչված են դառնալու իր իմաստությունը, որ հարկավոր է փոխանցել սերնդեսերունդ՝ «արդարության մեջ խրատելու» և «ամեն բարի գործի» համար նրանց գինելու (Բ.Տիմ. 3. 16-17) նպատակով:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ հավատքի ժառանգության համար, որ Դու ես փոխանցել ինձ: Խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ, որ սիրով կարողանամ այն փոխանցել ուրիշներին: Ամեն:

Օգտագործենք արդիական բոլոր միջոցները՝ Աստծո ճշմարտությունը նոր սերունդներին փոխանցելու համար:

Հովիադա քահանայի բոլոր օրերին Հովասն ուղիղ գործեց տիրոջ առաջ:
(Բ. Մնաց. 24.2)

ԿՅԱՆՔԻ ԸՆԹԱՅՔԸ

«Երիտասարդ արվեստագետին հուզող շատ հարցեր կան,-ասում է «Հռենոսի վրայով» երաժշտախմբի երգիչ-երգահան Լինֆորդ Դեթվայերը: - Մեկն այն է, թե ի՞նչ պետք է անել հռչակավոր դառնալու համար»: «Եթե նպատակ ունես, քո ներսից դռներ են բացվում դրսի կործանարար ուժերի դեմ», - ասում է երգիչն ու պատմում, որ ինքն ու կինն ընտրել են երաժշտական ոչ այնքան փայլուն ճանապարհ, որի մեջ իրենք աճում են ամբողջ կյանքի ընթացքում:

Հովիադա անուներ շատ հայտնի չէ, բայց հոմանիչ է ողջ կյանքը Աստծուն նվիրելուն: Նա որպես քահանա ծառայել է Հովաս թագավորի օրոք, որին շատ է օգնել երկիրը կառավարելիս: Երբ Հովասը յոթ տարեկան էր, Հովիադան շատ օգնեց, որ նա դառնա երկրի օրինական թագավոր (Դ. Թագ. 11. 1-16): Բայց դա իշխանություն գրավում չէր: Հովասի թագադրման ժամանակ «Հովիադան ուխտ դրեց Տիրոջ և թագավորի ու ժողովրդի միջև» (Հմ.17): Նա կատարեց իր խոստումը՝ իրականացնելով խիստ կարևոր ու անհրաժեշտ բարեփոխումներ: «Հովիադայի բոլոր օրերին միշտ ողջակեզներ էին մատուցում Տիրոջ տանը» (Բ.Մնաց. 24.14): Իր նվիրվածության համար «նրան թաղեցին Դավթի քաղաքում, թագավորների մոտ» (Հմ.16):

Յուզին Պետերսոնը այդպիսի աստվածանվեր կյանքն անվանում է «տևական հնազանդություն՝ նույն ուղղությամբ»: Այդպիսի հնազանդությունը հազվագյուտ բան է փառքին, ուժին ու առաջխաղացմանը միտված աշխարհում:

Աղոթք - Սիրելի Հայր, օգնի՛ր ինձ, որ իմ կյանքում, անցողիկ բաների փոխարեն, հետևեմ Քեզ և Քո իմաստնությանը: Ամեն:

Ասված մեզ կոչ է անում ձեռն մեր կյանքի ընթացքն ու փայլել իր արահեսներով:

Որովհետև հավատով ենք ընթանում, և ոչ թե տեսողությամբ: (Բ. Կորնթ. 5.7)

ՎԱՅՐԵՋՔԻ ԿԵՏ

Իմպալա անունով աֆրիկյան այծքաղը կարող է ցատկել մինչև տասը ոտնաչափ բարձրություն մեզ համար: Սա անհավանական բան է, և անկասկած շատ կարևոր է աֆրիկյան բնության մեջ գոյատևելու համար: Բայց նաև տեսնում ենք, որ կենդանաբանական այգիներում այդ կենդանիները պահվում են ընդամենը երեք ոտնաչափ պատի հետևում: Ինչպե՞ս կարող է այդ ցածր պատը պահել այս կենդանուն: Պարզվում է՝ հնարավոր է, որովհետև իմպալաները երբեք չեն ցատկում, մինչև չտեսնեն վայրէջքի կետը: Պատը պահում է այդ կենդանիներին, քանի որ նրանք չեն կարող տեսնել, թե ի՞նչ է այն կողմում:

Մարդիկ էլ այդ առումով շատ չեն տարբերվում այդ այծքաղներից: Նախքան քայլ անելը՝ մենք ուզում ենք իմանալ արդյունքը: Բայց հավատքի կյանքը հազվադեպ է այդպես գործում: Կորնթացիներին ուղղված նամակում Պողոսը հիշեցրեց. «Որովհետև հավատով ենք ընթանում և ոչ թե տեսողությամբ» (Բ. Կորնթ. 5.7):

Հիսուսը մեզ սովորեցրել է աղոթել.«Քո կամքը լինի ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա» (Մատթ. 6.10): Բայց դա չի նշանակում, որ մենք նախապես իմանալու ենք արդյունքները: Հավատով ապրել նշանակում է վստահել Նրա բարի նպատակներին, նույնիսկ երբ դրանք պատված են առեղծվածով: Կյանքի անորոշությունների մեջ մենք կարող ենք վստահել Նրա հավատարիմ սիրուն: Անկախ նրանից, թե կյանքը ինչ է պատրաստել մեզ համար, «ձգտում ենք հաճելի լինել Նրան» (Բ. Կորնթ. 5.9):

Աղոթք - Հայր, հաճախ անորոշությունից ու վախից սառչում եմ: Աղոթում եմ՝ առաջնորդի՛ր քայլերս, քանի որ վստահում եմ քեզ, և Քո բարի կամքը կկատարվի: Ամեն:

Երբ դայաբոլն ենք աղագայի անորոշության դեմ, խնդրենք Աստուծոց, որ օգնի մեզ՝ վստահել իրեն:

Իմ օգնությունը Տիրոջից է, որ արարեց երկինքն ու երկիրը: (Սաղմ. 121. 2)

ԵՐԲ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆԱՍ

Երկուշաբթի էր, բայց ընկերս՝ Ջիա-Մինգը աշխատանքի չէր շտապում ու տան մաքրությունը էր զբաղված: Թագավարակի պատճառով նրանց ընկերությունը փակվել էր, և ապագայի հանդեպ անորոշությունը վախով էր լցնում նրա սիրտը: Ընտանիքը պահել էր պետք, ու նա մտածում էր, թե ու՞ր կարող է դիմել օգնության համար:

121-րդ սաղմոսում Երուսաղեմի ուխտավորները նույնպես նման խնդրի առաջ էին կանգնած. որտեղի՞ց օգնություն գտնել: Ծամփորդությունը դեպի Սուրբ քաղաք՝ Սիոն լեռ, երկար էր ու վտանգավոր, ճամփորդները պետք է դիմանային դժվարին մագլցումին: Այդ դժվարությունները նման են մեր կյանքի մարտահրավերներին (հիվանդություն, կորուստներ, մարդկային հարաբերություններ, աշխատավայրի ճնշումներ, նյութական դժվարություններ, գործազրկություն): Մենք կարող ենք քաջալերվել այն ճշմարտությամբ, որ Ինքը՝ երկնքի ու երկրի Արարիչն է մեզ օգնում (Հմ.2): Նա հետևում է մեր կյանքին (Հմ.3. 7-8) և գիտի, թե ինչի կարիք ունենք: Եբրայերեն «չամար» (հսկում) բառը նշանակում է «պահպանել»: Այսինքն՝ տիեզերքի Արարիչը մեր պահպանն է, մենք Նրա պահպանության ներքո ենք: Վերջերս Ջիա-Մինգը տեղեկացրեց, որ Աստված հոգացել է իր և իր ընտանիքի մասին. ինքը ուսուցչության աշխատանք է գտել:

Վստահելով ու հնազանդվելով Աստծուն՝ կարող ենք հույսով նայել առաջ՝ իմանալով, որ Նրա իմաստնությունը ու սիրտը սահմաններում ենք:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ կյանքիս ճանապարհներին իմ օգնության աղբյուրը Դու ես: Ամեն:

Ամփիժելի է, որ Աստծո օգնության կարիքն ունենի այսօր և միշտ:
Վստահ լինենք, որ Նա է երկնքի ու երկրի Արարիչը և մեր օգնությունը:

Չունեք, որովհետև չեք խնդրում: (Յակ. 4.2)

ՄԻԱՅՆ ՅԱՐՑՐՈՒՄ

Մեր տան նկուղից հնչում էին կնոջս՝ Շերլինի ուրախության ճիչերը: Նա ավարտել էր տեղեկագրի պատրաստումը, որով զբաղված էր և անհանգստանում էր, թե ժամանակին չի հասցնի վերջացնել: Դրա համար աղոթեց Աստծուն, նաև դիմեց ընկերների օգնությունը և համատեղ ջանքերով գործն ավարտվեց:

Ճիշտ է, տեղեկագրի պատրաստումը փոքր բան է կյանքում, բայց այդ փոքր թվացող բաները նույնպես կարող են անհանգստություն առաջացնել: Մեկը ծնող է, որն առաջին անգամ հանդիպում է երեխայի դաստիարակության դժվարություններին, մեկ ուրիշը ուսանող է, որն ակադեմիական մարտահրավերներ է հաղթահարում, մեկ ուրիշն էլ տան կամ աշխատանքի հետ կապված հարցեր ունի: Երբեմն մենք անտեղի անհանգստանում ենք, որովհետև Աստծուց օգնություն չենք խնդրում (Հակ. 4.2): Փիլիպպեցիներին ուղղված նամակում Պողոսը նշում է, թե կարիքի ժամանակ որն է պաշտպանություն առաջին գիծը. «Ոչնչի համար մի՛ մտահոգվեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությունը՝ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն» (Փիլ. 4.6): Նման պարագաներում հիշենք «Ինչպիսի բարեկամ է Տերը» հոգևոր երգի բառերը. «Հաճախ իզուր կորցնում ենք խաղաղությունը, երբ մոռանում ենք աղոթքի մասին: Կա՞ մեկը, որ Հիսուսի չափ քեզ ցավակից լինի: Վստահի՛ր նրան, հոգսերդ աղոթքով Տիրոջը հասցրու՛ք»:

Աղոթք - Հայր, ների՛ր ինձ, որ աղոթքով իմ բոլոր հոգսերը Քեզ չեմ հասցնում: Օգնի՛ր, որ կարողանամ ուրիշների էլ դիմել և օգնություն խնդրել: Ամեն:

Երբ ցավերից ու նեղություններից ընկձվե՛ք ու ծնվե՛ք, հի՛ստի, որ կարող ե՛ք օգնության համար դիմել Աստծուն:

Եթե Տերը կամենա, ու ապրենք, այս կամ այն բանը կանենք: (Հակ. 4.15)

ԾՐԱԳՐԵՐ ՈՒ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ

2000 թվականին փոստի միջոցով ֆիլմերի վարձակալու-
թյամբ զբաղվող Նետֆլիքս ընկերությունը ղեկավարություն-
նը ոլորտի առաջատարին՝ Բյուրաստերին առաջարկեց 50 մի-
լիոն դոլարով գնել Նետֆլիքսը: Վերջինն ուներ մոտ 300 հա-
զար բաժանորդ, այն դեպքում, երբ Բյուրաստերից օգտվողնե-
րի թիվը միլիոններով էր հաշվվում: Սակայն այդ հսկա ընկե-
րությունը իր փոքր մրցակցին գնելու առիթը բաց թողեց, և
արդյունքում այսօր Նետֆլիքսն ունի ավելի քան 180 միլիոն
բաժանորդ ու հսկայական կարողություն, մինչդեռ Բյուրաս-
տերը անանկացել է: Ոչ ոք չի կարող իմանալ ապագան: Մենք
փորձում ենք հավատալ, թե մեր կյանքը ինքներս ենք վերահս-
կում, և մեր ծրագրերն էլ մեզանից են կախված: Սակայն Հա-
կոբոսն ասում է. «Կյանքը մի գոլորչի է, որ մի կարճ ժամա-
նակ երևում, իսկ հետո անհետանում է» (Հակ. 4.14): Կյանքը
մեր պատկերացրածից շատ ավելի կարճ է, արագ ու դյուրա-
բեկ: Գործողություններ ծրագրելը կարևոր է, անշուշտ, բայց
սխալն այն ենթադրությունն է, թե մենք ենք վերահսկում ամեն
ինչ: Ահա, թե ինչու Հակոբոսը մեզ զգուշացնում է.«չպարծե-
նանանք ամբարտավանությունամբ, ամեն այդպիսի պարծանք չար
է» (Հմ.16): Այս մեղսավոր սովորությունից խուսափելու միջո-
ցը Աստծուն երախտապարտ լինելն է: Երախտագիտությունն է
«ամեն բարի և կատարյալ պարգևի» (1.17) աղբյուրը: Հետո,
երբ դիմում ենք Աստծուն, մենք չենք խնդրում, որ Նա օրհնի
մեր ծրագրերը, այլ օգնի մեզ միանալու Իրեն՝ Իր բոլոր արած-
ների մեջ: Ահա թե ինչ է նշանակում «Եթե Տերը կամենա»
աղոթքը (4.15):

Աղոթք - Սիրելի՛ Հիսուս, Քեզ եմ հանձնում իմ ծրագրերը: Օգ-
նիր, որ վստահեմ Քեզ, որովհետև Դու երբեք չես ձախողում:
Ամեն:

**Հաճախ փորձում եմ վերահսկել մեր կյանքը և ձախողվում եմ:
Հանձնվեմ Աստծուն և վստահեմ միայն Նրան:**

Յո՞ղոսը մնաց նրա մոտ: (Յո՞ղոս. 1.14)

ՍԻՐԻՐ ԵՎ ԱՊԱՎԻՆԻՐ ԱՍԾՈՒՆ

Զաքը սիրված, խելացի և ուրախ տղա էր, բայց անսպասելի ընկավ դեպրեսիայի մեջ: Նրա ինքնասպանությունից հետո մայրը՝ Լորին ասել է. «Դժվար է հասկանալ, թե ինչպես կարող է մեկը, որի կյանքում շատ իրադարձություններ են լինում, հասնել այդ կետին: Զաքը ինքնասպանության հակված էր»: Պահեր են լինում, երբ Լորին սիրտը բացում է Աստծո առաջ և ասում, որ ինքնասպանության պատճառած ցավը բոլորովին այլ տեսակի ցավ է: Բայց ինքն ու իր ընտանիքը ուժ ստանալու համար սովորել են ապավինել Աստծուն և ուրիշներին: Այժմ նրանք իրենց ժամանակն ու ջանքերն օգտագործում են սիրելու և օգնելու համար այն մարդկանց, ովքեր այդ նույն ցավն են հաղթահարում:

Լորիի կարգախոսն է դարձել. «Մեր և հակում»: Նա այդ դադափարը տեսնում է Հռութի պատմության մեջ: Նոյեմին կորցրեց իր ամուսնուն ու երկու որդիներին, որոնցից մեկն ամուսնացած էր Հռութի հետ (Հռ. 1.3-5): Դառնացած ու սգակիր կինը Հռութին ստիպում էր վերադառնալ իր հայրական տուն, բայց Հռութը, թեև ինքն էլ էր վշտացած ու ընկճված, «մնաց նրա մոտ» և ուխտեց նրա հետ լինել ու խնամել միշտ (Հմ. 14-17): Նրանք վերադարձան Նոյեմիի հայրենիք՝ Բեթղեհեմ, որտեղ Հռութը օտար էր: Սակայն, տեսնելով այդ կանանց՝ իրար սիրելու և իրար հետ մնալու հակումը, Աստված ապահովեց նրանց բոլոր կարիքները (2. 11-12):

Մեր վշտերի մեջ Աստծո սերը մնում է հաստատուն: Մենք միշտ պետք է նրան հենվենք, ինչպես ապավինում ու սիրում ենք նաև ուրիշներին:

Աղոթք - Զայր, երախտապարտ եմ Քո հավատարիմ սիրո և հոգատարության համար: Ինձ օգտագործիր, որ ուրիշներին խրախուսես քեզ վստահել: Ամեն:

Վճճի, ցավի ու նեղության դահին ուժ ու մխիթարություն գտնելու համար արժե վստահել Ասծուն:

Պարարտ հողի մեջ սերմանվածները ցրանք են, որոնք լսում են խոսքը, ընդունում և պտուղ են տալիս: (Մարկ. 4.20)

ԺԱՄԱՆԱԿԻ ՍԵՐՄԵՐԸ

1 879-ին ամերիկացի բուսաբան Ուիլյամ Բիլին գիտող մարդիկ հավանաբար կարծում էին, որ նա ցնդել է: Նա վերցնում էր քսան շիշ, լցնում դրանք տարբեր սերմերով ու թաղում հողում: Մարդիկ այդպես էին կարծում, որովհետև չգիտեին գիտնականի արածի իմաստը: Իսկ նա ստուգում էր սերմերի կենսաուսնակութունը: Յուրաքանչյուր քսան տարին մեկ հարկավոր է մի շիշ հանել հողից, ցանել դրանում եղած սերմերը և հետևել, թե դրանցից որն է բողբոջելու:

Հիսուսը շատ է խոսել սերմ ցանելու մասին՝ հաճախ այն համեմատելով «խոսքի» տարածման հետ (Մարկ. 4.15): Նա սովորեցրել է, որ որոշ սերմեր խլում է սատանան, որոշ մասը, խոր հիմք չունենալով, չեն արմատավորվում, մի մասն էլ աշխարհի հոգսերի ու նեղութունների մեջ են կորչում (Հմ. 15-19): Երբ մենք տարածում ենք բարի լուրը, մեզանից կախված չէ, թե որ սերմերը կպահպանվեն: Մեր գործն ուղղակի ավետարանի սերմանումն է, երբ ուրիշներին պատմում ենք Հիսուսի մասին:

2021-ին գիտնականները պեղեցին Բիլի շերտից ևս մեկը: Սերմերը ցանվեցին, և դրանց մի մասը, ավելի քան 140 տարի գոյատևելուց հետո, բողբոջեցին: Քանի որ Աստված գործում է մեր միջոցով, և մենք մեր հավատը կիսում ենք ուրիշների հետ, երբեք չենք իմանա, որ մեր փոխանցած խոսքը արմատավորվում է, կամ երբ է արմատավորվում: Բայց մենք պետք է քաջալերվենք, որ բարի լուրը սերմանելը նույնիսկ երկար տարիներ անց կարող է ստացվել մեկի մոտ, որն «ընդունում և պտուղ է տալիս» (4.20):

Աղոթք - Սիրելի՛ Հայր, խնդրում եմ ինձ տու՛ր քաջություն, որ կարողանամ Հիսուսի բարի լուրը հայտնել ընկերներիս, գործընկերներիս: Ամեն:

Եթե հավատում եմ Հիսուսին, եկե՛ք Նրա բարի լուրը հայտնեմ մեզ քոջադասողներին՝ այն ցանելով որդես սերմ, և հուսանք, որ Տիրոջ շնորհով դրանք կօ՛ղեն, կաճեն ու տղուղ կսան:

Դուք եք աշխարհի լույսը: Մի քաղաք, որ լեռան վրա է կառուցված, չի կարող թաքնվել: (Մատթ. 5.14)

ԼՈՒՅԱԸ ՎԱՌՎԱԾ ԹՈՂՆԵԼ

Պանդոկների ցանցի գովազդում մթուժյան մեջ մի փոքրիկ շենք է երևում և ուրիշ ոչինչ: Տեսարանի միակ լույսը թափանցում է շենքի մուտքի դռան փոքրիկ լապտերից: Այն բավարար լուսավորում է, որ այցելուն կարողանա բարձրանալ աստիճաններով ու մտնել շենք: Գովազդն ավարտվում է «Մենք ձեզ համար լույսը վառած ենք թողնում» արտահայտությամբ: Գավիթի լույսը ասես ողջունի նշան լինի հոգնած ճամփորդների համար, որ հիշեցնում է, թե կա մի հարմար վայր, որտեղ կարող են մնալ ու հանգստանալ: Լույսը հրավիրում է անցորդներին ներս մտնել՝ փախչելով մութ ու հոգնեցուցիչ ճանապարհորդությունից: Հիսուսն Իրեն հավատացողներին ասում է, որ կյանքը պետք է նման լինի այդ ողջունող լույսին.«Դուք եք աշխարհի լույսը: Մի քաղաք, որ լեռան վրա է կառուցված, չի կարող թաքնվել» (Մատթ. 5.14): Որպես հավատացյալներ՝ մենք պետք է լուսավորենք մութ աշխարհը:

Նա ուղղում ու գորացնում է մեզ՝ ասելով.«Թող ձեր լույսը մարդկանց առաջ փայլի, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է» (Հմ.16): Երբ մեր լույսը վառված ենք թողնում, նրանք ողջունելի են զգում և գալիս են մեզ մոտ՝ աշխարհի միակ ճշմարիտ լույսի՝ Հիսուսի մասին ավելին իմանալու (Հովհ. 8.12): Հոգնած ու մութ աշխարհում Նրա լույսը միշտ վառված կմնա:

Լույսը վառված թողե՞լ ես: Երբ Հիսուսը քո միջից այսօր փայլի, մյուսները նույնպես կտեսնեն և կսկսեն արտացոլել Նրա լույսը:

Աղոթք - Հիսու՛ս, օգնի՛ր ինձ, որ փայլեմ պայծառությամբ, որպեսզի ուրիշները Քեզ մոտենան: Ամեն:

Եկե՛ք Հիսուսի լույսը արժացուցե՛մք մեզ Երջանասողների վրա, և ոչինչ թող չխանգարի դա անելու:

Որովհետև շատ իմաստության մեջ շատ վիշտ կա, և գիտությունն ավելացնողը տրտմությունն էլ է ավելացնում: (Ժող. 1. 18)

ԵՐԲ ԻՍԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՑԱՎ Է ՊԱՏՃԱՌՈՒՄ

25 օր Մեծ ձորում լաստանավով նավարկելուց հետո Ջաք էլզերըն ու իր ընկերները կանգ առան գետափին: Լաստերը տանելու եկած մարդը նրանց պատմեց COVID-19-ի համավարակի մասին: Կարծեցին, թե մարդը կատակում է, բայց երբ դուրս եկան ձորից, նրանց հեռախոսները միացան, և ճանապարհորդները տեսան իրենց ծնողների ուղարկած հաղորդագրությունները: Ջաքն ու ընկերները ապշել էին և այդ ամենը իմանալուց հետո՝ նույնիսկ ուզում էին կրկին գետ վերադառնալ:

Աշխարհում գիտությունը հաճախ ցավ է պատճառում: Ժողովողի իմաստուն ուսուցիչը նկատում է, թե «շատ իմաստության մեջ շատ վիշտ կա» (1.18): Ո՞վ չի նախանձել մանկան երջանիկ անգիտությանը, երբ նա անտեղյակ է ազգայնամոլությանից, բռնությունից ու հիվանդություններից: Արդյո՞ք մենք էլ ավելի երջանիկ չէինք մեծանալուց, մեր թուլությունների ու արատների մասին իմանալուց, մեր ընտանիքի գաղտնիքների՝ հորեղբոր շատ խմելու, ծնողների ամուսնալուծության պատճառների մասին իմանալուց առաջ:

Իմացությունից առաջացած ցավը չի կարելի հեռացնել: Բայց կա ավելի բարձր գիտելիք, որ մեզ տալիս է դիմանալու, նույնիսկ զարգանալու ուժ: Դա Աստծո խոսքն է, այն լույսը, որ շողում է խավարում (Հովհ. 1.1-5): Նա «Աստծուց մեզ համար դարձավ իմաստնություն, արդարություն, սրբություն և փրկություն» (Ա.Կորնթ. 1.30): Քո ցավը պատճառ կարող է դառնալ, որ վազես Հիսուսի մոտ: Նա քեզ կճանաչի ու կհոգա Քո մասին:

Աղոթք - Հիսու՛ս, ցավից հաճույք չեմ ստանում, բայց եթե այն ինձ բերում է Քեզ մոտ, արժի, որ ցավ զգամ: Ամեն:

Եթե կա մի բան, որ չես ուզում ունենալ, աս՛ր այն Հիսուսի մոտ: Ինձը կկրի այն:

Սեր մեկտեղ հավաքվելը զանց չառնենք,...այլ միմյանց քաջալերենք: (Եբր. 10. 25)

ԵՐԲ ՄԻԱՍԻՆ ՀԱՎԱՔՎԵՆՔ

Երջանկուլթյան համաշխարհային տեղեկագրի համաձայն՝ աշխարհի ամենաերջանիկ երկիրը Դանիան է: Հակառակ իրենց տեղական ու մուսլ ճմեռներին՝ դանիացիները հաճախ են բարեկամներով հավաքվում տաք խմիչք կամ մի հաճելի ուտելիք վայելելու: Այդպիսի պահերին նրանց օգտագործած հիմնական արտահայտությունն է «Ի՛նչ ուրախ ենք», որը ցույց է տալիս ոչ միայն այդ մարդկանց զգացումները, այլև այն, թե ինչպես են նրանք կարողանում հավասարակշռել արևի լույսի պակասը, որ իրենք ունեն ավելի հարավում ապրողների համեմատ: Նրանց սրտերը սնուցվում են սիրելիների հետ համեստ սեղանի շուրջ հավաքվելով: Եբրայեցիների գրքի հեղինակը խրախուսում է որպես համայնք հավաքվել մեկտեղ: Ընդունելով, որ եղանակից ավելի կարևոր մարտահրավերներ ու դժվարություններ կլինեն, նա Քրիստոսին հետևողներից պահանջում է հավատքով հարատևել: Թեև Աստված վստահեցրել է, որ մենք ընդունված ենք Փրկչի հանդեպ մեր ունեցած հավատի միջոցով, մենք կարող ենք պայքարել ամոթի, կասկածի կամ հակառակուլթյան դեմ: Միայն հավաքվելով մենք կարող ենք միմյանց քաջալերելու հնարավորություն ունենալ: Ընկերակցելով է, որ կկարողանանք «միմյանց սիրո ու բարի գործերի մղել», որոնք կամրապնդեն մեր հավատքը (Եբր.10. 24):

Իհարկե, բարեկամների հետ հավաքվելը չի երաշխավորում, որ բարձր հորիզոնական կզբաղեցնենք երջանկուլթյան տեղեկագրում, բայց Աստվածաշունչն առաջարկում է այդ միջոցը՝ կյանքի ընդհանուր պատրանքների ներքո մեզ հավատքով պահելու համար:

Աղոթք - Շնորհակալ եմ, Հայր Աստված, որ կարող եմ քաջալերել ուրիշ հավատացյալների և միաժամանակ քաջալերվել նրանցից, երբ հավաքվում ենք միասին: Ամեն:

Ուրիշների հետ հավաքվելը մեզ փառալերում ու կարողություն է տալիս բաց օրով միմյանց խրախուսելու:



Թող ձեր գոտիները մեքքներիդ կապված լինեն, ու ճրագները՝ վառված: (Ղուկ.12.35)

ՄՈՍԵՐ ՎԱՌԵԼ

1 780 թ. մայիսի 19-ն էր: Կեսօր էր, բայց արևը դեռ չէր երևում: Հավանաբար խավարի պատճառը Կանադայի անտառային հրդեհներից առաջացած թանձր ծուխն էր, սակայն շատերը մտածում էին, որ դա կարող է նաև դատաստանի օրը լինել: Քոնեկտիկուտի նահանգային խորհուրդը նիստ էր գումարել, և ոմանք մտածում էին մթուժյան պատճառով այն հետաձգելու մասին: Բայց Աբրահամ Դեվլըբորդն ասաց. «Ես դեմ եմ հետաձգելուն: Եթե դատաստանի օրը չի մոտենում, ուրեմն պատճառ չկա նիստը հետաձգելու, իսկ եթե մոտենում է, ապա թող ինձ տեսնեն իմ պարտականությունը կատարելիս: Ուստի ես ուզում եմ, որ մոմեր բերվեն»:

Դեվլըբորդի այդ ցանկությունը՝ Տիրոջ երկրորդ գալստյան օրը հավատարմորեն իր գործը կատարելու վիճակի մեջ լինելու մասին Տեր Հիսուսի խոսքերը գործնականացնելու օրինակ է. «Թող ձեր գոտիները մեքքներիդ կապված լինեն, ու ճրագները՝ վառված: Եվ դուք այն մարդկանց նման եղեք, որոնք իրենց տիրոջն են սպասում, թե նա հարսանիքից երբ կվերադառնա, որպեսզի երբ գա ու դուռը բախի, իսկույն բացեն: Երանի՛ այն ծառաներին, որոնց արթուն կգտնի տերը, երբ գա» (Ղուկ. 12. 35-37):

Ցերեկ թե գիշեր, միշտ լավ կլինի ծառայել մեր Փրկչին: Նույնիսկ երբ խավարն է պատում, Նրա խոստումները հաստատուն են մնում: Ինչպես մոմերը խավարում, թող մեր «լույսը մարդկանց առաջ փայլի, որպեսզի տեսնեն» (Մատթ. 5.16) և սիրեն ու ծառայեն Իրեն:

Աղոթք - Շու՛տ եկ, Տե՛ր Հիսուս: Աղոթում եմ, որ այդ օրը ինձ պատրաստ գտնես: Իսկ այսօրվա իմ կենսակերպը թող օգնի, որ ուրիշները գան Քեզ մոտ: Ամեն:

Եթե իմանաս, որ վաղը Հիսուսը գալու է, ի՞նչ կանես այսօր: Ինչդե՞ս ցույց կցաս Նրա լույսը ուրիշներին

Թագավորը նրանց առաջ կարդաց Տիրոջ տանը գտնված ուխտի գրքի բոլոր խոսքերը: (Բ.Մնաց. 34.30)

ՎԵՐՍԻՆ ԶԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՐԺԵՔ

1 970-ին մի ավտորնկերության գործադիր տնօրենն Դանիա գնալիս իմացավ, որ 1939-ին հայտնի «Բուլիք դուալ քոլ ֆայթըն» ընկերութիւնը պատկանել է այդտեղի բնակիչներից մեկին: Քանի որ այդպիսի ավտոմեքենա վաղուց արդեն չէր արտադրվում, մնացել էր եզակի մի նմուշ: Ուրախացած իր հայտնագործումով՝ տնօրենը գնեց այդ ավտոմեքենան և շատ ժամանակ ու միջոցներ տրամադրեց այն վերանորոգելու համար: Այժմ այդ հազվագյուտ նմուշն ընդգրկված է դասական մեքենաների հանրաճանաչ հավաքածուի մեջ:

Թաքնված գանձերը տարբեր ձևեր կարող են ունենալ: Բ. Մնացորդաց գրքում կարդում ենք մի այդպիսի կորսված գանձի հայտնաբերման մասին: Հուդայի թագավոր դառնալուց 18 տարի հետո Հովսիան սկսեց նորոգել Երուսաղեմի տաճարը: Նորոգման ժամանակ Քեղկիա քահանան «Օրենքի գիրքը գտավ Տիրոջ տանը» (Բ. Մնաց. 34.15): Օրենքի գիրքը տասնամյակներ առաջ հավանաբար թաքցվել էր ավարառու բանակներից, և ժամանակի ընթացքում մոռացվել էր դրա տեղը: Երբ Հովսիա թագավորին ասացին այդ հայտնաբերման մասին, նա անդրադարձավ այդ գրքի արժեքին ու կարևորությանը, հավաքեց ժողովրդին, նրա համար կարդաց ամբողջ գիրքը և ուխտեց կատարել դրա մեջ ամփոփված բոլոր խոսքերը (Հմ. 30-31):

Մենք ունենք Աստվածաշնչի բոլոր 66 գրքերն ընթերցելու զարմանալի օրհնութիւնը, որը շատ մեծարժեք գանձ է:

Աղոթք - Երկնավոր Զայր, օգնի՛ր ինձ, որ ուրախանամ Սուրբ գրքերի մեծ գանձով: Ամեն:

Աստ՛ո Սուրբ Խոսքը արժեքավոր գանձ է, որ ունեն՛ք մեր ձեռքի՛ն: Շատ կարևոր է, որ այն բացեն՛ք, կարդան՛ք ու խորհրդածեն՛ք դրա մասի՛ն՝ իմանալու համար այդ գանձի իսկական արժեքը:

Երանելի է այն մարդը, որ համբերում է փորձություն: (Գալ. 1.12)

ԼԵԳՈՅԻ ԴԱՍԵՐ

Երկրի վրա յուրաքանչյուր մարդու հաշվով վաճառվում է տասը լեզո, ավելի քան 75 միլիարդ պլաստիկ աղյուսիկ: Բայց եթե դանիացի գյուտարար Օլե Կիրկ Քրիստիանսենը չհայտնաբերեր Լեզո խաղը, այդ հնարավորությունը չէր լինի:

Քրիստիանսենը նախքան Լեզո խաղը (որ դանիերեն բառացի թարգմանաբար նշանակում է «լա՛վ խաղա») հայտնաբերելը՝ տասնամյականեր շարունակ աշխատել է Դանիայի Բիլլուն քաղաքում: Նրա արհեստանոցը երկու անգամ հրդեհվել է: Ինքը ստիպված է եղել դիմազրավել սնանկացումն ու համաշխարհային պատերազմի պատճառած այլ նեղություններ: Բայց գիտնականը, չվհատվելով վերջապես 1940-ականների վերջին ձեռնամուխ եղավ այդ գրավիչ խաղի ստեղծմանը: 1958-ին, երբ Օլե Կիրկը մահացավ, Լեզոն արդեն հանրահայտ էր դառնում:

Աշխատանքում ու կյանքում առաջացած մարտահրավերներին դիմանալը դժվար է: Այդպես է նաև մեր հոգևոր կյանքում, երբ մենք Հիսուսին ավելի նմանվելու փորձեր ենք անում: Հակոբոս առաքյալը գրել է. «Երանելի է այն մարդը, որ համբերում է փորձություն» (Հակ. 1.12): Մեր դիմազրաված փորձությունները երբեմն հարաբերությունների կամ նյութական ու առողջապահական հարցերի հետընթաց են, որ դանդաղեցնում են Աստծուն պատվելու մեր ջանքերը: Բայց Աստված նման ժամանակների համար խոստանում է մեզ տալ իմաստություն (Հմ.5) և խնդրում է մեզ վստահել Իրեն, քանի որ Նա է ապահովում այն, ինչ մեզ անհրաժեշտ է:

Աղոթք - Սիրելի՛ Հիսուս, Քո կյանքն ուսումնասիրելով իմանում եմք հարատևության մասին: Թող Քո օրինակը մեզ ուղեցույց լինի փորձությունների պահին: Ամեն:

Կյանքում փորձություններ մի՛ս էլ լինում են, կարևորը Աստծուն աղալիներն են:

Այն մարդը, որ չի զսպում իր հոգին, քանդված ու անպարիսպ քաղաքի
 ցմառ է: (Առ. 25.28)

ԲԱՅՎԱԾՔ ՊԱՏԻ ՄԵՉ

Ինչ-որ արարած ուտում էր ծաղիկներս: Նախորդ օրը փթ-
 թած բողբոջները հպարտորեն բացել էին ծաղկած գլուխնե-
 րը, իսկ այսօր վերածվել են անգլուխ ցողունների: Ես շրջեցի
 բակում ու փայտե ցանկապատի վրա հայտնաբերեցի նապաս-
 տակի չափ մի բացվածք: Այո՛, նապաստակները կարող են մի
 քանի ըոպեում քաղել պարտեզի բոլոր ծաղիկները: Հետաքը-
 քիր է, իսկ կարող են լինել այդպիսի «հարձակվողներ», որոնք
 խանգարեն Աստծո կերպարի ծաղկմանն իմ կյանքում: Առակ-
 ների 25.28-ում ասվում է. «Այն մարդը, որ չի զսպում իր հո-
 գին, քանդված ու անպարիսպ քաղաքի նման է»: Հին ժամա-
 նակներում պարիսպները պաշտպանում էին քաղաքները թշ-
 նամական ներխուժումներից: Եվ այդ պարսպի վրա նույնիսկ
 փոքրիկ բացվածքը նշանակում էր, որ քաղաքն անպաշտպան
 է: Առակների մեծ մասը ինքնազսպումի մասին են: Իմաստունն
 ասում է. «Եթե մեղր գտնես, կե՛ր քեզ բավարարելու չափ»
 (Առ. 25.16): Ինքնազսպումը Սուրբ Հոգու պտուղներից մեկն է,
 որը պաշտպանում է մեզ անհամբերությունից, դառնությունից,
 ազահույսությունից և հիվանդություններից, որոնք ներխուժ-
 ժում են մեր կյանք ու ոչնչացնում Աստծո բերքը (տե՛ս Գաղ.
 5. 22-23): Ինքնազսպումը առողջ մտածողություն է, որ փնտ-
 րում է մեր կյանքի պատերում եղած անցքերը և փակում
 դրանք: Կյանքիս շրջագիծը քննելիս կարող եմ տեսնել խոցելի
 անցքեր ու բացվածքներ, որտեղ անընդհատ փորձանքների եմ
 հանդիպում: Ուրեմն որքա՛ն կարիք ունեմ Աստծո առողջ ինք-
 նազսպման, որպեսզի պաշտպանված լինեմ նման ներխուժում-
 ներից:

Աղոթք - Սիրելի՛ Յայր, խնդրում եմ իմ կյանքի մեջ աճեցրու՛
 ինքնազսպումի պտուղը, որպեսզի պաշտպանվեմ
 ներխուժումներից: Ամեն:

**Քննենք մեր սրերը և սեսնենք խոցելի բացվածքները: Խնդրենք
 Ասծուց, որ մեզ տա Իր Հոգին՝ յաճճապանելու ներխուժող
 վսանգներից:**

Դու ապաստան եղար աղքատին, ապաստան՝ կարիքավորին՝ նրա նեղոււթյան մեջ, ապավեն՝ փոթորկի դեմ: (Ես. 25.4)

ԱՊԱՍՏԱՐԱՆ ԳՏՆԵԼ

Ես ու կինս մի անգամ մնացինք մեծ պատուհաններով ու հաստ պատերով ծովափնյա մի հյուրանոցում: Կեսօրից հետո կատաղի փոթորիկ սկսվեց, որի հետևանքով ծովի ալիքները կատաղորեն հարվածում էին մեր պատուհաններին: Բայց մենք հանգիստ էինք, քանի որ շենքի պատերը ամուր էին ու հուսալի: Իրսում փոթորիկն էր մոլեգնում, սակայն մենք մեզ գգում էինք անառիկ ամրոցում:

Ապաստարանի թեման Աստվածաշնչում հաճախ է արծարծվում: Սկսած Աստծուց. «Դու ապաստան եղար աղքատին, ապաստան՝ կարիքավորին՝ նրա նեղուլթյան մեջ, ապավեն՝ փոթորկի դեմ» (Ես. 25.4): Բացի դրանից՝ Աստծո ժողովուրդը, որպես ապաստարան, պետք է քաղաքներ հատկացներ կարոտյալների համար (Թվ. 35.6) կամ հյուրասիրություն ու սեր առաջարկեր «պանդուխտներին» (Բ. Օր. 10.19): Այս նույն սկզբունքներով այսօր կարող ենք մենք առաջնորդվել, երբ մարդասիրական ճգնաժամերը հարվածում են մեր երկրին: Այդպիսի ժամանակներում աղոթում ենք, որ Աստված մեզ՝ Իր ժողովրդին օգտագործի, որ խոցելիներն ու կարոտյալները ապաստարան գտնեն: Հյուրանոցին հարվածող փոթորիկը հաջորդ առավոտյան անհետացել էր՝ տեղը զիջելով հանդարտ ու արևոտ եղանակին: Այս պատկերն եմ հիշում, երբ մտածում եմ բնական աղետների ժամանակ «բռնակալի» կատաղությունից (Ես. 25.4) փախչողների մասին: Ապաստարան դարձող Աստված զորացնում է մեզ, որ օգնենք նրանց, որպեսզի ապահավություն գտնեն հիմա և ավելի պայծառ օր՝ վաղը:

Աղոթք - Ապաստարան դարձող Աստված, զորացրու՛ ինձ, որ օգնեմ կարիքավորին՝ ապաստարան ու հույս գտնելու: Ամեն:

**Ասված մեր հույսն ու աղասարանն է, որին վստահում ենք
կյանքի բոլոր թարագաններում ու վիճակներում:**

Այդ վեմի վրա եմ կառուցելու իմ եկեղեցին, և դժոխքի դռները նրան չեն կարողանա հաղթել: (Մատթ.16.18)

ՏՈՒՆ ՇԻՆԵԼ

1 889 թվականին ԱՄՆ Հյուսիսային Կարոլինայի Էշվիլ քաղաքում մի հսկայական առանձնատան շինարարություն սկսվեց: Այն պատկանում էր արվեստի գործերի հավաքորդ ու մեծահարուստ Ջորջ Վաշինգտոն Վանդերբիլտ Երկրորդին: Վեց տարի կառուցված շենքը Միացյալ Նահանգների ամենամեծ առանձնատունն է, որ կանգուն է մինչև այժմ: Այն ունի 250 սենյակ (35-ը ննջասենյակ և 43 բազնիք)՝ ընդհանուր 16,226 քմ տարածքով: Այս նախագիծը որքան էլ փառասիրական էր, որևէ ընդհանրություն չունի այն «շինարարական» մտադրությունների հետ, որ Հիսուսը հայտնեց իր աշակերտներին Մատթեոսի 16-ում: Երբ Պետրոսը հաստատեց, թե «Դու Քրիստոսն ես՝ կենդանի Աստծո Որդին» (Հմ.16), Հիսուսը հայտարարեց.«Ես էլ քեզ ասում եմ, որ դու Պետրոս (քար, վեմ) ես, և այդ վեմի վրա եմ կառուցելու իմ եկեղեցին, և դժոխքի դռները նրան չեն կարողանա հաղթել» (Հմ.18): Թեև աստվածաբանները վիճում են «վեմի» էություն մասին, սակայն Տեր Հիսուսի մտադրությունների առումով բանավեճ չկա: Նա կառուցելու է իր եկեղեցին, որպեսզի այն տարածվի մինչև աշխարհի ծայրը (Մատթ 28. 19-20)՝ ներառելով մարդկանց «բոլոր ցեղերից ու լեզուներից, ժողովուրդներից ու ազգերից» (Հայտն. 5.9):

Իսկ այս շենքի արժե՞քը... Հիսուսի զոհաբերությունն է խաչի վրա (Գործք. 20.28): Որպես այդ «շենքի» անդամներ (Եփ. 2.21), որ դարձել ենք այդքան մեծ գնով, թող որ հռչակենք Նրա սիրառատ զոհաբերությունը և միանանք Նրան այդ մեծ առաքելություն մեջ:

Աղոթք - Աստծո Գառ, շնորհակալ եմ Քո զոհաբերության համար: Թու՛յլ տուր ինձ, որ Քեզ բարձրացնեմ ամբողջ սրտով և ուրիշների հետ՝ հավատի ընտանիքում: Ամեն:

Եկեղեցին, որ՝ Հիսուսի մարմնի անդամն է, դե՛ս է արժանի Քրիստոսին:



Այդպես ամեն ժամ Տիրոջ հետ կլինենք: (Ա.Թես. 4. 17)

ԵՐԿՆԱՅԻՆ ՎԵՐԱՄԻԱՅՈՒՄ

Մորս մահախոսականը գրելիս զգացի, որ «մահացած» բառը չափազանց վերջնական էր թվում այն հույսի կողքին, որ ունեի երկնքում մեր վերամիացման համար: Ուստի գրեցի.«Նա հանգրվանեց Հիսուսի թևերի մեջ»: Տխրում եմ, երբ նայում եմ մեր օրերի ընտանեկան լուսանկարները, որոնցում մայրս չկա: Բայց վերջերս գտել եմ մի նկարչի, որը դիմանկարներ է պատրաստում՝ ներառելով նաև մեր կորցրած մարդկանց: Օգտագործելով լուսանկարները՝ նա վրձնի հարվածներով մեր դիմանկարների կողքին ասես ներկայացնում է Աստծո խոստումը երկնային վերամիացման մասին: Ես երախտապարտ էի, որ մայրս դարձյալ ժպտում էր կողքիս: Պողոս առաքյալը հաստատում է, որ Տեր Հիսուսին հավատացողները չպետք է տխրեն ննջեցյալների համար, «ինչպես ուրիշները, որ հույս չունեն» (Ա. Թես. 4.13): «Որովհետև եթե հավատում ենք, որ Հիսուսը մեռավ ու հարուժյուն առավ, այդպես էլ Աստված Հիսուսով ննջեցյալներին կյանքի կբերի նրա հետ» (Հմ.14): Պողոսն ընդունում է Հիսուսի երկրորդ գալուստը և հայտարարում, որ բոլոր հավատացյալները պիտի վերամիանան Հիսուսի հետ (Հմ.17):

Երկնային վերամիացման աստվածային խոստումը կարող է մխիթարել մեզ, երբ ցավում ենք մեկի կորստյան համար, որը հավատացել ու վստահել է Հիսուսին: Մեզ խոստացված ապագան հարուժյուն առած մեր Թագավորի հետ հարատև հույս է պարգևում, երբ Հիսուսը գալիս ու մեզ տուն է կանչում, և մենք դիմավորում ենք մեր անմահուժյունը:

Աղոթք - Սիրո՛ղ Փրկիչ, շնորհակալ եմ, որ ինձ տալիս ես հարատևող հույս, որի մասին պետք է ասեմ ուրիշներից՝ մինչև այն օրը, երբ ինձ կկանչես Քո տուն կամ նորից կգաս: Ամեն:

Երկնային վերամիացման խորհուրդը կարող է մեզ համար մխիթարություն լինել և մեծ հույս ներշնչել:

Հրեաներն ընդունեցին, ինչ որ սկսել էին անել, և ինչ որ նրանց գրել էր Մուրթբեմ: (Եսթ. 9.23)

ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ԴԱՐԱՇՐՋԱՆ

Չնայած իր կյանքի մեծ մասն ապրեց որպես հեթանոս, Հռոմի կայսր Կոնստանտինը (Ք. հ. 272-337) բազում բարեփոխումներ իրականացրեց, որոնցով դադարեցվեցին քրիստոնյաների դեմ հալածանքները: Նա հաստատեց նաև մեր օգտագործած օրացույցը՝ ամբողջ պատմութիւնը բաժանելով Քրիստոսից առաջ և հետո, նաև օգտագործելով «Տիրոջ տարում» արտահայտութիւնը: Այս համակարգի աշխարհացման քայլը եղավ դարաշրջանի անվանումների փոփոխութիւնը՝ ընդհանուր դարաշրջան և մինչև ընդհանուր դարաշրջան: Ոմանք սա նշում են իբրև օրինակ, թե Աստված ինչպես է աշխարհը հեռու պահում: Բայց Աստված ոչ մի տեղ չի գնացել, և մեր օրացույցն էլ կենտրոնացած է Հիսուսի՝ երկրի վրա ունեցած կյանքի իրողութիւն շուրջ: Աստվածաշնչում Եսթերի գիրքն անսովոր է նրանով, որ չի պարունակում Աստծո մասին հատուկ հիշատակութիւն: Ներկայացված պատմութիւնը Աստծո փրկութիւն մասին է: Իր հայրենիքից վտարված հրեա ժողովուրդն ապրում էր մի երկրում, որտեղ մարդիկ անտարբեր էին Աստծո հանդեպ: Պետական մի պաշտոնյա ուզում էր սպանել նրանց (Եսթ.3.8-9, 12-14): Սակայն Եսթեր թագուհու և իր զարմիկի՝ Մուրթբեմի միջոցով Աստված փրկեց իր ժողովրդին: Այս պատմութիւնը մինչև օրս նշվում է հրեական Փուրիմ տոնի միջոցով (9. 20-23):

Անկախ նրանից, թե աշխարհն ինչպես է արձագանքում Նրան, Հիսուսը փոխեց ամեն ինչ: Նա մեզ ներկայացրեց անսովոր մի դարաշրջան, որը լի էր իրական հույսով ու խոստումներով: Մեզ մնում է նայել մեր շուրջը, և մենք կտեսնենք Նրան:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ Որդուդ՝ Հիսուսի՝ պատմութիւն փոխող իրականութեան համար: Ամեն:

Ի՞նչ է դեժ անել, երբ մտածում եմ, թե Աստված հեռու է մեզանից:

Ամեն դառնություն, բարկություն, սրտմտություն, աղաղակ և հայիոյություն թող վերանա ձեզանից: (Եփ. 4.31)

ԿԱՐԵԿՅՈՒԹՅՈՒՆ ԴԱՌՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Երբ 2001 թ. սեպտեմբերի 11-ին կործանվեցին Առևտրի Համաշխարհային կենտրոնի աշտարակները, ընդ Ռոզբրիգեսը Հազարավոր զոհերից մեկն էր: Նրա մայրը՝ Ֆիլլիսն ու Հայրը վշտահար սգալու հետ մեկտեղ մտածում էին, թե որն է լինելու իրենց պատասխանը նման սարսափելի ահաբեկչությանը: 2002-ին Ֆիլլիսը հանդիպեց ահաբեկիչներին օգնելու համար մեղադրվողներից մեկի մոր՝ Այչա էլ Ուեյֆի հետ: «Մենք գրկախառնվեցինք,-պատմել է Ֆիլլիսը: -Մեր միջև սկսվեց մի անմիջական կապ: Երկուսս էլ տառապում էինք մեր զավակների պատճառով»:

Ահաբեկչության զոհի մայրը ահաբեկչությունը կազմակերպողի մորը տեսավ նույն վշտի մեջ: Նա հավատում էր, որ իր որդու մահվան համար զայրույթը որքան էլ տեղին էր, չէր կարող բուժել իր վիշտն ու ցավը: Լսելով Այչայի ընտանեկան պատմությունը՝ Ֆիլլիսը կարեկցանք զգաց նրա հանդեպ, ու այդ զգացումն ավելի զորեղ էր նրան որպես թշնամի տեսնելու ցանկությունից: Նա արդարություն էր ուզում, բայց հասկացավ, որ պետք է ազատվել վրեժխնդրությունից, որը հաճախ առաջանում է մեզ մոտ, երբ մեր հանդեպ սխալ արարք է կատարվում: Պողոս առաքյալը հենց ա՛յս համոզմունքն է հայտնում, երբ հորդորում է. «Ամեն դառնություն, բարկություն, սրտմտություն, աղաղակ և հայհոյություն թող վերանա ձեզանից» (Եփ. 4.31): Երբ ազատվենք այդ կործանարար ուժերից, Աստծո Հոգին մեզ նոր հեռանկարի հույս կտա: «Միմյանց հետ բա՛ղջր եղեք, գթած՝ միմյանց ներելով», - ասում է Պողոսսը:

Աղոթք - Սիրելի՛ Յայր, շատ սխալներ կան աշխարհում: Խնդրում եմ՝ դառնության փոխարեն ինձ կարեկցանքի հոգի տու՛ր: Ամեն:

Դառնության, զայրույթի կամ բարկության գերի կարող եմ դառնալ, սակայն Աստված կարող է մեզ օգնել, որ արդեն ոչ թե վրեժխնդրությամբ, այլ կարեկցանքով:

Քեզ պիտի հուսան Քո անունը ճանաչողները: (Սաղմ. 9.10)

ՎՍՏԱՅԻՐ ՆՐԱ ԱՆՎԱՆԸ

Մանկուլթյան տարիներին կար ժամանակ, որ վախենում էի դպրոց գնալուց, որովհետև մի քանի աղջիկներ դաժան կատակներով նեղացնում էին ինձ: Ես ստիպված էի զբոսանքի ժամերին ապաստանել դպրոցի գրադարանում, որտեղ կարգում էի քրիստոնեական պատմությունների մասին գրքեր: Հիշում եմ, թե երբ առաջին անգամ կարդացի Հիսուսի անունը: Ինչ-որ բան լսել էի, գիտեի, որ ինձ սիրող մեկն է Նա: Դրանից հետո, երբ դպրոց էի մտնում ու վախենում էի աղջիկներից, աղոթում էի.«Հիսուս՛ս, պաշտպանի՛ր ինձ»: Եվ ինձ ավելի ուժեղ ու հանգիստ էի զգում, իմանալով, որ Նա հսկում է ինձ: Ժամանակի ընթացքում աղջիկներն ուղղակի հոգնեցին ինձ վախեցնելուց և դադարեցրեցին:

Տարիներ են անցել, ես հասկացել եմ, որ Նրան վստահելը նշանակում է հավատալ, թե ինչ որ ասվում է Իր մասին, ճշմարիտ է, և հանգստանալ Նրանով:

Դավիթը նույնպես այդպես էր մտածում ու գործում: Երբ գրում էր 9-րդ սաղմոսը, արդեն իր փորձառությունները ճանաչում էր Աստծուն՝ որպես ամենակարող, արդար ու հավատարիմ կառավարչի (Հմ. 7-8, 10, 16): Դավիթը ցույց տվեց իր վստահությունը Աստծո հանդեպ և թշնամիների դեմ պատերազմի դուրս եկավ ապավինելով ոչ թե իր զենքին ու ռազմական հմտությունը, այլ Աստծուն, որը հայտնվեց իրեն «որպես խեղճին ապավեն» (Հմ.9):

Որպես մի փոքր աղջիկ՝ ես կանչեցի Նրա անունը և իմացա, թե Նա ինչպես պատասխանեց: Վստահե՛նք Նրան:

Աղոթք -Երկնավոր Հայր, ինձ սովորեցրո՛ւ, թե ով ես Դու, որպեսզի կյանքիս բոլոր պարագաներում կասկածելու պատճառ չունենամ: Ամեն:

Մատիարարների ժամանակ մտածի՛ր Հիսուսի անվան մասին, որդեսզի վստահությունդ Նրա հանդեպ զարգանա:

Տերը հրամայեց ձկանը, և նա Յովնանին փսխեց ցամաքին: (Յովն. 2.10)

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՏԱԶՈՒԿԸ

Մայքը սուզվել էր խեցգետին բռնելու, երբ զգաց, որ հայտնվել է կետածկան երախում: Տղան մտածեց, որ սա իր կյանքի վերջն է, բայց մեծ եղավ նրա զարմանքը, երբ մի քանի բոպե անց կետը իրեն ուղը նետեց՝ առանց կոտրվածքների, միայն մի քանի կապտուկներով:

Մայքըն առաջինը չէր: Հովնանին նույնպես «մեծ ձուկը կուլ էր տվել» (Հովն. 1.17), և նախքան այն պահը, երբ ձուկը նրան փսխեց ցամաքին, նա երեք օր մնաց ձկան փորում (1.17. 2.10): Ի տարբերություն Մայքի, որ պատահաբար էր հայտնվել կետի երախում, Հովնանը պատժվել էր, որովհետև ատում էր Իսրայելի թշնամիներին և չէր ուզում, որ նրանք ապաշխարեն: Աստված Հովնանին ասաց, որ դնա Նինվեում քարոզելու, որովհետև նրանց չարությունը ահագնացել է: Հովնանը, սակայն, նստեց հակառակ ուղղությունը՝ զննցող մի նավ, և Աստված նրա ուշադրությունը գրավելու համար մի կետածուկ ուղարկեց: Ես հասկանում եմ, թե ինչու էր Հովնանն ատում ասորիներին: Նրանք անցյալում հալածել էին Իսրայելի ժողովրդին և հիսուն տարի է՝ հյուսիսային ցեղերին գերություն էին մատնել: Հովնանը վիրավորվել էր, որ այդքանից հետո ասորիները կարող էին ներվել:

Բայց նա ավելի հավատարիմ էր Աստծո ժողովրդին, քան Աստծո ստեղծած բոլոր մարդկանց: Աստված սիրում էր Իսրայելի թշնամիներին և ուզում էր փրկել նրանց: Նա սիրում է մեր թշնամիներին և ցանկանում փրկել: Հոգին ունենալով որպես համընթաց քամի՝ Հիսուսի բարի լուրով եկե՛ք նավարկենք դեպի նրանք:

Աղոթք - Հիսուս, ցույց տուր, թե ինչպես Քեզ նման սիրեմ թշնամիներին: Ամեն:

Շատերը կան, որ Տեր Հիսուսի կարիքն ունեն: Ուստի մեր յարականությունն է սեր ցուցաբերել նրանց հանդեպ:

հնքն իր մեջ մասնատված ամեն քաղաք կամ տուն կանգուն չի մնա: (Մատթ. 12. 25)

ՉՍԱՍՆԱՏՎԱԾ ՏՈՒՆԸ

1 858թ. հունիսի 16-ին, որպես Իլինոյսից ԱՄՆ Սենատի անդամ առաջադրված հանրապետական թեկնածու Աբրահամ Լինքոլնը հանդես եկավ իր «Մասնատված տունը» հայտնի ելույթով, որում ընդգծվում էր ստրկատիրություն հետ կապված ամերիկյան տարբեր խմբակցությունների միջև առկա լարվածությունը: Լինքոլնի խոսքերը իրարանցում առաջացրին նրա բարեկամների ու թշնամիների մեջ: Հոետորը կարևորել էր «մասնատված տուն» արտահայտությունը, որ Հիսուսն արգեն օգտագործել էր Մատթեոս 12. 25-ում, քանի որ այն հայտնի էր ու հասկանալի և կնպաստեր, որ մարդկանց ուշադրությունը սևեռվեր ժամանակի մարտահրավերի վրա: Եթե «մասնատված տունը կանգուն չի մնա» արտահայտության իմաստը հստակ է, ապա հակառակ միտքը, թե «չմասնատված տունը կանգուն կմնա ու միասնական կլինի» նույնպես ճիշտ է: Սկզբունքորեն Աստծո ընտանիքը հենց այդպիսին է նախատեսված (Եփ.2.19): Թեև տարբեր ծագման մարդիկ ենք, բայց խաչված Հիսուսի մահով (հմ.14-16) հաշտվել ենք միևնույն Աստծո (և միմյանց) հետ: Հաշտի առնելով այս ճշմարտությունը (տե՛ս Եփ. 3)՝ Պողոսը Հիսուսին հավատացողներին առաջարկում է.«Ձանալով Հոգու միությունը խաղաղության կապով պահել» (4.3):

Այսօր ստեղծված լարվածությունը սպառնում է պառակտել մարդկանց, որոնք այլ կերպ են միավորված (ընտանիքներ, հավատակիցներ): Աստված կարող է տալ իմաստություն և ուժ, որ անհրաժեշտ է Հոգու օգնությամբ միմյանց մեջ եղած միասնությունը պահպանելու համար:

Աղոթք - Զիսու՛ս, խնդրում եմ տու՛ր ինձ իմաստություն, արիություն և ուժ՝ ապրելու այնպիսի ձևերով, որոնք ցույց կտան հաշտություն բոլոր մարդկանց հետ: Ամեն:

Լարված հարաբերությունների մեջ Աստված կարող է մեզ օգտագործել հաճախարհի դեռ կատարելու և խաղաղություն հաստատելու համար:

Ինչքան բարի և ինչքան ցանկալի է, որ եղբայրները բնակվում են միասին, իրար հետ: (Մաղմ. 133.1)

Ո՞ՒՄ ԵՄ ՊԱՏԿԱՆՈՒՄ

Հրեական ավանդական տոնակատարության՝ Պասեքի ընթրիքի ավարտին եկեղեցու անդամներն իրենց ուրախությունն արտահայտեցին՝ միասին շուրջպար բռնելով: Բերրին մի պահ կողքից դիտեց պարն ու ասաց, որ ինքը շատ է սիրում այսպիսի առիթները: «Սա իմ ընտանիքն է, իմ համայնքը: Ես գտել եմ մի վայր, որտեղ կարող եմ սիրել ու սիրվել: Սա մի տեղ է, որին ես պատկանում եմ»: Մանկության տարիներին Բերրին ենթարկվել էր ֆիզիկական ու հոգեբանական բռնության, ինչի պատճառով կորցրել էր ուրախությունը: Բայց տեղի եկեղեցին ողջունեց նրան ու ծանոթացրեց Հիսուսի հետ: Այդ համայնքի մարդկանց միասնությունն ու ուրախությունը վարակիչ էր, տղան սկսեց հետևել Քրիստոսին՝ զգալով, որ ինքը սիրված ու ընդունված է այդտեղ: 133-րդ սաղմոսում Դավիթ թագավորն ազդեցիկ պատկերներ է օգտագործում՝ Աստծո ժողովրդին ցույց տալու «բարի և ցանկալի» (Հմ.1) միասնության դրական ազդեցությունը: «Այն ազնիվ յուզի պես է, որ թափվում է գլխի վրայից» (Հմ.2): Այս օծումը հին աշխարհում ընդունված էր նաև որպես ողջունյա, երբ մարդ էր մտնում տուն: Դավիթն այդ միասնությունը համեմատում է նաև շաղի հետ, որ իջնում է սարերի վրա՝ բերելով օրհնություն ու կյանք (Հմ.3): Յուզը հաճելի բուրմունք է տարածում սենյակում, իսկ շաղը խոնավություն է տալիս չոր վայրերին: Միասնությունը այլ հաճելի ազդեցություններ ևս ունի. օրինակ ողջունել միայնակ մարդկանց: Եկե՛ք ձգտենք միասնական լինել Քրիստոսով, որպեսզի Աստված մեր միջոցով բարիք բերի:

Աղոթք - Հիսու՛ս, օգնի՛ր ինձ, որ կարողանամ ցույց տալ սերդ ոչ միայն նրանց, ում հեշտ եմ ընդունում, այլև նրանց, ում դժվար է ընդունել: Ամեն:

Եթե Քրիստոսին ենք ներկայացնում աշխարհի վրա, ուրեմն դեպ է միաբանությամբ աղրենք ու գործակցենք միմյանց հետ:

Նա պիտի թագավորի հավիտյան հավիտենից: (Յայտն.11.15)

ԱԼԵԼՈՒԻԱ

Գերմանացի կոմպոզիտոր Հենդելից ընդամենը 24 օր է պահանջվել «Մեսիա» նվագախմբային սքանչելի ստեղծագործութիւնը գրելու համար: Այսօր այն հնչում է աշխարհի տարբեր բեմերում: Ստեղծագործութիւնն իր գագաթնակետին է հասնում, երբ սկսվում է ամենահայտնի մասը՝ «Ալելուիա» խմբերգը:

Երբ շեփորահարներն ու թմբկահարները հայտարարում են դրա սկիզբը, ձայները հանդարտ լուծւմ են, և երգչախումբը կատարում է Հայտնութեան 11.15-ի խոսքերը.«Նա պիտի թագավորի հավիտյանս հավիտենից»: Դա Հիսուսի հետ դրախտում լինելու հավերժական հույսի հաղթական հայտարարութիւնն է:

«Մեսիայի» խոսքերի մեծ մասը Հայտնութեան գրքից են՝ Հովհաննես առաքյալի տեսիլքի պատմութիւնից, որ նրան երևացել էր իր կյանքի ավարտին, ու նա նկարագրել էր այն իրադարձութիւնները, որոնք ավարտվում են Քրիստոսի վերադարձով: Հայտնութեան մեջ Հովհաննեսը դարձյալ անդրադառնում է Հիսուսի հարութեանը, երբ երգչախմբի ձայնով ուրախութիւնն է թևածում (19.1-8): Աշխարհն է ուրախանում, որովհետև Հիսուսը հաղթում է մահին ու խավարին և հաստատում խաղաղութեան թագավորութիւնը:

Մի օր երկնքի բոլոր մարդիկ միասին երգչախմբի նման երգելու են՝ հռչակելով Հիսուսի վեհութիւնն ու հավիտենական թագավորութիւնը (7.9): Իսկ մինչ այդ մենք ապրում, աշխատում, աղոթում և հույսով սպասում ենք:

Աղոթք - Տե՛ր Դիսուս, շուտ եկ՝ հաստատելու Քո թագավորութիւնը երկրի վրա: Ամեն:

Դիսուսի երկրորդ գալուստը մեզ հավիտենականութեան հույս է ներշնչում: Ուստի եկե՛ք այսօր մեր ալելուիան բարձրացնենք առ Ասված:

Նա առատ ջրերից հանեց ինձ: (Մաղմ. 18.16)

ԱԶԱՏՈՒՄ ԶՈՐԴԱՌԱՏ ՋՐԵՐԻՑ

2021 թ. օգոստոսին Թեննեսի նահանգի Վեյվըրլի քաղաքում կանխատեսվածից երեք անգամ ավելի անձրև տեղաց: Հզոր փոթորկի պատճառով քսան մարդ զոհվեց, հարյուրավոր տներ քանդվեցին: Մարդկային կյանքերի կորուստներն ավելի շատ կլինեին, եթե չլիներ ուղղաթիռի օդաչու Ջոել Բոյերսի մասնագիտական հմտությունն ու մարդկային կարեկցանքը:

Ի պատասխան մի կնոջ հեռախոսազանգի՝ օդաչուն օգնություն հասավ նրա հարազատներին: Վերևից տեսնելով հրդեհված տներն ու մեքենաները ծառերի մեջ և կատաղի հորձանք տվող ջրերը՝ Բոյերսն այնուամենայնիվ արիաբար կարողացավ փրկել 12 մարդու, որոնց վերջրեց տների տանիքներից:

Մեր կյանքի մարտահրավերները նույնպես նման են այդ ջրհեղեղներին: Անորոշություն ու անկայունություն օրերին մենք մտքով ու զգացումներով ճնշված ու անապահով ենք զգում, բայց չպետք է հուսահատվել:

Մաղմոս 18-ում կարդում ենք, թե ինչպես Դավթի թշնամիները շատ էին ու հզոր, բայց Աստված ավելի մեծ էր: Այնքան մեծ ու հզոր (Հմ.1), որ Դավիթն օգտագործեց բազում փոխաբերություններ (Հմ.2)՝ Նրան նկարագրելու համար: «Նա առատ ջրերից հանեց ինձ: Նա ազատեց ինձ իմ զորավոր թշնամուց» (Հմ.16-17): Այնքան մեծ, որ մենք Նրան կանչում ենք Հիսուսի անունով՝ անկախ մեզ շրջապատող «ջրերի» ծավալից ու խորությունից (Հմ.3):

Աղոթք - Զգոր, փրկիչ ու ազատարար Աստված, երբ կատաղի ջրերը պատում են ինձ, տու՛ր ինձ հավատ՝ տեսնելու ու կառչելու Քեզ: Ամեն:

Երբ կյանքի հորձանուտում հայտնվեմք կասաղի փոթորիկների մեջ, հավասով դիմենք Ասծուն՝ խնդրելով Նրա փրկությունը:

Եվ նրանց (մանուկներին) գիրկն առավ, ձեռքը նրանց վրա դրեց և օրհնեց: (Մարկ. 10.16)

ՍՈՎՈՐԵԼ ՈՒ ՍԻՐԵԼ

Շոտլանդական Գրինոկ քաղաքի նախակրթական Հաստատությունների երեք ուսուցիչներ, որոնք ծննդաբերություն արձակուրդում էին, երկու շաբաթ մեկ իրենց երեխաներին բերում էին դպրոց՝ աշակերտների հետ շփվելու: Նորածինների հետ խաղերը երեխաներին սովորեցնում են հոգատարություն և կարեկցանք ուրիշների հանդեպ: Այդպիսով դպրոցականները սովորում են, թե որքան դժվար գործ է երեխային խնամելը, նաև ճանաչում են միմյանց հանդեպ ունեցած զգացումները:

Մանուկ հասակից ուրիշների հանդեպ ուշադիր լինելը նոր գաղափար է: Գիտենք, որ Նա աշխարհ եկավ՝ որպես մանուկ Հիսուս: Նրա ծնունդով փոխվեց ամեն բան, ինչ մենք գիտեինք հոգատար հարաբերությունների մասին: Քրիստոսի ծննդյան մասին առաջինն իմացան հովիվները՝ խոնարհ մասնագիտության մարդիկ, որոնք զբաղվում էին ոչխարների խնամքով:

Ավելին ուշ, երբ մանուկներին բերեցին Նրա մոտ՝ օրհնելու, Նա իր աշակերտներին, որոնք սաստում էին բերողներին, ասաց. «Թողե՛ք, որ երեխաներն ինձ մոտ գան, ու մի՛ արգելեք նրանց, քանի որ Աստծու արքայությունն այդպիսիներինն է» (Մարկ. 10.14): «Եվ նրանց (մանուկներին) գիրկն առավ, ձեռքը նրանց վրա դրեց և օրհնեց» (Հմ.16): Մենք կարող ենք անարժան համարվել, փոխարենը որպես մանուկ եկած Տերը՝ Քրիստոսը կընդունի մեզ իր սիրով՝ այդպիսով սովորեցնելով մանուկների և բոլոր մարդկանց հոգատարության ուժը:

Աղոթք - Մեր հոգատար Աստված, երբ մոռանում եմ ուրիշներին կարեկցանք ցույց տալ, օգնի՛ր ինձ, որ հոգ տանեմ Քո ուզածի նման: Ամեն:

Մանուկների հետ ժամանակ անցկացնելը թող մեզ հիշեցնի, որ Տեր Հիսուսի անունով ուրիշներին սիրելու և հոգ տանելու դարձականություն ունենի:

Լեռներն ու բլուրները ցնծությամբ պիտի պոռթկան ձեր առաջ: (Ես. 55.12)

ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ ՀԱՎԱՏՔ

- **Նայի՛ր պապիկ, ծառերը օրորվելով բարևում են Աստծուն,**
 ասաց թոռնիկս: Մոտալուտ փոթորկից առաջ քամուց թեքվող
 ծառերը տեսնող մանկան այդ դիտարկումը առիթ դարձավ, որ
 ես ինքս ինձ հարցնեմ, թե արդյո՞ք ես էլ ունեմ նման երևակա-
 յական հավատ: Անդրադառնալով Մովսեսի և այրվող մորենու
 պատմությանը՝ բանաստեղծ էլիզաբեթ Բարրեթը գրել է. «Եր-
 կինք ու երկիր խառնվել են, ամենասովորական թուփն անգամ
 բռնկվել է Աստծո հետ: Բայց միայն Նրան տեսնողն է հանում
 իր կոշիկները»: Մեր շուրջը կատարվող բոլոր հրաշքների մեջ
 Աստծո ձեռքի գործը հստակ է: Եվ մի օր, երբ երկիրը նորոգ-
 վի, մենք կտեսնենք այնպես, ինչպես երբեք չենք տեսել:

Եսայի մարգարեի միջոցով Աստված մեզ ասում է այդ օրվա
 մասին, երբ հայտարարում է. «Դուք ուրախութեամբ դուրս
 կգաք և խաղաղությամբ կառաջնորդվեք. լեռներն ու բլուրներ-
 րը ցնծությամբ պիտի պոռթկան ձեր առաջ և դաշտերի բոլոր
 ծառերը ծափ պիտի տան» (Ես. 55 12): Երգող լեռնե՞ր, ծափ
 տվող ծառե՞ր: Ինչու՞ ոչ: Պողոսը նշում է. «Ստեղծագործու-
 թյունն ինքը ևս ապականության ծառայությունից կազատվի՝
 Աստծու որդիների փառքի ազատության մեջ մտնելու համար»
 (Հռոմ. 8.21): Հիսուսը խոսում էր քարերի մասին, որոնք «աղա-
 դակելու են» (Ղուկ.19.40): Նրա խոսքերը Եսայի մարգարեի
 ասածի արձագանքն են այն մասին, թե ինչ է սպասվում փրկու-
 թյան համար Իր մոտ եկողներին: Երբ Աստծուն նայենք Նրա
 կարողությունների հանդեպ մեծ հավատով, կտեսնենք, որ Նրա
 հրաշքները շարունակվում են հավիտյան:

Աղոթք - Սիրո՞ղ Հայր, փառաբանում եմ Քեզ, որ Դու ես
 ամենաստեղծագործը: Անհամբեր սպասում եմ տեսնելու այն
 բոլոր հրաշքները, որ Դու կարող ես անել: Ամեն:

**Ինչդե՞ս ես դասկերացնում fn նոր երկիրը Սսծոն
 քազավորությունում: Ինչդե՞ս ես ծառայելու Նրան:**

Քանի որ դուք չիավատացիք ինձ,... դրա համար դուք այս ժողովրդին չեք տանի այն երկիրը, որ տվել եմ նրանց: (ԹՎ. 20.12)

ԱՆԽՈՐԵՍ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Բեռահաս էի և բասկետբոլի փորձից հետո տուն գնալիս շատ արագ էի վարում մեքենան՝ որ հետ չմնամ ընկերոջիցս: Ուժեղ անձրև էր գալիս, և ես դժվարությամբ էի կարողանում հետևել նրա մեքենային: Հանկարծ, տեսնելով, որ շատ եմ մոտեցել, ստիպված եղա կտրուկ արգելակել: Իմ մեքենան սահելով ջրի վրա՝ խփվեց ծառին ու ամբողջովին վնասվեց, իսկ ես արթնացա հիվանդանացի վերականգանացման բաժանմունքում: Թեև Աստծո շնորհիվ ողջ մնացի, բայց անխոհեմ որոշումս շատ թանկ նստեց:

Մովսեսն էլ անխոհեմ որոշում էր կայացրել: Նրա սխալը, սակայն, կապված էր ջրի պակասի հետ՝ ի տարբերություն իմ դեպքի: Իսրայելցիները Սին անապատում «ջուր չունեին և նրանք հավաքվեցին Մովսեսի և Ահարոնի դեմ» (ԹՎ. 20.2): Աստված, դիմելով Մովսեսին, ասաց, որ խոսի ժայռի հետ, «և նա կտա իր ջուրը» (Հմ.8): Սակայն Մովսեսը այդպես չվարվեց, այլ «գավազանով երկու անգամ զարկեց ապառաժին» (Հմ.11): Եվ Աստված ասաց.«Քանի որ դուք չհավատացիք ինձ,... դրա համար դուք այս ժողովրդին չեք տանի այն երկիրը, որ տվել եմ նրանց» (Հմ.12):

Երբ անխոհեմ որոշումներ ենք կայացնում, կրում ենք դրանց հետևանքները: «Լավ չէ անգետ մարդը, և ոտքերով շտապողը կխոտորի» (Առ. 19.2): Աղոթքով ուշադիր փնտրենք Աստծո իմաստնությունն ու առաջնորդությունը մեր այսօրվա կայացրած ընտրությունների մեջ:

Աղոթք -Չիսո՛ւս, խնդրում եմ, օգնի՛ր, որ հետևեմ Քո իմաստուն հրահանգներին, երբ Քո Յոգին առաջնորդում է ինձ: Ամեն:

Երբեմն ցավալիորեն անխոհեմ որոշումներ ենք կայացնում: Իմաստուն լինենք և աղոթով Աստծո իմաստնությունը խնդրենք:

Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա ու խմի: (Ռոմի.7. 37)

ԿԵՆԱՐԱՐ ՋՈՒՐԸ

Մաղիկները էկվադորից տեղ հասան, բայց երկար ճանապարհից թառամել էին: Մասնազիտական ցուցումներում ասվում է, որ դրանք կարելի է վերակենդանացնել սառը ջրով: Մինչ այդ, սակայն, ծաղիկի ցողունները հարկավոր է կտրել, որպեսզի նրանք կարողանան ջուրն ավելի լավ ընդունել: Բայց արդյո՞ք կկենդանանան այս ծաղիկները:

Հարցիս պատասխանն ստացա հաջորդ առավոտյան, երբ տեսա մի փառահեղ ծաղիկփունջ: Քաղցրահամ ջուրն անհրաժեշտ ամեն ինչ արել էր, ու ես հիշեցի, թե ինչ էր ասել Հիսուսը ջրի մասին, և ինչ նշանակություն ունի այն հավատացյալների համար:

Երբ Հիսուսը ջրհորի մոտ սամարացի կնոջից խմելու ջուր խնդրեց, նրա կյանքը փոխվեց: Կինը նախ զարմացավ այդ խնդրանքից, որովհետև հրեաներն արհամարհում էին սամարացիներին: Բայց Հիսուսն ասաց. «Եթե իմանայիր Աստծո պարգևը, և թե ո՞վ է նա, որ քեզ ասում է. «Ինձ խմելու ջուր տու՛ր», ապա դու՛ նրանից կխնդրեիր, նա էլ քեզ կենդանի ջուր կտար» (Հովհ. 4.10): Ավելի ուշ տաճարում Հիսուսը գոչեց. «Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա ու խմի» (7. 37): Ինչպես Սուրբ Գիրքն է ասում. «Ով ինձ հավատում է, նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն»: Նա այս ասաց՝ նկատի ունենալով Հոգուն, որն ընդունելու էին նրան հավատացողները» (Հմ. 38-39):

Աստծո թարմացնող Հոգին այսօր վերակենդանացնում է մեզ, երբ մենք հոգնած ենք կյանքից: Այն կենարար ջուր է, որ սուրբ թարմությունը բնակվում է մեր հոգիներում: Թող որ մենք այսօր խմենք այդ սքանչելի ջրից:

Աղոթք - Սիրո՛ղ Հայր, երբ հոգնած ու ծարավ եմ լինում, շնորհակալ եմ Հոգու Քո պարգևի համար, որ բնակվում է յուրաքանչյուր հավատացյալի սրտում: Ամեն:

Եթե կյանքի որոշ փարագաներում ծարավ զգանք, դիմե՛նք Տեղի հիսուսին, որ մեզ էլ փարգևի այդ կենարար ջրից:

Սուրբ համբույրով ողջունե՛ք միմյանց: Քրիստոսի բոլոր եկեղեցիները ողջունում են ձեզ: (Յուդ. 16.16)

ՄԱՐԴԻԿ, ՈՐՈՆՔ ԱՅԼ ՄԱՐԴԿԱՆՑ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ

Հայտնի մարզական մեկնաբան Դեյվ Կինգըրեդը մարզական աշխարհի հարյուրավոր դեմքերի, դեպքերի ու չեմպիոնների մասին է գրել: Հանգստի անցնելուց հետո, ձանձրանալով պարապուժյունից, նա սկսեց հետևել տեղի դպրոցի աղջիկների բասկետբոլի խաղերին: Շուտով սկսեց յուրաքանչյուր խաղի մասին պատմություններ գրել ու տեղադրել համացանցում: Երբ Դեյվի մայրն ու թոռնիկը մահացան, կինն էլ կաթվածահար եղավ, նա հասկացավ, որ խումբը, որի մասին ինքը գրել էր, իրեն տվեց համայնքում լինելու զգացում ու նպատակ: Նա այդ մարզկանց կարիքն ուներ ավելի, քան նրանք՝ իր: «Այս խումբը փրկեց ինձ: Կյանքս մթազնել էր...և նրանք լույս եղան ինձ համար»:

Ինչպես նշանավոր մեկնաբանը կախում ունեցավ դեռահասների խմբից, այնպես էլ նշանավոր մի առաքյալ ապավինեց այն մարզկանց ընկերակցությանը, որոնց հանդիպել էր իր միսիոներական ճամփորդությունների ժամանակ: Պողոսն այդ բոլոր մարզկանց ողջունում է նամակի վերջում (Հռոմ.16.3-15): «Ողջունե՛ք Անդրոնիկոսին և Հունիային՝ իմ ազգականներին և բանտակիցներին» (Հմ.7), «Ողջունե՛ք Ամպղիասին՝ իմ սիրելիին Տիրոջով» (Հմ.8): Նա ավելի քան քսանհինգ մարդու անուն է նշում, որոնցից շատերը Սուրբ Գրքում չեն հիշատակվում, բայց որոնց կարիքը Պողոսն ուներ:

Կա՞ մեկը քո եկեղեցում կամ համայնքում, որի կյանքը խավարել է: Ինչպես Աստված է առաջնորդում, դու էլ կարող ես նրանց Հիսուսին ցույց տվող լույսը լինել: Մի օր նրանք կարող են վերադարձնել քո բարեհաճ վերաբերմունքը:

Աղոթք - Հայր, ի՞նչ բարեկամ ունեն ի դեմս Հիսուսի: Թող որ ես էլ այդպիսի մի բարեկամ լինեմ ուրիշների համար: Ամեն:

Կյանքի դժվարությունների մեջ անկեղծ բարեկամների կարիք ենք ունենում: Խնդրեմք Աստուծուց, որ այդպիսի բարեկամներ տա մեզ, և մենք էլ բարեկամ լինեմք ուրիշներին:

Քո արքայությունը գա, քո կամքը լինի ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա: (Մատթ. 6.10)

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՉԷ

Շատերն էին ուշադիր հետևում «Ծառայողական պարտակա- նությամբ» բրիտանական սերիալին, որովհետև ուզում էին տեսնել, թե ինչպես է ավարտվելու ծրագրված հանցագործու- թյան դեմ մղվող պայքարը: Սակայն շատ հեռուստադիտողներ հուսախաբ եղան, երբ այն վերջացավ չարի հաղթանակով: «Կուզենայի, որ չար մարդիկ արդարադատություն առաջ կանգնեին, մեզ այդպիսի՝ բարոյական ավարտ էր պետք», - ասել էր նրանցից մեկը: Սոցիոլոգ Փիթեր Բերգերը մի առիթով գրել է, որ մենք արդարության և հույսի քաղց ունենք, հույս, որ չարը մի օր կպարտվի, և այն նյութողները կպատժվեն:

Աշխարհը, որտեղ չար մարդիկ հաղթում են, ընթանում է հակառակ այն մտքին, թե Աստված աշխարհը բարի ստեղծեց: Իսկ հուսախաբված մարդիկ, առանց անդրադառնալու իրակա- նությունը, արտահայտում են մարդկության խոր ցանկություն- նը, որ աշխարհը դարձյալ շտկվի: Տերունական աղոթքում Հի- սուսն իրատեսորեն է խոսում չարի մասին: Այն գոյություն ու- նի ոչ միայն մեր միջև, որ պահանջում է ներողամտություն (Մատթ. 6.12), այլև մեծ չափերով, որն ազատում է պահանջում (Հմ.13): Այս իրատեսությունը, սակայն համատեղվում է հույ- սի հետ: Կա մի վայր, որտեղ չարությունն չկա. դա դրախտն է, և այդ երկնային արքայությունը գալու է երկիր (Հմ.10): Մի օր Աստծո արդարությունն ամբողջական կլինի, նրա «բարոյական հաղթանակը» կգա, չարը կանհետանա հավիտյան (Հայտն.21.4): Երբ իրական կյանքում չար մարդիկ հաղթում են, հիշենք, որ հույս միշտ կա, քանի դեռ պատմությունն ավարտված չէ:

Աղոթք - Երկնավոր Հայր, Քո արքայությունը թող գա, Քո կամքը լինի ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա: Ամեն:

Մենք հույսի ու արդարության փաղց ունենք: Հետևաբար Տերունական աղոթքը կօգնի մեզ՝ հաղթահարելու հուսախաբությունն ու չարը:

Քո անունը Աբրահամ կլինի, որովհետև բազում ազգերի հայր եմ դարձնելու քեզ: (ԾՈՆ.17.5)

ԱՆՎԱՆ ՈՒԺԸ

Ռանջիղը Հնդկաստանի Մուսթայ քաղաքի փողոցներում ապրող երեխաների համար մի երգ գրեց, որում նրանցից յուրաքանչյուրի անունով մեղեդի էր հնչում: Նա այդ մանուկներին սովորեցրեց երգը, որպեսզի իրենց անվան հետ կապված դրական հիշողություններ ունենան:

Անունները կարևոր են Աստվածաշնչում, դրանք հաճախ արտացոլում են անձի բնավորության գծերը կամ նրան վերապահված նոր դերը: Օրինակ Աստված փոխեց Աբրամի և Սարայի անունները, երբ սիրո ուխտ արեց նրանց հետ և խոստացավ, որ նրանք կլինեն իր ժողովուրդը: Աբրամը, որ նշանակում է «փառավորված հայր», դարձավ Աբրահամ՝ հայր բազմություն: Իսկ Սարան, որ նշանակում է իշխանուհի, դարձավ Սառա՝ բազմության իշխանուհի (տե՛ս Ծնն. 17. 5,15):

Աստծո տված նոր անունները ներառում էին իր ողորմության խոստումն այն մասին, որ նրանք այլևս անզավակ չպետք է մնային: Եվ երբ ծնվեց նրանց առաջին զավակը, նրան կոչեցին Իսահակ, որ ծիծաղ է նշանակում: Սառան ասաց.«Աստված ծիծաղեցրեց ինձ, ով որ լսի, կծիծաղի» (Ծնն. 21.6):

Մենք պատիվ ու հարգանք ենք ցուցաբերում մարդկանց հանդեպ, երբ նրանց կոչում ենք իրենց անունով և հաստատում, որ Աստված է ստեղծել իրենց: Միրո ծածկանունը, որը կհաստատի որևէ անձի յուրահատկությունը՝ որպես Աստծո պատկերով ստեղծված մարդ, կարող է նույն բանն անել:

Աղոթք - Բոլոր անունների Աստված, Դու ինձ ստեղծեցիր Քո պատկերով և սիրեցիր: Այնպիսի ձև տու՛ր ինձ, որ ավելի նմանվեմ Քեզ: Ամեն:

Ի՞նչ ես մտածում քո անվան կամ ծածկանվան մասին. արդյո՞ք այն իսկապես ներկայացնում է քեզ ու քո առանձնահատկությունները:

Ի՞նչ օգուտ է մարդուն, եթե այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր կյանքը կորցնի: (Մարկ. 8.36)

ԸՆՏՐԵԼ ԻՄԱՍՏՆՈՒԹՅԱՄ

Ամերիկացի տիեզերագնաց Քրիս Ֆերգյուսոնը դժվարին որոշում կայացրեց հրաժարվել միջազգային տիեզերակայան կատարվելիք թռիչքին մասնակցելուց: Անձնակազմի ղեկավարի այդ որոշումը ոչ թե տեխնիկական կամ այլ հիմնավորում ուներ, այլ անձնական էր. նա ուզում էր ներկա լինել իր դասեր հարսանիքին:

Մենք բոլորս էլ երբեմն ունենում ենք դժվար որոշումներ կայացնելու առիթներ, երբ ստիպված ենք լինում գնահատել, թե ինչն է մեր կյանքում կարևորն ու առաջնայինը: Հիսուսը նպատակ ուներ այս ճշմարտությունը հաղորդել իր աշակերտներին և հետևորդներին՝ որպեսզի ճիշտ կատարեն կյանքի ամենակարևոր որոշումը: Իր հետ քայլելու և աշակերտ դառնալու համար պահանջվում է, որ նրանք «իրենց անձն ուրանան» (Մարկ. 8.34): Նրանք կարող էին խնայել իրենց զոհաբերությունները, որ պահանջվում էին Քրիստոսին հետևելու համար, և փոխարենը հետևել իրենց սեփական ցանկություններին, բայց նա հիշեցնում է, որ դա տեղի կունենա ավելի մեծ գին վճարելով:

Մենք հաճախ ենք հետևում այնպիսի բաների, որոնք մեզ արժեքավոր են թվում, բայց դրանք մեզ շեղում են Հիսուսին հետևելուց: Եկե՛ք խնդրենք Աստծուց, որ մեզ ամեն օր առաջնորդի, որպեսզի մենք իմաստնությունը ընտրենք մեզ առաջադրված տարբերակներից և պատվենք Իրեն:

Աղոթք - Հիսուս, ուզում եմ քայլել Քեզ հետ: Խնդրում եմ՝ օգնիր ինձ ճանաչել ու ընտրել այն ուղիները, որոնք ավելի խորը կապով կկապեն ինձ Քեզ հետ: Ամեն:

Իմաստնությամբ ընտրեմք, որդեսզի կարողանանք ավելի մոտ լինել Տեր Հիսուսին:

Քեզ չասացի՞, որ եթե հավատաս, Աստծո փառքը կտեսնես: (Յուդ.11.40)

ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՇԲԸ

Հայտնի բոլորքեր Քեյվին Լիննի կյանքն ասես փուլ էր գալիս: Վերջերս նա իր հոգեվաճառներից մեկում խոստովանել է, որ ինքը գրեթե ինքնասպանություն եզրին էր: «Աստուծո խնդրեցի մտնել իմ սենյակ և իմ կյանք: Ու այդ պահին ես իսկապես գտա այն, ինչը հիմա գիտեմ, որ Աստված է»: Աստված միջամտեց, որ Լիննը հրաժարվի ինքնասպանություն մտքից, և հիշեցրեց իր սիրառատ ներկայություն մասին: Այդ «Հանդիպման» մասին բոլորքերը պատմեց աշխարհին՝ Յուդեայի իր էջում ստեղծելով մի առանձին բաժին, որտեղ ներկայացնում է թե՛ իր, և թե՛ ուրիշների վերափոխման պատմությունները:

Երբ Հիսուսի հետևորդն ու ընկերը՝ Ղազարոսը մահացավ, նրա քույրը ենթադրեց, որ եթե ինքը չուշանար, դա էլ պատահի (Հովհ. 11.32): Իր գալուց չորս օր առաջ արդեն գերեզմանում եղած Ղազարոսին Քրիստոսը հրաչքով կենդանացրեց (Հմ.38)՝ ասելով. «Քեզ չասացի՞, որ եթե հավատաս, Աստծո փառքը կտեսնես» (Հմ. 40):

Ճիշտ այդպես էլ Հիսուսը իր միջոցով մեզ նոր կյանք է առաջարկում: Խնչի վրա զոհաբերելով իր կյանքը՝ Քրիստոսը վճարեց մեր մեղքերի համար և մեզ ներում առաջարկեց, եթե ընդունենք իր շնորհքի պարգևը: Մենք ազատվել ենք մեր մեղքերի գերությունից, նորոգվել ենք Նրա հավիտենական սիրով և հնարավորություն ենք ստացել փոխելու մեր կյանքի ընթացքը:

Աղոթք - Երկնավոր Հայր, երբեմն բնական եմ համարում, որ փոխել ես իմ կյանքը: Շնորհակալ եմ, որ ինձ բնավ չես մոռացել: Ամեն:

Եթե Ասված հեղափոխել է կյանքի, դասն՝ սեպտեմբերի փրկության այդ հրաճի մասին դասնելու ուրիշներին:

Քո ողորմությամբ կշտացրու՝ մեզ առավոտից, որ ցնծանք և ուրախ լինենք մեր կյանքի բոլոր օրերին: (Մաղմ. 90.14)

ԱՍՏՈՆ ՕՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՍԱՐ

Հոգեբան Մեդ Ջեյի կարծիքով՝ մարդն իր ապագայի մասին կամտածում է այնպես, ինչպես բոլորովին անծանոթ մարդու մասին կամտածի: Հավանաբար, դա պայմանավորված է «կարեկցուլթյան բացակայությամբ»: Հնարավոր է, որ իրոք դժվար է կարեկցել ու հոգ տանել մարդկանց մասին, որոնց անձամբ չես ճանաչում: Ուստի Ջեյն իր աշխատանքով փորձում է օգնել երիտասարդներին, որ կարողանան պատկերացնել իրենց ապագան և քայլեր անել հոգ տանելու իրենց իսկ մասին: Դա նշանակում է ծրագրեր մշակել, թե ով են լինելու իրենք, երբ ճանապարհ հարթեն նրանց համար, ովքեր հասնեն իրենց երազանքներին ու շարունակեն զարգանալ:

Մաղմոս 90-ում մեզ հրավիրում են տեսնելու ոչ միայն մեր ներկա կյանքը, այլև խնդրելու Աստուծուց, որ օգնի «հաշվելու մեր օրերը» (Հմ.12): Հիշելով, որ երկրի վրա մեր ունեցած ժամանակը սահմանափակ է, կարող ենք հուսահատության պահերին ապավինել և վստահել Աստուծուն: Մենք Նրանից պետք է սովորենք, թե ինչպես գտնել բավարարվածություն և ուրախություն ոչ միայն հիմա, այլև «մեր կյանքի բոլոր օրերին» (Հմ.14): Նրանից ենք սովորելու մտածել ոչ միայն մեր, այլև ապագա սերունդների մասին (Հմ.16): Նրանից ենք սովորելու մեզ տրված կյանքի ընթացքում ծառայել իրեն, երբ Նա հաստատում է մեր սրտի ու ձեռքի գործերը (Հմ.17):

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ կյանքի պարգևի համար:

Օգնիր փայփայել այն, ինչ տվել ես: Եվ երբ վերջանան իմ կյանքի օրերը երկրի վրա, Քեզ հետ կքայլեմ հավիտյան: Ամեն:

Մեր կյանքի ավելի մեծ ղափարկներն ունենալով մեր աչքի առաջ՝ աշխատենք մեր աղագա կյանքի համար, որքեղ կարելի է վայելել Աստուծու առաջ օրհնությունները:

Արտից դուրս են գալիս չար մտքեր, սպանություններ, շնություններ, պոռնկություններ, գողություններ, սուտ վկայություններ, հայիություններ (Մատթ. 15. 19)

ՄՐՏԻՑ ԲԽԱԾ

«Նոյյան տապան» կոչված փրկարարական առաքելությունը կենդանիների սիրահարների համար կարող է զվարճալի մի զբաղմունք էր, բայց կենդանիների պաշտպանությունը զբաղվող Նասո ընկերակցության համար մղձավանջ էր: Մի տնից լսվող աղմուկի և գարշահոտության առիթով բողոքներ լսելուց հետո աշխատողները մտան Լոնգ Այլնդի այդ տունը և գտան ու փրկեցին ավելի քան 400 կենդանիների: Մենք հարյուրավոր կենդանիներ չենք պահում կեղտոտ պայմաններում, բայց Հիսուսն ասել է, որ մենք էլ կարող ենք ունենալ չար ու մեղավոր մտքեր, գործողություններ, որոնք հարկավոր է բացահայտել ու հեռացնել: Իր աշակերտներին բացատրելով, թե ինչն է մարդուն մաքուր ու անմաքուր դարձնողը, Հիսուսն ասում է, որ դա ոչ ձեռքերն են, ոչ էլ այն, ինչը մտնում է բերանն ու որովայնը, այլ մարդուն պղծողը չար սիրտն է (Մատթ.15. 17-19): Մեր սրտերից ելնող գարշահոտը ի վերջո դուրս է գալիս մեր կյանքից: Ապա Հիսուսը թվարկում է չար մտքերի ու արարքների օրինակներ, որոնք դուրս են ելնում «սրտից» (Հմ.19): Ոչ մի արտաքին կրոնական գործողություն ու ծես չի կարող դրանք մաքրել: Մեր սրտերը միայն Աստված կարող է փոխել: Մենք կարող ենք կիրառել Հիսուսի ասած ներսից բխող բարոյականությունը՝ թույլ տալով, որ Նա մտնի մեր սրտի մուսյուլթյան մեջ և հեռացնի գարշահոտության աղբյուրը: Երբ Քրիստոսը բացահայտում է այն, ինչ դուրս է գալիս մեր սրտից, օգնում է, որ մեր խոսքերն ու գործերը համապատասխանեն իր ցանկություններին: Այդ ժամանակ մեր կյանքի բույրերը իր համար հաճելի են դառնում:

Աղոթք - Սիրո՛ղ Չայր, սիրտս չար է, և միայն Դու կարող ես լիովին հեռացնել նրա միջից չարը: Ամեն:

Ասծո օգնությամբ ֆննեմ մեր սրտերը, որդեսզի Տեր Չիսուսի ցնորհիվ ամեն չար խորհուրդ այնտեղից հանեմ:

ՍԵՆՔ Աստուծոյ համար Քրիստոսի անուշ հոտն ենք: (Բ.Կորնթ. 2.15)

ՍՈՒՐՃԻ ՀԱՏԻԿՆԵՐԻ ԱՄԱՆԸ

Ես սուրճ չեմ խմում, բայց դրա բույրը ինձ դուր է գալիս: Երբ մեր դեռահաս դուստրը՝ Մելիսան, իր ննջասենյակին էր դասավորում, սուրճի հատիկներով մի աման դրեց այնտեղ, որպէսզի ջերմ ու հաճելի բույր լինի միշտ:

Հետո Մելիսան ավտովթարի պատճառով 17 տարեկանում գոհվեց: Դրանից քսան տարի անց էլ մենք այդ ամանը պահում ենք, որովհետև այն մեզ քաղցր հուշեր է պարգևում մեր դասեր մասին:

Սուրբ Գիրքը նույնպէս որպէս հիշեցում է օգտագործում բուրմունքները: «Երգ երգոց»-ում դրանք ներկայացված են որպէս կնոջ ու տղամարդու միջև եղած սիրո խորհրդանիշ (տե՛ս 1,3,4,11,16): Ովսեեի գրքում ասվում է, որ Աստուծոյ ներումը Իսրայելի ժողովրդի համար «Լիբանանի պէս պիտի լինի» (Ովսեե 14.6): Իսկ երբ Մարիամը օծում էր Հիսուսի ոտքերը, «տունը լցվեց յուղի բուրմունքով» (Հովհ. 12.3)՝ ցույց տալով Հիսուսի մահը (տե՛ս Հմ.7):

Օծանելիքի գաղափարը կարող է մեզ օգնել, որ ուշադիր լինենք մեր հավատքի վկայութեանը մեր շրջապատում: Պողոսը դա այսպէս է բացատրում. «Մենք Աստուծոյ համար Քրիստոսի անուշ հոտն ենք» (Բ.Կորնթ. 2.15):

Այնպէս, ինչպէս սուրճի հատիկների անուշ բույրն է ինձ հիշեցնում Մելիսայի մասին, թող մեր կյանքում էլ առաջանա Հիսուսի ու Նրա սիրո բույրը, որ մյուսներին հիշեցնի Նրա կյանքի մասին:

Աղոթք - Սիրելի՛ երկնավոր Հայր, օգնի՛ր ինձ փոխանցել կյանքի անուշ բույրը, որպէսզի ուրիշներն իմանան, որ ես Քեզ եմ ներկայացնում: Ամեն:

Եթե այսօր կարողանանք Քրիստոսի անուշ բույրը լինել, շատերը կգան դեռի նա:

Տերը սպասում է, որ ձեզ գթա: (Ես. 30. 18)

Ո՞ՒՐ ԴԱՌՆԱԼ

Միջնակարգ դպրոցում բոլորը հիանում էին Ջեկի մարզական վարպետությանը: Նա երջանիկ էր, երբ բարդ վարժություններ էր կատարում՝ մի ձեռքով բռնած չմուշկի տախտակը, մյուսով պահելով հավասարակշռությունը:

Երբ սկսեց հաճախել տեղի եկեղեցի, Ջեկը որոշեց հետևել Հիսուսին: Մինչ այդ նա ընտանեկան դժվարություններ ուներ, որոնց պատճառով նաև թմրանյութեր էր գործածում: Դարձից որոշ ժամանակ անց թվում էր, թե ամեն ինչ կարգին է: Բայց տարիներ հետո նա կրկին սկսեց թմրանյութեր գործածել և չստանալով պատշաճ բուժօգնություն՝ մահացավ թմրանյութի գերդոզավորումից: Դժվարությունների հանդիպելիս հեշտ է հին սովորություններին վերադառնալը: Երբ Իսրայելի ժողովուրդն զգաց ասորիների հարձակման ուժն ու ճնշումը, օգնության համար դիմեց իր նախկին ստրկատերերին՝ եգիպտացիներին (Ես. 30.1-5): Աստված զգուշացրեց, որ փարավոնի պաշտպանությունը դիմելը կործանարար կարող է լինել, բայց նաև շարունակեց հոգ տանել նրա համար՝ թեև նա սխալ ընտրություն էր կատարել: Եսայի մարգարեն բարձրաձայնում է Աստծո սիրտը. «Տերը սպասում է, որ ձեզ իր հաճությունը ցույց տա, և վեր է կենալու, որ ձեզ գթա» (Հմ.18):

Սա Աստծո վերաբերմունքն է մեր հանդեպ, նույնիսկ երբ մենք ուրիշ տեղ ենք ընտրում մեր ցավը թեթևացնելու համար: Որոշ նյութեր և գործողություններ կփորձեն մեզ արագ բուժման ուղիներ առաջարկել, բայց Աստված իրական ապաքինում կապահովի, երբ մենք քայլենք իր հետ:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, խնդրում եմ ազատի՛ր ինձ մեղավոր կյանքից: Օգնի՛ր ինձ, որ դիմեմ Քեզ, երբ փորձում եմ հանգիստ գտնել այլ բաների մեջ: Ամեն:

Ձախորդության ժամանակ կարևոր է ցեսնել Ասծո ցնորհք, որովհետև նա միշտ հավասարիմ է և մեր մնայուն օգնականը:
Ուսի դառնանք իրեն:



Նյութերի ցանկ

Աղոթք	Հոււ 5, օգ. 12, 26
Ամուսնութիւն.....	օգ.15
Անարդարութիւն.....	սեպտ.23
Աշակերտութիւն.....	օգ.2
Ապրել ուրիշ հավատացյալների հետ.....	Հոււ. 11.24,օգ.17
Աստվածաշնչի սերտողութիւն.....	Հոււ. 12,20,օգ.11. սեպտ.4
Աստծուն սպասել.....	սեպտ. 16
Աստծո սերն ու հոգածութիւնը..	Հոււ. 3,21,29, օգ.13,18,28, սեպտ.7,18, 24
Աստծուն վստահել.....	Հոււ. 17,21, օգ. 7,21,24,25,28, սեպտ.5,12,17
Ավետարանչութիւն.....	Հոււ.13, օգ.20,29, սեպ. 13
Գոհունակութիւն.....	Հոււ.27
Դաստիարակութիւն.....	օգ.2
Դատել.....	Հոււ.3,19
Դրախտ.....	սեպտ.9,23
Եկեղեցական կյանք.....	Հոււ. 12, սեպտ.1, 8,15, 22
Ընտանեկան հարաբերութիւններ.....	օգ. 1,15,18,22, սեպտ.25
Իմաստնութիւն.....	օգ.26
Խորհրդատվութիւն.....	Հոււ. 19, օգ. 2,9, 23
Ծառայութիւն.....	Հոււ. 2,10,11, օգ. 5,սեպտ.7,27
Կյանքի պայքարներ.....	սեպտ.17
Համբերութիւն.....	Հոււ.7
Հավատք.....	Հոււ.14,31, օգ. 10,24
Հարաբերութիւններ.....	սեպտ.1,14
Հիսուս Փրկիչ.....	Հոււ.30
Հնազանդութիւն.....	Հոււ. 17, օգ.23



Հոգևոր աճ և վերափոխում.....	Հուլ. 5, 12, 23, օգ. 6,7,15 սեպտ. 26, 28
Հոգևոր պարզեցում.....	Հուլ.9,16,23
Հոգևոր պտուղներ.....	սեպտ 6
Հույս.....	օգ.12,19, սեպտ.9.23
Մահ.....	սեպտ.9
Մեղք.....	Հուլ.18,25,26
Մեղքերի ներում.....	Հուլ.18,22, օգ.18
Մկրտութիւն.....	Հուլ.15
Շնորհակալութիւն.....	օգ.22
Որոշումներ կատարել.....	սեպտ.20
Պաշտամունք.....	Հուլ.28
Սեր այլոց հանդեպ.....	Հուլ .4,11, օգ.1,5,13, սեպտ. 3,11,18
Ստեղծագործական հոգատարութիւն.....	օգ.4
Ստեղծագործութիւն.....	սեպտ. 19
Վավերականութիւն.....	օգ. 2,9,16,23
Տանջանք և ողբերգութիւն.....	օգ. 12,14,31
Տերունական ընթրիք.....	Հուլ.1,8
Քաջակերութիւն.....	Հուլ. 6, օգ. 1,19
Քրիստոնեական տոնակատարութիւններ.....	Հուլ. 1,8,15,22
Քրիստոս՝ կյանք և ուսուցումներ.....	սեպտ.10
Քրիստոս՝ վերադարձ.....	օգ.3, սեպտ. 2,16,23
Քրիստոսի նման ապրել.....	Հուլ. 17,31, օգ.30, սեպտ. 2,15,25,29
Քրիստոսի համար ապրել.....	օգ. 10
Քրիստոսի հետ միաբան.....	օգ. 27
Փրկութիւն.....	Հուլ. 26, օգ.16, սեպտ. 25,26

Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռախոս՝ +374 10 54 35 76; +374 10 54 35 78

Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am

Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7^ա

Հեռ. +374 47 945 275

Անուն, ազգանուն

Հասցե.....

.....

Հեռախոս.....
